

5  
411

# ՔՈՒՐԱՆ

ՀԱՆԴԵՐՉ

ՄՈՒՋԱՄՄԷՏԻ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ



Սափարիի եւ Քաղիմիսիի Ճրամա. բարգմանութիւններէն  
Հայերէնի վերածեց  
ԼՍԻՈՆ ԼՍՐԵՆՑ



ԵՐԿՐՈՐԴ ՇԱՏՈՐ

Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ

1911

5  
411

ԳԼՈՒԽ Ե.

Ս Ե Ղ Ա Ն Ը <sup>(1)</sup>

Տրուած՝ Մէսիսնէի մէջ . — 120 տուն

Յանուն ողորմած եւ անյիշաչար Աստուծոյ .

1. Ո՛վ հաւատացեալներ , ձեր յանձնառութիւնները յարգեցէք . ձեր հօտերը կազմող կենդանիներուն միտովը անանցէք <sup>(2)</sup> բայց մի՛ ուտէք այն կենդանիները , որոնք արգիլուած են (Քուրանի յետագայ տուններուն մէջ) , մի՛ ուտէք նաեւ այն կենդանիները զորս իբր որս սպաննել արգիլուած է ձեզի երբ ուխտագնացութեան զգեստը կը կրէք վրանիդ . Աստուած ըստ հաճոյս հրամաններ կուտայ :

2. Ո՛վ հաւատացեալներ , Աստուծոյ նուիրուած վայրերը մի՛ սրբապղծէք , ո՛չ ալ հարէմի (նուիրական) ամիր . յարգեցէք մատաղցու կենդանիները եւ անոնց (վըրայէն կախուած) զարդերը <sup>(3)</sup> , յարգեցէ՛ք զանոնք , որ ուխտի կ'երթան եւ կը ջանան բաժին մը առնել Աստուծոյ առատաձեռնութենէն ու բարեբարութենէն :

(1) Այս սիւրէին (Գլուխ) վերնագիրը ծագում առած է այն հրաշքէն զոր Յիսուս գործեց , առաքեալներուն խնդրանքով երկինքէն կերակուրներով լեցուն սեղան մը իջեցնելով Այս Գլուխը կ'անուանուի նաեւ Յանձնառութիւն , բառ՝ որ առաջին տունին առաջին տողին վրայ կը գտնուի : (Գագիմիրքի)

(2) Արջառական ցեղին կենդանիները , ուղտերը եւ ոչխարները :

(3) Մուհամմէտի օրով Մէքքէ ուխտի տարուած մաքիներու վզէն ծաղկեպսակներ կը կախէին . այս սովորութիւնը ցարդ պահուած է եւ ի գործ կը դրուի մանկուհրաբար Գուրգան Պայրամի առթիւ :

Քուրան



440-83

3. Երբ ուխտագնացութիւնը վերջացնէք <sup>(1)</sup>, կրնաք որտորգուծեան սկսիլ . տաճարին մուտքը ձեզի գէմ փակողներուն համար մի' անուցանէք այնպիսի ատելութիւն մը՝ որ ամբարիշտ արարքներու մէջ իյնաք, զիրար մղեցէք արգար և բարեպաշտական գործեր կատարելու . զգուշացէք ոճիրի մէջ իյնալէ . երկնչեցէք Տիրոջմէն (որովհետեւ) իր պատիժները անաւոր են :

4. Ձեզի արգիլուած է ուտել մեռած կենդանիները, արիւն, խոզի միս, խեղդուած կենդանիները կամ արկածով ու եղջիւրի հարուածով սպաննուած կենդանիները, կամ անոնք որ գաղանի մը որսը եղած են . ասարբեր խնդիր է կիթէ զանոնք մաքրագործէք արիւն առնելով : Արգիլուած է նաեւ՝ կուռքերու սեղանին առջեւ զոհուած կենդանիները և բոլոր անոնք զորս սպաննած ատեննիդ Աստուծոյ անունը չէք տար <sup>(2)</sup> : Ձեզի արգիլուած է նաև առնել նետերու միջոցաւ ձեր բաժինները <sup>(3)</sup> . վաճ այն անհաւատներուն որոնք ձեր կրօնքը կը լքեն . անոնցմէ մի' վախնաք, այլ վախցէք ինձմէ :

(1) Երբ անուրը վիճակի մէջ մտնէք, այսինքն, երբ սյուէս չէք հագած ինքամբ, այն զգեստը զոր կը հագնին Մէքքէ գացած ատեննին :

(2) Արաքները որսի կենդանի մը սպաննած ատեննին սովոր էին իրենց աստուածներուն անունը տալ . Մուհամմէտ կը հրամայէ այդպիսի պարագայի մը մէջ Աստուծոյ անունը միայն տալ պիտմիլլահ բանաձեւով :

(3) Զանոնք ձեր մէջ մի' բաժնէք նետերուն խորհուրդ հարցնելով, որովհետեւ այդ սովորութիւնը ամբարշտութիւն մըն է այսօր : Կուսպաշտ Արաքները սովորութիւն ունէին սպաննուած ուղտ մը իրենց մէջ բաժնել կենդանիին այս կամ այն մասը վիճակաւ քաշելով . այս վիճակը կը ձգուէր նետերու միջոցաւ և որոնք, թուով եօթը՝ պահուած են Մէքքէի տաճարին մէջ :

5. Այսօր ձեր կրօնքին վրայ կնիք մը դրի . իմ ջրնորհներս լրացուցի . ինձի հաճոյ թուեցաւ Իսլամութիւնը տալ ձեզի . ան որ անթուփեմէ մղուած և առանց չարիք գործելու նպատակ ունենալու ոտնակոխ ընէ մեր պատուիրանները <sup>(1)</sup> թողութիւն պիտի գտնէ, որովհետև Աստուած ներողամիտ է :

6. Քեզի պիտի հարցնեն թէ ի՞նչ բան թոյլատրուած է իրենց պատասխանէ . բոլոր աղէկ բաները թոյլատրուած են : Որսի կենդանիներուն միսը զոր ցիցը կ'անցընէք Աստուծմէ ձեր տոացած ծանօթութեանց համաձայն, թոյլատրուած են ձեզ . կերէք զանոնք Աստուծոյ անունը յիշելով անոնց վրայ : Վախցէք Աստուծմէ, որովհետև անիկա իր վճիռներուն մէջ ձեզ գրիտ է :

7. Այսօր ձեր առջև բացուեցաւ բոլոր լաւ բաներուն աղբիւրը . Հրէաներուն անունը օրէնքով արգիլուած չէ ձեզի և ձեր անունդն ալ անոնց թոյլատրուած է . դուք կրնաք կնութեան առնել հաւատացեալներուն և Հրէաներուն պարկեշտ աղջիկները, պայմանաւ որ անոնց դրամով տար <sup>(2)</sup> : Անոնց հետ ցոփութեամբ մի' ապրիք և զանոնք իրր հարձ մի' գործածէք : Ով որ իր հաւատքը ուրանայ, իր բարի գործերուն վարձքը պիտի կորսնցնէ և հանդերձեալ աշխարհի մէջ թշուատ պիտի ըլլայ :

8. Ո՛վ հաւատացեալներ, աղօթքի սկսելէ առաջ լուսցէք զէմքերնիդ և ձեռքերնիդ մինչև արմուկը . զուլանիդ և ոտքերնիդ մինչև կրուկը սրբեցէք :

(1) Արգիլուած անունդի մասին :

(2) Մուհամմէտ այս կերպով կ'արտօնէ խառն ամուսնութիւնները ընդ մէջ Իսլամ սյրերու և Քրիստոնեայ ու Հրէայ կիներու . միայն կուսպաշտ կիներուն համար արգելք կը դնէ :

9. Ձեր կիններուն մերձենալէ վերջ մաքրուեցէ՛ք. երբ ճամբորդութեան մէջ էք կաս հիւանդ, ու ձեր բնական պէտքերը գոհացուցած էք և կամ կնոջ մը մերձեցած էք, դէմքերնիդ և ձեռքերնիդ նուրբ և մաքուր աւազով չփեցէք ջուր չեղած պարագային: Աստուած չուզեր որ իր լուծը ծանր գտնէք, այլ կը փափաքի զձեզ մաքրագործել և իր շնորհները լրման հասցնել որպէս զի երախտապարտ ըլլաք իրեն:

10. Յիշեցէ՛ք Տիրոջը բարիքները, պահեցէք այն դաշինքը զոր կնքեց ձեզի հետ երբ արտասանեցիք սա բառերը. մենք լսեցինք զքեզ և հնազանդեցանք: Երկընչեցէք Աստուծոյ (որովհետև) անիկա սրտերու խորը կը չափէ:

11. Ո՛վ հաւատացեալներ, ճշմարիտ (և հաստատ) եղէք այն վկայութիւններուն մէջ որ պիտի տաք Աստուծոյ առջև. առեւտրութիւնը թող զձեզ չմղէ բնաւ անարդար գործ մը ընելու. (արդարակորով եղէք). արդարութիւնը բարեպաշտութեան քոյրն է. երկնչեցէք Աստուծոյ որովհետև ան տեղեակ է ձեր գործերուն:

12. Աստուած իր գութը և շքեղ վարձատրութիւն մը խոստացած է անոնց, որոնք հաւատացեալ ըլլալու արժանիքին կը միացնեն բարեբարութիւնը:

13. Այն անհաւատները որոնք մեր կրօնքը սուտ կը հանեն, գժոխքին զոհերը պիտի ըլլան:

14. Ո՛վ հաւատացեալներ, միաքերնիդ բերէ՛ք Աստուծոյ բարիքները. այն ատեն երբ ձեր թշնամիները (1) կը մտածէին իրենց զէնքերը ձեզի դէմ դարձնել, Աստուած կասեցուց անոնց բազուկը. երկնչեցէ՛ք իրմէ. ճշմարիտ հաւատացեալները թող միայն իր վրայ հաւատք դնեն:

(1) « Գանի մը մարդիկ » (Քաղիմիրքի)

15. Աստուած ընդունեց Իսրայէլի զաւակներուն ուխտը. անոնց տուաւ տաներկու պետեր և ըսաւ. ձեզի հետ պիտի ըլլամ. եթէ (անթերի կերպով) կատարէք ձեր ազօթքը և ողորմութիւն տաք, իմ առաքեալներու հաւատաք, եթէ անոնց օգնէք և ձեր հարստութիւնը գործածէք նուիրական կրօնքին պաշտպանութեանը համար, պիտի ներեմ ձեր մեղքերուն և զձեզ պիտի մոցնեմ զետերով ոռոգուած պարտէզներուն մէջ: Ան որ այս ազդարարութիւնէն վերջ մերժէ հաւատալ, մոլորութեան ճամբէն պիտի ընթանայ:

16. (Բայց որովհետև) անոնք իրենց ուխտը չի պահեցին, զանոնք անիծեցինք. անոնց սրտերը քարացուցինք: Նուիրական մատեաններուն խօսքերը կը խեղաթիւրեն և մէկ մասը կը ծածկեն: Դուն չպիտի դադրիս երևան հանելէ անոնց խարդախութիւնը. գրեթէ ամենքն ալ յանցաւոր են այս յանցանքով, բայց զժամ իրենց վրայ և ներէ՛, որովհետև Աստուած կը սիրէ ազնուութեամբ վարուողները:

17. Մենք ընդունեցինք (նաև) Քրիստոնեաներուն դաշինքը, բայց ասոնք ալ մտքերնուն հանեցին մեր պատուիրաններուն մէկ մասը (1): Մենք անոնց մէջ սերմանեցինք առեւտրութիւն և անհամաձայնութիւն, որոնք պիտի տեսնեն մինչև յարութեան օրը: Աստուած անոնց պիտի ցոյց տայ ըրածնին:

18. Ո՛վ գուք, որ Օրէնքի Գիրքը ընդունեցիք, մեր Մարգարէն ձեզի ցոյց տուաւ բազմաթիւ հատուածներ

(1) Ամենէն ծանր դիտողութիւնը զոր Մուհամմէտ կ'ուղէ Քրիստոնեաներուն, սա է թէ, անոնք Սուրբ Գրոց մէջէն զանազան մասեր փոխած են, որպէս զի կարենան ջնջել Մուհամմէտի գալուստին վերաբերեալ ակնարկութիւնները:

զորս կը ծածկէիք և ուրիշ հատուածներու վրայէն ալ ներողամտութեամբ անցաւ: Երկիրքէն ձեր վրայ իջաւ լոյսը Քուրանին հետ: Աստուած անով փրկութեան ճամբուն մէջ պիտի առաջնորդէ զանոնք որ իր կամքին կը հպատակին: Աղջամուղջէն լոյսին մէջ պիտի հանէ զանոնք ու չխտակ ճամբան պիտի առաջնորդէ:

19. Անոնք որ կ'ըսեն թէ Քրիստոս, Մարիամի որդին, Աստուած է, անհաւատներ են: Պատասխանէ անոնց. ո՞վ կրնայ կասեցնել բազուկը Ամենակարողին, եթէ ան ուզէր բնաջինջ ընել Մարիամի որդի Յիսուսը, անոր մայրը և աշխարհի բոլոր էակները:

20. Երկիրքի, երկրի և մթնոլորտի անհունութեան վեհապետը Աստուած է. անիկա ըստ կամս կ'ստեղծագործէ ոչինչէն, որովհետև իր զօրութիւնը անսահման է:

21. Հրէաները և Քրիստոնեաները կ'ըսեն. մենք Աստուծոյ սիրական զաւակներն ենք: Պատասխանէ անոնց. ուրեմն ինչո՞ւ կը պատժէ զձեզ ձեր ոճիրներուն համար. դուք միայն մէկ մասն էք այն մարդոց զոր ստեղծեց. ըստ կամս կը ներէ անիկա կամ կը պատժէ. իրեն կը պատկանին երկիրք, երկիր և ինչ որ կայ անոնց միջեւ. անիկա վախճանն է որուն պիտի յանդի ամէն բան:

22. Ո՞վ դուք, որ նուիրական մատեանները ընդունեցիք, մեր Մարգարէն պիտի բացատրէ թէ ինչո՞ւ առաքեալները դադրեցան, որպէսզի այլևս չըսէք. երկիրքէն (Աստուծոյ սպառնալիքները և խոստումները աւետոյ) առաքեալ չի գար այլևս մեզի: Ահաւասիկ ձեր մէջն է այդ առաքելը, այդ աւետոյը. և Աստուած ամէն բանի համար անսահման զօրութիւն ունի:

23. Երբ Մովսէս Իսրայէլացիներուն ըսաւ՝ միտքերնիդ բերէք այն բարիքները զորս Աստուծոյն ընդունեցիք,

անիկա ձեզի մարգարէներ զրկեց, թագաւորներ տուաւ և ուրիշ ոչ մէկ ազգի չը շնորհած բարիքները ձեզի չընորհեց,

24. Մտէ՛ք (ո՞վ իմ ժողովուրդս) այն նուիրական երկրին մէջ զոր Աստուած ձեզ սահմանած է, ետ մի՛ դառնաք, դուցէ կորստեան մատնուիք,

25. Իսրայէլացիները պատասխանեցին. այս երկրին մէջ հսկայ մարդիկ կը բնակին, մենք հոն չը պիտի մրտնենք այնքան ատեն որ անոնք դուրս չելին. եթէ ելին, մենք պիտի գրաւենք զայն:

26. Քաղաքին դրանը առջեւ ներկայացէ՛ք, ըսին երկու մարդիկ, որոնք Տիրոջմէն կ'երկնչէին և անոր չընորհներովը նպատաւորուած էին. ներս մտնէք թէ չէ, յալթութիւնը պիտի տանիք: Եթէ հաւատացեալ էք, Աստուծոյ վրայ դրէք ձեր վստահութիւնը:

27. Ո՞վ Մովսէս, ըսաւ ժողովուրդը, մենք քաղաքին դրանը առջեւ չպիտի ներկայանանք<sup>(1)</sup> այնքան ատեն որ հսկաները բնակին հոն. դուն գնա քու Աստուծոյդ հետ և (միայն) կուռեցէք: Մենք հոս պիտի կենանք:

28. Տէր, գոչեց Մովսէս, ետ եղբորս հետ առանձին եմ<sup>(2)</sup>. դատէ՛ զմեզ և այս անհնազանդ ժողովուրդը:

29. (Այն ատեն) Աստուած սա բառերը արտասանեց. քառասուն տարի այս երկրին մուտքը արգելուած պիտի մնայ իրենց. աշխարհի վրայ<sup>(3)</sup> պիտի թափառին. (խակ

(1) « Քաղաքէն ներս չպիտի մտնենք » (Քաղիմիրքի)

(2) « Ես միայն իմ անձիս և եղբորս վրայ էլշահնութիւն ունիմ » (Քաղիմիրքի)

(3) « Անապատին մէջ » (Քաղիմիրքի)

զո՛ւն) դադարէ՛ հոգ ընելէ այս ամբարիշտ ժողովուրդին համար :

30. Պատմէ՛ անոնց՝ կէտ առ կէտ, Ազամի որդւոց պատմութիւնը որոնք ընծայ մատուցին <sup>(1)</sup> . մէկուէն ընծան ընդունուեցաւ , իսկ միւսինը՝ մերժուեցաւ . մերժուողը ըսաւ իր եղբորը . զքեզ մեռցնեմ պիտի իսկ անմեղը պատասխանեց . Աստուած երկիւղած մարդոց զո՛ր միայն կ'ընդունի .

31. Եթէ զուն զիս սպաննելու համար ձեռք բարձրացնես , վրէժխնդիր պիտի չըլլամ , որովհետեւ կը վախնամ Աստուծո՛ւն , տիեզերքի վեհագետէն :

32. (Ես կը նախընտրեմ որ) զուն առանձինն վերադառնաս իր քով , և քու մեղքերովդ բեռնաւորուած , և ընակիս գեհնէին մէջ որ նենգամիտներուն յատկացուած է :

33. Հակառակ այս սպառնալիքներուն , արիւնի ծարաւը աւելի բարձր խօսեցաւ նախանձտոխն սրտին մէջ . իր եղբայրը սպաննեց և աստուածամերժներուն կարգը դառուեցաւ :

34. Աստուած ագռաւ մը զրկեց որ հողը փորելով կայէնին ցոյց տուաւ թէ ինչպէ՛ս պէտք է ծածկէ իր եղբոր դիակը . մարդասպանը գոչեց . ի՛նչ ողորմելի մէկն եմ , չե՛մ կրնար սա ագռաւին պէս հողը փորել և եղբորս դիակը ծածկել <sup>(2)</sup> : Ու կայէն սկսաւ զզջալ :

35. Ահա՛ ասոր համար է որ Խարայէլի զաւակներուն տուխնք այս պատուէրը . ո՛վ որ մարդ մը սպաննէ , առանց որ սպանեալը բռնութիւն մը բանեցուցած ըլլայ (կամ՝ երկրին մէջ խոտովութիւն յառաջ բերած) ամբողջ

(1) Կ'ակնարկէ Կայէն և Աբէլի պատմութեան . (Քաղիմիրոբի)

(2) Արար մեկնիչները կ'ըսեն թէ Կայէնին երեւցող ագռաւը ուրիշ ագռաւ մը մեռցուցած ըլլալով զայն թաղելու վրայ էր :

մարդկային ազգին սպաննիչը պիտի նկատուի . իսկ ով որ մարդու մը կեանքը ազատէ , պիտի վարձատրուի այնպէս՝ ինչպէս եթէ ամբողջ մարդկային ազգին կեանքը ազատած ըլլար :

36. Մեր առաքեալները անոնց մէջ երեւացին (ակնբերեւ նշաններով) բայց հրաշքներ գործելէն ետքն ալ , մարդոց մեծագոյն մասը ամբարշտութեան մէջ ինկաւ :

37. Աստուծոյ և իր Մարգարէին դէմ մարտնչողները և աշխարհի վրայ ապականութիւնը տարածողները մանուամբ պիտի պատժուին , կամ խաչին վրայ պիտի չարչարուին , անոնց ձեռքերը և ոտքերը փոխն ի փոխ կտրէք պիտի . իրենց տունէն տեղէն վանէք պիտի <sup>(1)</sup> . ահա այս նախատինքներուն պիտի ենթարկուին այս աշխարհի մէջ , իսկ հանդերձեալին մէջ ալ չարչարանքը իրենց բաժին պիտի իյնայ :

38. Բայց անոնք՝ որ զզջում կը յայտնեն , դիրենք ձեր իշխանութեան տակ առնելնէդ առաջ , Աստուծոյ գութին և ներողամտութեան պիտի արժանանան :

39. Ո՛վ հաւատացեալներ , երկնչեցէ՛ք Աստուծո՛ւն և ջանացէք անոր քով համնիլ . կրօնքի համար մաքրուեցէք ու երջանիկ պիտի ըլլաք :

40. Եթէ՛ նոյն իսկ անհաւատները ունենային կրկինն այն հարստութեան որ աշխարհ կը պարունակէ , ու զայն տային վերջին դատաստանի օրը չարչարանքէ զերծ մնա-

(1) Ատենօք , 4 ոսկի գու մար մը կամ աւելին գողցողին ձեռքը կը կտրէին . եթէ երկրորդ անգամ նոյն անձը գողութիւն մը ընէր , ձախ ոտքը կը կտրէին , յետոյ՝ աջ ձեռքը , վերջապէս՝ աջ ոտքը (ձէլայէտտինս) երբ մարդասպան մը թէ՛ գողութիւն ընէր և թէ՛ ոճիր գործէր , խաչը կը հանէին : Այս օրէնքը գործադրութեան չեն դներ թուրքերը՝ կրսէ Սալաբի .

լու համար, դարձեալ պիտի մերժուէին. իրենց սպասող չարչարանքները զարհուրելի են:

41. Ի զո՛ւր պիտի մաքառին բոցերէն դուրս ելլել, բայց հոն թաղուած պիտի մնան ու կրած չարչարանքնին յաւիտենապէս պիտի տեսէ:

42. Գողերուն ձեռքերը կտրեցէք, այր ըլլան թէ կին, ի պատիժ (իրենց ձեռքով կատարած գործին.) այս պատիժը Աստուած անօրինեց. անիկա հզօր է և իմաստուն:

43. Ով որ զղջայ (իր գործած անօրէնութիւններուն վրայ) և ինքզինք ուղղէ, Աստուծոյ թողութիւն պիտի ստանայ. անյիշատար է անիկա:

44. Չե՞ս գիտեր դուն թէ Աստուած երկինքի ու երկրի վեհապետն է, թէ ըստ կամս կրներէ ու կը պատժէ, որովհետև իր զօրութիւնը անսահման է:

45. Ո՛վ Մարգարէ, մի՛ տրտմիր ի տես անոնց որոնք (իրարու նախանձելով) դէպ ի անհաւատութիւն կ'երթան, և (ոչ ալ ի տես անոնց որ) կ'ըսեն՝ կը հաւատանք. մինչդեռ, սիրտերնին կը հերքէ իրենց բերնէն ելածը. մի՛ տրտմիր նաև ի տես այն Հրէաներուն որոնք լայն կը բանան իրենց ախանջները սուտին (և ուրիշներու խօսքին) առջև, ու մարդկային յարգանքի համար միայն կուզան լսել քեզ (1): Անոնք՝ որ դեռ բնաւ չեն լրսած գրեզ, Հնգամատեանին բնագիրը կը խեղաթիւրեն և կ'ըսեն. եթէ Գիրքը այս ձեւով կարդան ձեզի՝ ընդօրցէք, եթէ ոչ՝ զգոյշ կեցէք: Աստուծոյ մոլորեցնել ուզածը ո՛վ կրնայ պահել շիտակ ճամբուն մէջ: Անոնք՝ որոնց սիրտը չի մաքրագործեր Աստուած, այս աշխարհի մէջ

(1) « Ու երբէք չեն գար քու խօսքերդ լսելու: »

նախատինքներով պիտի բեռնաւորուին և հանդերձեալին մէջ ալ զարհուրելի պատիժներու պիտի ենթարկուին:

46. Շատ կը սիրեն սուտ խօսիլ. արգիլուած կերակուրներով կը սնանին: Եթէ գրեզ իրաւարար կարգեն, անոնց մէջ վճիռ մը տուր կամ փախի՛ր անոնցմէ. երբոր հետու ըլլաս, չարութիւննին չպիտի կրնայ վնասել քեզի. բայց եթէ ստանձնես ձեռքդ առնել կշիռը, արդարութեամբ դատէ զանոնք. Աստուած կը սիրէ արդարաւանները:

47. (Բայց) ինչպէ՞ս պիտի ընդունին գրեզ իրը իրաւարար. իրենց ձեռքին մէջ ունին Հնգամատեանը որ կը պարունակէ Աստուծոյ պատուիրանները, բայց դարձեալ կասկածի մէջ կը վարանին և չեն հաւատար:

48. Մենք Հնգամատեանը զրկեցինք, որպէսզի մարդիկ անով լուսաւորուին և շիտակ ճամբէն ընթանան: Իսլամութիւնն ընդունած (1) մարգարէները գործածեցին զայն Հրէաները դատելու (2). օրէնադիրները և քահանայապետները առաջնորդուեցան անոր օրէնքներով. ժողովուրդը իրենց պաշտպանութեանը յանձնուեցաւ (3) անոնք իր վկաներն էին (օրէնքին վկաները՝ հանդէպ Հրէից.) ո՛վ Հրէաներ, մի՛ վախճաք բնաւ մարդոցմէ. երկնչեցէք ինձմէ, և իմ հաւատքս մի՛ ծախէք գձուձ շահու մը փոխարէն. ով որ իր վճիռներուն մէջ չհետեւի այն ճշմարտութեան զոր Աստուած երկինքէն իջեցուց, անհաւատ պիտի ըլլայ:

(1) « Ինքզինքնին Աստուծոյ կամքին յանձնած »

(2) « Պարտաւոր էին դատել Հրէաները այս գիրքին համաձայն »

(3) « Օրէնադիրները և քահանայապետները պարտաւոր էին դատաւան տեսնել համաձայն՝ Աստուծոյ գիրքին այն մասերուն, որոնց պահպանումը իրենց տրուած էր: » (Քաղիմիթքի)

49. Մենք Հրէաներուն պատուիրեցինք ի գործ դրնել ակն ընդ ականի օրէնքը . կեանքին տեղ կեանք, աչքին տեղ աչք, (քիթին տեղ քիթ, ականջին տեղ ականջ) ակուային տեղ ակուայ, վէրքին տեղ վէրք պիտի պահանջէք . ով որ կրած նեղութեան վարձքը ստանալով ողորմութեան կը յատկացնէ, Աստուծոյ առջև արժանիք չահած կ'ըլլայ (1) : Վճիռ մը արձակած միջոցին, ով որ երկինքէն զրկած մեր պատուէրները չի պահէ, յանցաւոր պիտի ըլլայ :

50. Միւս մարգարէներուն ետեւէն զրկեցինք Յիսուսը, Մարիամի որդին, Հնգամատեանը հաստատելու համար . անոր տուինք Աւետարանը, որ հաւատքին ջահն է և անկէ առջի նուիրական մատենաներուն վաւերականութիւն կուտայ . Աւետարանը կը լուսաւորէ և կ'ուսուցանէ զանոնք՝ որ կ'երկնչին Աստուծոյ :

51. Քրիստոնեաները պիտի դատուին Աւետարանին համաձայն . անոնք՝ որ այլապէս դատեն զանոնք, ամբարիշտներ են (2) :

52. Մենք քեզի զրկեցինք ճշմարտութիւնը պարունակող Գիրքը, որ կը հաստատէ անկէ առաջ եկած նուիրական մատենաները և անոնց մասին վկայութիւն կուտայ (3) . Հրէաներն և Քրիստոնեաները դատէ՛ Աստուծոյ պատուիրաններուն համաձայն անոնց բաղձանքներուն մի անսար, գուցէ հեռանաս այն վարդապետութենէն որ տրուեցաւ (մասնաւորաբար) քեզի . ձեզմէ իւրաքանչիւ-

(1) « Իր մեղքերը քաւած կ'ըլլայ : »

(2) « Անոնք՝ որ Աստուծոյ մէկ Գիրքին համաձայն չեն դատեր, անհաւատ են : »

(3) « Եւ զանոնք ամէն այլափոխումէ զերծ կը կացուցանէ : »

րին տուինք օրէնքներ, անոնց ճամբէն ընթանալու համար :

53. Աստուած կրնար (եթէ ուզէր) զձեզ ամենքդ միացնել նոյն կրօնքին տակ (1) բայց անիկա ուզեց փորձել թէ գուք կը պահէ՞ք իր զանազան պատուիրանները . ջանացէք (իրարու հետ մրցելով) բարիք գործել . ամենքդ ալ Աստուծոյ պիտի վերադառնաք, ու անիկա ցոյց պիտի տայ թէ ի՞նչ բանի մէջ մտորեցաք (2) :

54. (Երկինքէն ստացուած) պատուիրաններուն համաձայն վճիռներ արձակէ . անոնց բաղձանքներուն ականջ մի՛ կախեր . զգոյշ կեցիր որ զքեզ չի հրապուրեն և չի հեռացնեն այն որոշ պատուիրաններէն որոնք վերէն արը-ուեցան քեզի : Եթէ իրենք հեռանան ճշմարիտ ճամուռեցան քեզի : Եթէ իրենք հեռանան ճշմարիտ ճամբայէն, զիտցիր որ Աստուած իրենց գործած մէկ ոճիրին համար զիրենք կը պատժէ . (անսարակոյս) ամբարիշտներուն թիւը չատ մեծ է :

55. Արդեօք տգիտութեան համաձայն վճիռ տալ կը փափաքին (3) . և սակայն հաւատացեալները Աստուծոյ աւելի ի՞նչ արդար դատաւոր կրնան ունենալ :

56. Ո՛վ հաւատացեալներ, Հրէաներուն և Քրիստոնեաներուն հետ բարեկամական կապ մի՛ հաստատէք բնաւ . թողէք զանոնք որ իրարու բարեկամ մնան . ով որ անոնց բարեկամանայ, (վերջ ի վերջոյ) անոնց պիտի նրամանի, և Աստուած բնաւ չպիտի առաջնորդէ նենգամիտները :

(1) « Աստուած կրնար միակ ժողովուրդի մը վերածել զձեզ : »

(2) « Անիկա անձամբ պիտի լուստբանէ ձեր վիճարանութեանց նիւթը : »

(3) Այսինքն, կուսակաշտներուն վայրենաբարոյ օրէնքներովը կ'ուզեն դատուիլ :

57. Անոնք՝ որոնց սիրտը ապականած է, իրարու քով պիտի դան (1) և պիտի ըսեն թէ բաղբին հարուածները վանել կ'ուզեն. (բայց իրենք ինչ գիտեն) Աստուծոյ համար դիւրին է յաղթութիւն պարգեւել Մարգարէին (2) և տալ հրամաններ որոնք պիտի հրաժարեցնեն զիրենք զազանի մտադրութիւններէն:

58. (Այն ատեն) հաւատացեալները պիտի ըսեն. աւանք այն մարդիկն են որ Աստուծոյ անուշով (հանդիւսաւոր) երդում կ'ընէին թէ մեր խումբին կը պատկանին. իրենց ջանքերը բանի մը չեն յանդած, և անոնք պիտի կորուսին:

59. Ո՛վ միւսիւլմաններ, եթէ դուք ձեր հաւատքը ուրանաք, Աստուած պիտի յարուցանէ ուրիշ մարդիկ, զորս ինք պիտի սիրէ, ու անոնք ալ զինքը պիտի սիրեն: Հաւատացեալներուն հանդէպ եթէ ստորագաս են (3) անհաւատներուն հանդէպ գերագաս են (4) պիտի ըլլան, հաւատքի համար պիտի մարտնչին, և զիրենք պարսաւողին պարսաւանքէն չպիտի վախնան. Աստուած իր ընտրեալին կ'ընէ այս շնորհը. իմաստուն և անասնման է ան:

60. Դուք ձեզի իբր պաշտպան ունիք Բարձրեալին բազուկը (եւ իր Մարգարէն,) հաւատացեալները, աղօթք ընողները, ողորմութիւն սուողները և Աստուած պաշտողները:

61. Անոնք՝ որ կ'ընթանան երկինքի և Մարգարէին և հաւատացեալներուն պաշտպանութեան տակ, Աստուծոյ զինուորներն են. անոնք են որ յաղթանակը պիտի տանին:

(1) « Անհաւատներուն քով պիտի վազեն »

(2) « Թերեւս Աստուած պիտի գայ յաղթութեան չեա կամ երեւոյթ մը պիտի յայտնէ »

(3) « Խոնարհ պիտի ըլլան »

(4) « Հպարտ »

62. Ո՛վ հաւատացեալներ, բարեկամութիւն մի՛ հաստատէք բնաւ Քրիստոնեաներուն և Հրէաներուն հետ, ոչ ալ այն ամբարիշտներուն՝ որոնք ձեր հաւատքը ծաղրի առարկայ կը դարձնեն. եթէ հաւատացեալ էք, երկնչեցէք Աստուծմէ:

63. Բարեկամական կապ մի՛ հաստատէք նաև անոնց հետ որոնք կը ծաղրեն աղօթքը, որուն կը հրաւիրուին (1). անոնք սղէաներ են:

64. Հարցուր Հրէաներուն (2). ինչո՞ւ հաւատացեալներէն կը սոսկաք. անո՞ր համար է արդեօք որ անոնք կը հաւատան Աստուծոյ և երկինքէն զրկուած մատեաններուն, թէ չէ՞՝ անոր համար որ ձեր մէջէն շատերը ամբարիշտ են:

65. (Ըսէ՛ անոնց դարձեալ) կ'ուզէ՞ք որ ձեզ աւետեմ բան մը աւելի սոսկալի քան Աստուծոյ վրէժխնդրութիւնը որ ի գործ դրուեցաւ ձեր վրայ (3). անիկա զձեզ անիծեց իր զայրոյթին մէջ, զձեզ այրակերպեց կապիկներու և խոզերու, որովհետեւ դուք խունկ ծխեցիք կուռքերուն առջև և ամենախոր աղջամուղջին մէջ մըխըրճուեցաք:

66. Երբոր (ձեր առջև) եկան, ըսին. մենք կը հաւատանք: Անոնք մտան անհաւատութեան հետ ու դուրս պիտի ելին անհաւատութեամբ, բայց Աստուած գիտէ անոնց ծածկածը:

67. Անոնց մէջէն շատերը (փութկոտութեամբ) դէպ ի անարդարութիւն կ'ընթանան. քանինքն ըր անոնց մէջէն

(1) « Որոնք երբ կը ըսեն թէ աղօթքի կը հրաւիրուիք՝ կը ծաղրեն »

(2) « Կուռքական մատեանները ընդունողներուն »

(3) « Զոր Աստուած կը վերապահէ ձեզի » (Քաղեմիւրքի)

կը մնանին արգիլուած կերակուրներով իրենց արտօքնե-  
րը որքան զգուցիկ են :

68. Եթէ իրենց օրէնսդիրները և քահանայապետ-  
ները սանձ մը չի գնէին իրենց ամբարիշտ խօսքե-  
րուն, եթէ զիրենք չարգիլէին ոսնակովս ընելէ կերա-  
կուրներու մասին տրուած պատուիրանը, արդեօք ի՞նչ  
չարիքներ պիտի գործէին :

69. Հրէաները կ'ըսեն. Աստուծոյ ձեռքերը չլթայ-  
ուած են (¹) . թո՛ղ իրենց ձեռքերը չլթաներով ծանրա-  
բեռնուին, իրենց գործած ոճիրներուն համար անիծ-  
եալ թո՛ղ ըլլան : Ընդհակառակը, Աստուծոյ երկու ձեռքե-  
րն ալ ազատ են ու պատրաստ բաշխելու շնորհներ ու-  
րոնց որ ուզէ . քու վրայ թափած շնորհները պիտի ամե-  
ցնեն անոնց յանցանքները և անհաւատարմութիւնը :  
Բայց մենք անոնց մէջ սերմանեցինք ատելութիւն և  
թշնամութիւն, որոնք պիտի տեսնն մինչեւ յարութեան օ-  
րը . ամէն անգամ որ քեզի դէմ կռիւի կրակը վառեն, Ա-  
մենակարողը պիտի մարէ զայն, անոնք թափառական  
պիտի ըլլան աշխարհի վրայ և իրենց հետ պիտի տանին  
ապականութիւնը (²) . բայց Աստուած կ'ատէ ապականիչ-  
ները :

70. Ո՛հ, եթէ Տիրօջը երկիւղը և հաւատքը ունե-  
նային, իրենց մեղքերը պիտի մաքրէինք ու զիրենք պի-  
տի մտցնէինք երանութեան պարտէզներուն մէջ :

(1) «Թո՛ղ իրենց ձեռքերը չլթայուին իրենց վզին» Իսլամները  
կը հաւատան որ վերջին դատաստանին օրը Հրէաները պիտի ներ-  
կայանան ձեռքերնին վզերնուն կախած :

(2) «Անոնք երկրի վրայ կը շրջին զայն աւերելու համար և  
անկարգութիւններ գործելու : » (Քաղիմերքի)

Եթէ անոնք պահէին Հնգամատեանին և Աւետարանին պատ-  
ուէրները և Աստուծոյ զրկած հրամանները, պիտի վայելէին  
ամէն բան (իրենց գլուխին վրայ և տաքին տակ գտնը-  
ւող) : Անոնց մէջ կան մարդիկ որոնք չիտակ ճամբէն  
կ'ընթանան . բայց մեծամասնութեան գործած արարքները  
ամբարիշտ են :

71. Ո՛վ Մարգարէ, յայտնէ այն օրէնքները զորս  
Աստուած իջեցուց վրայ, որպէսպի առաքելութիւնդ ի  
գլուխ հանած ըլլաս . Աստուծոյ բազուկը պիտի պահպա-  
նէ զքեզ մարդոց բռնութիւններուն դէմ, որովհետեւ ա-  
նիկա բնաւ չառաջնորդեր անհաւատները :

72. Ըսէ՛ Հրէաներուն և Քրիստոնեաներուն . դուք  
հաստատուն հիման մը վրայ կռթնած չէք ըլլար, մինչեւ որ  
չպահէք Հնգամատեանին, Աւետարանին և Աստուծոյ զըր-  
կած պատուիրանները : (Ո՛վ Մուհամմէտ) այն Գիրքը զոր  
երկիրքէն ստացար, անոնց մէջէն չատերուն կուրութիւնը  
(և անհնազանդութիւնը) պիտի աւելցնէ, բայց անհաւատ-  
ներուն ճակատագրովը մի՛ մտահոգուիր դուն :

73. Հաւատացեալները, Հրէաները, Քրիստոնեաները  
և Մարէականները, (մէկ բառով) անոնք՝ որ կը հաւատան  
վերջին դատաստանին և բարի գործեր կը կատարեն, ա-  
մէն երկիւղէ և չարչարանքէ զերծ պիտի ըլլան (¹) :

74. Մենք ընդունեցինք Հրէաներուն ուխտը և մար-  
գարէները զրկեցինք անոնց . ամէն անգամ որ անոնց ճըշ-

(1) Քաղիմերքի կ'ըսէ թէ այս տունին մէջ յիշատակուած  
Սարէականները քրիստոնէական աղանդի մը կը պատկանէին և ո եւ է  
կապ չունին ասաղերը պաշտող կուպաշտ Սարէականներուն հետ,  
որոնց հանգեպ Մուհամմէտ շատ խիստ եղած է, մինչդեռ այս  
տունին մէջ յիշատակուածները՝ ըստ Բուրանի, կրնան փրկուիլ,  
կը բաւէ որ հաւատան երեք բանի — միակ Աստուծոյ, հան-  
դերձեալ կեանքին և բարիք գործելուն :

մարտութիւնները կը յայտնէինք, (Իսրայէլի զաւակները) իրենց ապականած սրտով կը մերժէին հաւատալ և մարգարէները իբր ստախօս կը զրպարտէին կամ անօրէնութեամբ կը սպաննէին :

75. Անոնք կարծեցին թէ իրենց ոճիրները անպատիժ պիտի մնան, որով կոյր և խուլ մնացին. Աստուած ներեց իրենց, բայց մեծագոյն մասը կրկին ի կաւ կուրուրեց իրենց. Յաւիտենականը կը տեսնէ անոնց արարքները :

76. Անոնք՝ որ կըսեն թէ Մարիամի որդի Յիսուսը Աստուած է, սրբապղծութիւն մը կը գործեն. Յիսուս ինքն իսկ չըսաւ միթէ. ո՞վ Իսրայէլի զաւակներ, պաշտեցէք զԱստուած որ թէ՛ իմ և թէ՛ ձեր Տէրն է : Ո՞վ որ ուրիշ չաստուածներ Աստուծոյ հաւասար կը նկատէ, երբէք չպիտի մանէ երանութեան պարտէզներուն մէջ. կըրակը պիտի ըլլայ իր բնակավայրը. նենգամիտները ո և է օգնութիւն չպիտի կրնան ակնկալել :

77. Անոնք որ կը պնդեն թէ Աստուած երբորդութեան մէկ մասը կը կազմէ, անհաւատներ են. միակ է Աստուած. և թէ չփոխեն իրենց կարծիքը, զարհուրելի չարչարանք մը վարձքը պիտի ըլլայ իրենց ամբարշտութեան :

78. Միթէ անոնք չպիտի՞ վերադառնան երբէք Աստուծոյ. միթէ իր գութը չպիտի՞ հայցեն. զթած և անյիշաչար է Աստուած :

79. Մեսիան, Մարիամի որդին, Բարձրեային մէկ առաքեալն է միայն. իրմէ առաջ ուրիշ մարգարէներ ալ եկած են. իր մայրը արդար էր. անոնք միասին կ'ապրէին և (կերակուր) կ'ուտէին (1). տե՛ս թէ ինչպէս անոնց կուտանքը և ինչպէս անոնց արարքները :

(1) Այսինքն, հասարակ մահկանացուներու նման չէին կընար առանց օնունդի մնալ :

անոնց կուտանքը ապացոյցներ Աստուծոյ միութեան մասին, և յետոյ տե՛ս թէ ինչպէ՛ս անոնք մոլորութեան մէջ կ'իյնան :

80. Ըսէ՛ անոնց. պիտի պաշտէք (Աստուծոյ քովը գնկով) անկարող կուռք մը, որ ո՛չ կրնայ պաշտպանել զձեզ, ոչ ալ վնասել, մինչդեռ Աստուած ամէն բան զիտէ և կ'իմանայ :

81. Ըսէ՛ Հրէաներուն և Քրիստոնեաներուն. ձեր հաւատքին սահմանները մի՛ անցնիք կեղծիքին հետեւում համար, և մի՛ որդեգրէք կարծիքն այն մարդոց, որոնք ձեզմէ առաջ մոլորութեան մէջ էին, և իրենց հետքչած տարած են մարդոց մեծագոյն մասը :

82. Հրէաներուն մէջ անհաւատ եղողները անիծուեցան Դաւիթի և Մարիամի որդի Յիսուսի բերնով (որովհետեւ) անհաւազանդ և ամբարիշտ ըլլալուն համար բնաւ ջանք չըրին ձեռք քաշելու իրենց գործած ոճիրներէն. վա՛յ անոնց գործերուն :

83. Անոնց մէջէն շատեր պիտի տեսնես որ անհաւատներուն քով կը վազեն. իրենց (կիրքերուն թելադրած) արարքները որքան զզուելի են. Աստուած իր զայրոյթին մէջ զանոնք յաւիտենապէս պիտի գահավիժէ չարչարանքներու ստիկումին մէջ :

84. Եթէ հաւատացած ըլլային Աստուծոյ, Մարգարէին և Քուրանին, անհաւատներուն բարեկամութիւնը չպիտի փնտռէին բնաւ, բայց անոնց մեծագոյն մասը նենգամիտներէ կը բաղկանայ :

85. Դուք փորձով պիտի տեսնէք թէ հաւատացեալներուն ամենէն կատաղի թշնամիները Հրէաները և կըռապաշտներն են, իսկ ինքզինքնին քրիստոնեայ կոչողներուն մէջ պիտի գտնէք մարդասէր մարդիկ, որոնք հա-

ւատացեալները կը սիրեն , որովհետեւ քահանաներ եւ արեղաներ ունին խոնարհութեան նուիրուած (1) :

86. Երբ անոնք լսին Քուրանի ընթերցումը , ուրախութենէ կուլան , որովհետեւ ճշմարտութիւնը ճանչցան(2) . անոնք գոչեցին , Տէր , կը հաւատանք . զմեզ ալ արձանագրէ անոնց դասին որ մէջ կը հաւատան (Քուրանին ճշմարտութեան :

87. Ինչո՞ւ չպիտի հաւատայինք Աստուծոյ եւ իր յայտնած ճշմարտութիւններուն , ինչո՞ւ չպիտի բաղձայինք որ անիկա մեզի տեղ մը տար արդարներուն մէջ :

88. Աստուած լսեց անոնց ձայնը եւ (իր վարձատրութիւն) անոնց պիտի տայ զետերով ոտոզուած երանութեան պարտէզներ , ուր պիտի բնակին յաւիտեանապէս . բարիք գործողներուն վարձատրութիւնն այս է . իսկ անհաւատները , եւ անոնք՝ որ մեր կրօնքը սուտ պիտի հրաշակեն , դժոխքին մէջ պիտի գահավիժին :

89. Ո՞վ հաւատացեալներ . բնաւ մի՛ արգիլէք այն լաւ բաները որոնց գործածութիւնը թոյլատրած է ձեզ Աստուած . իր պատուէրները ոտնակոխ մի՛ ընէք , որովհետեւ ամբարիշտները կ'ատէ :

90. Մասնեցէք այն թոյլատրուած (եւ աղէկ) սնունդներով զօրս Աստուած կը շնորհէ ձեզ իր առատածեռութեամբ . երկնիցեցէք Աստուծամէ , եթէ կը հաւատաք իրեն :

91. Անիկա զձեզ չպիտի պատժէ եթէ ձեր խոստումներէն մին աննկատ թողուք , բայց պիտի պատժէ

(1) « Որովհետեւ քահանաներ եւ արեղաներ ունին եւ գող չեն » (Քազիմիրաքի)

(2) Այս տունը յայտնուեցաւ այն ժամանակ երբ Հապէշաստանի թագաւորին քրիստոնէսոյ պատգամաւորները եկան Մուհամմէտին : որ երբ անոնց կարգաց Քուրանէն գլուխ մը , ուրախութենէ լացին եւ իլլամ եղան : (ձեւալէտտին)

զձեզ եթէ ձեր լուրջ երգումներէն մին դրժեք : (Այս տեսակ դրժումի մը քաւութեանը համար) տասն աղքատներու կերակուր պիտի տաք (միջին տեսակէ սնունդ եւ այնպէս՝ ինչպէս կուտաք ձեր ընտանիքին) : Կամ թէ պիտի տաք անոնց զգեստը եւ կամ գերի մը պիտի ազատէք : Ով որ այս պատիժները կրելու վիճակի մէջ չէ , երեք օր ծոմ պիտի պահէ . այս է օրէնքը ընդդէմ անոնց(1) որ կը դրժեն իրենց երգումները : Արդ , պահեցէք ձեր ուխտերը , Աստուած այս կերպով է որ կը յայտնէ իր պատուիրանները , որպէս զի շնորհապարտ ըլլաք իրեն :

92. Ո՞վ հաւատացեալներ , գինին(2) , բազդախաղերը արձանները եւ նետերով վիճակ քաշելը սատանային հնարած սրբապղծութիւններն են : Զգուշացէ՛ք անոնցմէ , այլապէս թշուառ կ'ըլլաք :

93. Սատանան կը ջանայ գինիին եւ բազդախաղին միջոցաւ ձեր մէջ վառել թշնամութեան հուրը , եւ զձեզ հեռացնել Աստուծոյ յիշատակէն եւ աղօթքէն : Պիտի ուզէի՞ք ամբարիշտներ ըլլալ . հնազանդեցէք Աստուծոյ եւ իր Մարգարէին , եւ զգոյշ եղէք . եթէ անհնազանդ ըլլաք գիտցէք որ Մարգարէն պաշտօն ունի ճշմարտութիւնը յայտնելու ձեզի :

(1) « Այս է քաւութիւնը անոնց » (Քազիմիրաքի)

(2) ձեւալէտտին կը կարծէ թէ՛ Մուհամմէտ կ'որգիլէ գինին շափազանց գործածութիւնը միայն , իսկ Եսահա եւ Քուրանի ուրիշ մեզնիներ կը կարծեն թէ՛ արգելքը բացարձակ է : Աստուած 40 օր երես պիտի դարձնէ այն Մահմետականին որ գինի խմած է . իսկ եթէ այնքան շատ խմած է որ գինովցած է , Աստուած 40 օր վերջ միայն պիտի ընդունի անոր զղջումը : Եթէ այս ժամանակամիջոցին մեռնի , կուպաշաներուն պէս պիտի պատժուի . Սալաթի կ'ըսէ թէ՛ այս պատուէրը աւելի լաւ կը պահուի եգիպտոսի մէջ քան այլուր :

94. Այն հաւատացեալները որոնք բարիք գործած ըլլալու արժանիքն ալ ունին, յանցաւոր չպիտի նկատուին ընաւ եթէ ուստի արգիլուած ուտելիքներ, բաւական է որ անխախտ կերպով հաւատքնուն վրայ մնան, Տիրոջը երկիւղը ունենան, բարիք գործեն, որովհետեւ Աստուած կը սիրէ զանոնք որոնք բարիք կը գործեն:

95. Ո՛վ հաւատացեալներ, ձեզի համար փորձութիւն մը պիտի ըլլայ այն որսի միտք զոր (Մէքքէ ուխտի գացած միջոցնիդ) ձեր նիղակները պիտի հայթայթեն ձեզի: Աստուած այս կերպով պիտի հասկնայ թէ՛ ո՛վ է այն որ ի խորոց սրտի կը վախնայ իրմէ: (Ա.սուհետեւ) այն որ ստնակոխ ընէ իր օրէնքները, սարսափելի պատիժի մը պիտի ենթարկուի:

96. Ո՛վ հաւատացեալներ, որսորդութիւն մի՛ ընէք Մէքքէ ուխտագնացութեան միջոցին. ով որ ստնակոխ ընէ այս պատուէրը (կոնխամտածութեամբ,) պիտի պատժուի այնպէս՝ ինչպէս եթէ ընտանի կենդանի մը սպաննած ըլլար (1): Ձեր մէջէն երկու արդարապատ մարդիկ այս մասին վճիռ պիտի արձակեն, և զատապարտեալը (ընտանի կենդանին) ընծայ պիտի զրկէ նուիրական տաճարին, կամ աղքատներուն կերակուր պիտի տայ (իբր քաւութիւն), և կամ ծոմապահութեան պիտի ենթարկուի որպէս զի զգայ իր յանցանքին ծանրութիւնը: Աստուած կը ներէ անցեալը, բայց ով որ կրկին անգամ իյնայ մեղքի մէջ, երկնային վրէժխնդրութեան պիտի ենթարկուի: Աստուած ահարկու է իր պատուհաններուն մէջ:

97. Ձեզի թոյլատրուած է ձուկ որսալ ձեր անձնական պէտքերուն (և ճամբորդներուն) համար, մինչ նուիր-

(1) «Անոր փոխարէն համարժէք ընտանի կենդանի մը պիտի տայ.» (Քաղիմիբքի)

րական ճամբորդութիւնը ընկու վրայ էք. բայց ուխտագնացութեան ամբողջ տեղութեանը՝ որսորդութիւնը արգիլուած է: Երկնչեցէք Տիրոջմէն. որ մը իր առջեւ պիտի ելլէք:

98. Աստուած Քաապան (իբր նուիրական տուն) հաստատեց, որպէս զի մարդոց կայան մը ըլլայ. անիկա հաստատեց նուիրական ամբաները (1), (մաքի) ընծայ տալը, անոր զարդերը, որպէս զի հասկնաք թէ Աստուած ծանօթ է երկկնքի մէջ և երկրի վրայ եղածներուն, և իր գիտութիւնը անասման է: Յիշեցէք որ իր ձեռքին մէջ ունի վրէժը, բայց (նոյն ատեն) զթած և ներողամիտ է:

99. Մարգարէին պաշտօնն է միայն քարոզչութիւն: Աստուած զիտէ թէ ինչ բան կը ծածկէք ձեր սրտին մէջ և ի՛նչ բան կը յայտնէք:

100. Չարիքը ի՛նչ հրապոյր որ ալ ունենայ ձեզի համար, պէտք չէ որ զայն բարիքին հաւասար դնէք (2). ո՛վ դուք որ իմաստուն էք, երկնչեցէք Աստուծմէ և երջանիկ պիտի ըլլաք:

101. Ո՛վ հաւատացեալներ, ձեր հետաքրքրութեան չափ մը զրէք, եթէ տեղեկանաք այն բաներուն զոր զխոնալ կ'ուղէք, թերևս վնասուիք. սպասեցէք որ Քուրանը ամբողջութեամբ յայտնուի, այն ատեն ամէն բան

(1) «Նուիրական ամբոք» որ ըստ Քաղիմիբքիի Զիլիեհեէ ամբոն է. մինչ Սափարի կը թարգմանէ «Նուիրական ամբաները» և ստոնք են, կ'ըսէ, Մուհարրէմ, Բեհեպ, Զիլգասէ և Զիլիեհեհեէ ամբաները, որոնց միջոցին որսորդութիւն և պատերազմ ընել արգիլուած է:

(2) «Աղէկ և գէշ բան մը չեն կրնար ունենալ միեւնոյն արժէքը, որքան ալ գէշ բանին առատութիւնը հաճելի ըլլայ ձեզի.» (Քաղիմիբքի)

պիտի պարզուի: Աստուած կը ներէ ձեր հետաքրքրութիւնը, որովհետեւ գլխած և անյիշաչար է: Զեղմէ առաջ եղան մարդիկ որոնք (բացարձակապէս) գիտնայ ուղեցին ամէն բան, և ասոր համար անհաւատ եղան:

102. Աստուած ոչ մէկ պատուէր տուած է Պահիրայի, Սայիպայի, Վասիլայի և ո՛չ ալ Հաւիի մասին<sup>(1)</sup>. զատողութենէ զուրկ անհաւատներն են որ այս սուտերը կը վերագրեն Աստուծոյ:

103. Երբ անոնց բտուեցաւ՝ ընդգրկեցէք այն կրօնքը զոր Աստուած յայտնեց իր Մարգարէին, անոնք պատասխանեցին. մեր հայրերուն թողած հաւատքը բաւական է մեզի: Անոնց հոգը չէ թէ հայրերնին ո՛չ գիտութիւն, ոչ լոյս ստացած էին իբր առաջնորդ:

104. Ո՛վ հաւատացեալներ, ձեր հոգին խնամքը ձեզի կը վերաբերի. ուրիշներուն մոլորութիւնը ձեզի չը պիտի մնասէ ընաւ, եթէ լուսաւորուած էք (նուիրական մասեանով) զուք ամենքդ ալ Աստուծոյ ատեանին առջև պիտի ելլէք, և անիկա ցոյց պիտի տայ ձեր արարքները:

105. Ո՛վ հաւատացեալներ, երբ մահուան անկողինին վրայ ձեր կտակը կը պատրաստէք, իբր վկայ կանչեցէք ձեր մէջէն երկու արդարադատ մարդիկ. եթէ մահուան աղէտը պատահած է այն միջոցին որ ձեր

(1) Պահիրա, Սայիպա և Վասիլա անուններն են չաստուածներուն նուիրուած երեք էգ ուղտերու: Առաջինին կաթին սերը չաստուածներուն կը նուիրէին, իսկ Սայիպա և Վասիլա ազատ ձգուած էին, ո եւ է բեռ չէին կրեր և չէին զուգաւորուեր. իսկ Համի անունն էր այն ուղտին որ էգ ուղտի մը վրայ պառկելէ ետք ատեն մը ազատ կը մնար: Մուհամմէտ կը գատապարտէ բոլոր այս սովորութիւնները:

երկրէն հեռու կը գտնուիք, օտարներէն<sup>(1)</sup> կանչեցէք ձեր վկաները. աղօթքը ընելէ վերջ գանոնք պիտի փակէք և եթէ անոնց հաւատքին մասին կասկածիք, սա երդումը ընել պիտի տաք Աստուծոյ առջև.— Մեր վկայութեան փոխարէն դրամ չպիտի ստանանք բնաւ, (ինչ զին որ ալ ընծայուի) նոյն իսկ մեր ազգականներէն. մենք մեր վրկայութիւնը չպիտի ծածկենք, որովհետեւ ոճրապարտներ պիտի բլլայինք:

106. Եթէ յայտնուէր որ այս վկաները կեղծարարութիւն մը գործած են, պիտի ընտրէք ուրիշ երկու վկաներ, կտակարարին ազգականներուն մէջէն (և անոնցմէ՝ որոնք կեղծարարութիւնը երևան հանած են) անոնք ալ Աստուծոյ առջև պիտի երգնուն թէ իրենց վկայութիւնը աւելի ճշմարիտ է (քան առաջին երկու վկաներունը) և թէ անորէն բան մը չպիտի ըսեն բնաւ, այլապէս ոճրագործներուն կարգը պիտի դատուէին:

107. Այս միջոցներով աւելի գիւրբին պիտի բլլայ մարդոցմէ ստանալ ճշգրիտ վկայութիւն մը, որովհետեւ պիտի վախնան թէ՛ մի՛ գուցէ ուրիշ մը վկայութիւն տայ իրենցմէ վերջ: Ուրեմն երկնչեցէք Աստուծամէ. մտիկ ըրէք իր ձայնին. անիկա նենդամիտները չ'առաջնորդեր բնաւ:

108. Օր մը Աստուած պիտի հաւաքէ մարգարէները և անոնց պիտի հարցնէ թէ մարդիկ ի՛նչ պատասխանեցին իրենց յորդորներուն. մարգարէները պիտի ըսեն. Տէ՛ր, գիտութիւնը մեր բաժինը չէ բնաւ, միայն դուն գիտես գաղտնիքները:

109. Աստուած պիտի ըսէ Մարիամի սրգի Յիսուսին.

(1) Այս բառով չ'ակնարկուի որ ոչ-Սրարներուն կամ կռպաշտներուն, այլ՝ այն հաւատացեալներուն միայն որոնք իրենց կապուած չեն արեան կապով մը: (Քաղտիւրքի)

յիչէ՛ այն շնորհները զոր թափեցի քու վրայդ և գրեց ծընողին վրայ . գրեց զօրացուցի սրբութեան ողիովը , որպէս զի ուսուցանես մարդոց , օրօրոցէդ մինչև ծեղութիւնդ (1) :

110. Քեզի ուսուցի Գիրքը , Իմաստութիւնը , Հրնգամատեանը և Աւետարանը . իմ արածութեամբս հողէն թռչունի մը դէմքը շինեցիր , և քու շունչդ անոր կենդանութիւն տուաւ . իմ թոյտուութեամբս ի ծնէ կոյր մը եւ բորոտ մը բժշկեցիր . իմ թոյտուութեամբս մեռելները դուրս հանեցիր իրենց գերեզմաններէն . Հրէաներուն ձեռքէն ազատեցի գրեց . երբ աչքերնուն առջև հրաշքներ գործեցիր , անոնք իրենց անհաւատութեան մէջ յամառացած , գոչեցին . այս բոլորը մոգութիւն է :

111. Երբ ես հրամայեցի մարգարէներուն հաւատալ ինծի , եւ իմ առաքեալ Յիսուսիս , անոնք ըսին . մենք կը հաւատանք եւ դուն վկայ ես մեր հաւատքին (թէ մենք կ'ապաւինինք Աստուծոյ կամքին) :

112. Մարգարէները ըսին . ս'վ Յիսուս , Մարիամի որդի , քու Տէրդ կրնայ մեզի երկինքէն իջեցնել կերակուրներով լիցուն սեղան մը . Յիսուս պատասխանեց անոնց . վախցէք Տիրոջմէն , եթէ հաւատացեալ էք :

113. Անոնք պատասխանեցին . մենք կը փափաքինք սեղան նստիլ եւ ուտել , այն ատեն մեր սրտերը հանգիստ պիտի ըլլան , ու մենք պիտի գիտնանք որ ճշմարտութիւնը կը քարոզեա մեզի , եւ քեզի ի նպատակ կայութիւն պիտի տանք :

114. Մարիամի որդի Յիսուս սա ազօթքը ուղղեց երկինք . — Ո՛վ Աստուած , երկինքէն սեղան մը իջեցուր

(1) «Որպէսզի օրօրոցի մանուկէն մինչև չափահասներուն ուսուցանես :» (Քաղիմիրքի)

մեզի , թող անիկա խնջոյք մը ըլլայ մեր մէջէն առաջինն եւ յետինն համար , ու նշան մը՝ քու զօրութեանդ , ուտելիք տուր մեզի , որովհետեւ դուն ամենէն առատաձեռն անուցիչն ես :

115. Աստուած այս խնդրանքը ընդունելով ըսաւ . այդ սեղանը պիտի իջեցնեմ ձեզի համար . բայց վա՛յ անոր որ այս հրաշքէն վերջ դեռ անհաւատ պիտի մնայ . այդպիսին պիտի ենթարկուի այնքան անաւոր պատիժի մը , զոր ուրիշ ոչ մէկ արարած կրած է :

116. Աստուած Մարիամի որդի Յիսուսի հարցուց թէ ինք երբէք հրաման ըրած է մարդոց՝ պաշտել ինքզինքը և իր մայրը իբրև Աստուած : Յիսուս պատասխանեց . քա՛ւ լիցի Տէր , որ այդպիսի սրբապղծութիւն մը կատարած ըլլամ . եթէ այդպէս ըսն մը ըսած ըլլայի , դուն չպիտի գիտնայիր . դուն գիտես թէ իմ հոգիս խորը ինչ կայ , իսկ ես չեմ գիտեր թէ ինչ բան կը ծածկէ քու գերագոյն վսեմութիւնդ , որովհետեւ միայն Բարձրեալին կը պատկանի գաղանիքներու ծանօթութիւնը :

117. Ես խօսած եմ անոնց միայն քու պատուիրաններդ յայտնելու համար . ես անոնց ըսած եմ , պաշտեցէք զԱստուած , իմ Տէրս և ձեր Տէրը . այնքան ատեն որ աշխարհի վրայ ապրեցայ , անոնց քով վկայ եղայ (1) , իսկ երբ քու հրամանովդ մահը եկաւ իմ կեանքիս օրերուն թելը կտրելու , դուն եղար անոնց պահապանը : Տիեզերքի վկան դուն ինքդ ես :

118. Եթէ զանոնք պատժես , (իրաւունք ունիս , ուրովհետև) անոնք քու ծառաներդ են . եթէ անոնց ներես , (դուն անոնց Տէրն ես , որովհետև) հղօր և իմաստուն ես :

(1) «Կրնայի անոնց դէմ վկայ ըլլալ» (Քաղիմիրքի)

119. Այն ատեն Աստուած ըսաւ. վերջին դատաստանի օրը, անոնք որ արդարութիւն ի գործ դրած են, ըստ այնմ պիտի վարձատրուին, գեաւերով ոռոգուած պարտէզներու մէջ պիտի մտնեն, և յաւիտենապէս պիտի բնակին հոն: Աստուած գոհ պիտի մնայ անոնցմէ, և անոնք ալ իրենց երջանկութիւնը պիտի գտնեն Աստուծոյ մէջ, և պիտի վայելեն գերագոյն երանութիւնը:

120. Աստուած է վեհապետը երկինքի, երկրի և անոնց միջև գտնուող բոլոր բաներուն. ոչինչ կրնայ սահմանափակել անոր զօրութիւնը:

### ՎԵՐՋ Ե. ԳԼՈՒԽԻ

### ԳԼՈՒԽ 2.

### Հ Օ Տ Ե Ր Ը <sup>(1)</sup>

Տրուած՝ Մէսիսէի մէջ. — 165 տուն

Յանուն ողորմած եւ անյիշատար Աստուծոյ.

1. Փա՛ռք Յաւիտենականին, որ ստեղծեց երկինքն ու երկիրը, որ կազմեց խաւարն ու լոյսը. և տակաւին ամբարիշտը Աստուծոյ հաւասար կը դասէ ուրիշ չաստուածները:

2. Անիկա զձեզ հողէն ստեղծեց, և ձեր կեանքի օրերուն սահմանը գծեց. (կանխապէս նշանակուած պայմանաժամը իր կարողութեան մէջ է) ու գուք տակաւին կը կասկածիք:

3. Անիկա Աստուած է երկինքի մէջ և երկրի վրայ. գիտէ թէ ինչ բան կը ծածկէք և ինչ բան կը յայտնէք. ձեր արարքներուն վկան է ան:

4. Աստուծոյ զօրութեան նշանները որքան ալ յայտնի ըլլան, անոնք տակաւին յամառօրէն կը մերժեն:

5. Անոնք հաւատ չ'ընծայեցին այն ճշմարտութեան որ իրենց կը քարոզուէր. քիչ ատենէն պիտի պատժուին իրենց ցոյց տուած արհամարհանքին համար:

6. Չէք գիտեր թէ քանի սերունդներ փճացուցինք երկրիս երեսէն (անոնցմէ առաջ.) մենք անոնց տուած էինք աւելի զօրաւոր տէրութիւն մը քան ձերինը, անոնց զրկեցինք ամպեր, որպէսզի իրենց դաշտերուն վրայ

(1) « Արջառը. » (Քաղցիմերքի)

անձրև տեղայ, (անոնց ոտքերուն տակ) գետեր հոսեցուցինք: Բայց անոնք ոճիր գործեցին ու անոր համար վրձացուցինք զանոնք, և անոնց տեղ ուրիշ ազգեր (1) յաբուցինք:

7. Եթէ նոյն իսկ քեզի զրկէինք Գիրքը (ամբողջովին գրուած թուղթի պատատի մը վրայ) գարձեալ անհաւատները ձեռքերնին անոր զպցնելով պիտի գոչէին. խաբեբայութիւն մըն է աս (2):

8. Անոնք կ'ըսեն. ինչո՞ւ համար երկիրքէն հրեշտակ մը չ'իջնար Մարգարէին հետ որպէս զի հաւատանք. բայց երբոր Աստուած հրեշտակ մը իջեցնէր երկիրքէն, անոնք գարձեալ անհաւատ պիտի մնային. այն ժամանակ ստուգապէս պիտի կորսուէին անոնք և իրենց զՂշարուն չպիտի սպասուէր (3):

9. Եթէ երկիրքէն հրեշտակ մը իջեցնէինք, անիկա պիտի ունենար մարդոց կերպարանքը և (անոնց հագած) զգեստին ձեւը (4):

10. Քեզմէ առաջ ալ իմ առաքեալներս մարդոց ծաղրին առարկայ եղան, բայց ծաղրողները ենթարկուեցան այն պատիժին զոր կը հեգնէին:

11. Ըսէ՛ անոնց. շրջեցէք աշխարհը և տեսէք թէ ի՞նչ եղած է վիճակն անոնց, որ ստախօս կ'անուանէին մարգարէները:

(1) « Նոր սերունդ մը » (Քաղեմիւրքի)

(2) « Պարզապէս մոգութիւն է այս » »

(3) Որովհետեւ, հրեշտակները Աստուծոյ սպառնալիքներուն գործադրելներն են, մինչ մարգարէները՝ պարզ զեկուցանողները:

(4) Որովհետեւ, մարգիկ շեն կրնար հրեշտակի մը շարժումը փայլն գիմանալ, կ'ըսեն Արար մեկնիչները: Մուհամմէտ ինքն իսկ չէր կրնար շեշտակի նայել Գարբիէլ հրեշտակապետին:

12. Ըսէ՛. որո՞ւ կը վերաբերին երկիրքի մէջ և երկրի վրայ եղածները. պատասխանէ. Աստուծոյ: Անիկա իրեն պարտականութիւն համարեց զթած ըլլալ. յարութեան օրը զձեզ ամենքդ պիտի հաւաքէ. այդ մասին կասկած չկայ. անհաւատները պիտի կորսնցնեն իրենց հողին:

13. Անիկա տէրն է ամէն բանի զոր կը քողարկէ գիշերը և զոր կը լուսաւորէ ցերեկը. ամէն բան գիտէ և կ'իմանայ:

14. Ըսէ՛ անոնց. Աստուծմէ զատ ուրիշ պաշտպան չ'ը պիտի փնտռեմ, մինչ ան է որ կազմեց երկիրքն ու երկիրը, ու կը սնուցանէ ամենքը, առանց երբէք սնանելու. ևս հրաման ստացած եմ առաջինն ըլլալ անոնց մէջ որ Իսլամութիւնը կ'ընդունին, և Բարձրեային հաւատար ոչ ոք տալ (1):

15. (Ըսէ՛,) եթէ Աստուծոյ ձայնին անհնազանդ ըլլամ, մեծ օրուան պատիժէն կը վախնամ:

16. Եթէ այն օրը ու է մէկը խուսափի պատիժէն, Աստուծոյ գթութեանը շնորհիւ միայն պիտի ըլլայ այդ, ու ակներև երջանկութիւն մը պիտի համարուի:

17. Երբ Աստուած վիշտ մը զրկէ ձեզի, միայն ինքըն է որ կրնայ փրկել անկէ. եթէ բարիք մը կը շնորհէ ձեզի, պատճառն այն է որ Ամենակարող է ան:

18. Իր ծառաներուն բացարձակ տէրն է. իմաստութիւնը և գիտութիւնը իր ստորոգելիներն են:

19. (Ըսէ՛,) որո՞ւն վկայութիւնը աւելի արժէքաւոր է. (պատասխանէ,) Աստուած իմ և ձեր միջև. վկայ է. այս Բուրանը ինծի յայտնուեցաւ իբր ազգարարութիւն ձեզի և անոնց՝ որոնց ձեռքը պիտի հասնի. պիտի ըսէ՛ք թէ

(1) « Իուք ալ կուպաշտ մի՛ ըլլաք » »

Աստուծոյ՝ զատ ուրիշ չաստուածներ կան. ես երբէք չը պիտի արտասանեմ այսպիսի սրբապղծութիւն մը: Աստուած մէկ է, և ես կախում չ'ունիմ անոնցմէ՝ զորս անոր հաւասար կը դասէք:

20. Անոնք որ նուիրական մատեանները ընդունեցին, կը ճանչնան Մարգարէն այնպէս՝ ինչպէս իրենց գաւակները. բայց անոնք որ իրենց հոգին կը կորսնցնեն, բնաւ չպիտի հաւատան:

21. Ի՞նչ կայ աւելի ամբարշտ քան ամաստանել զԱստուած և իր կրօնքը իբր ստութիւն. Տէրը երբէք չը պիտի բարգաւաճեցնէ չարամիտները:

22. Այն օրը ուր պիտի հաւաքենք բոլոր մարդիկը, պիտի հարցնենք կռապաշտներուն. ո՞ւր են անոնք զորս Աստուծոյ հաւասար կը դասէիք, և կ'երեւակայէիք:

23. Ու անոնք իբր արդարացում պիտի ըսեն. կ'երդնունք Բարձրեալին անունով, որ երբէք կուզք չը պաշտեցինք:

24. Տե՛ս ինչպէս կը ստեն ինքզինքնուն դէմ, և թէ ինչպէս կ'անհետանան իրենց երեւակայական չաստուածները:

25. Իրենցմէ մէկ քանիները (կուգան) մտիկ կ'ընեն Քուրանի վարդապետութիւնը, բայց բնաւ չեն հասկնար. մենք անոնց աչքերը (1) ֆողով մը ծածկեցինք, և անոնց ականջները ծանրացուցինք: Եթէ նոյն իսկ ամենէն փայլուն հրաշքներուն ականատես ըլլան, չպիտի լքեն անհաւատութիւնը, մինչև որ չի գան քու սօտդ և չը լուսաւորուին (2): Անհաւատները պիտի ըսեն. Քուրանը հին առակներու հաւաքածոյ մըն է:

(1) « Սրտերը .

(2) « Անոնք քու սօտդ ալ պիտի գան և պիտի կուռն քեզի հետ: » (Քաղիմիբեքի)

26. Ուրիշները Մարգարէէն հեռացնելով իրենք ալ կ'ուծանան, բայց միայն ինքզինքնուն չարիք կը հասցնեն ու չեն զիտեր:

27. Եթէ զանոնք տեսնէիր այն միջոցին երբ դժոխքին բոցերուն մէջ պիտի իջնեն, պիտի լսէիր անոնց գոչելը. ա՛հ, տայր Աստուած որ կարենայինք աշխարհ վերադառնալ, այլեւս սուտ չպիտի համարէինք աստուածային կրօնքը, ու հաւատացեալ պիտի ըլլայինք:

28. Անոնք տեսան ճշմարտութիւնը զոր (աստեօք) կը ծածկէին. (բայց) եթէ աշխարհ վերադարձուէին, կըրկին մոլորութեան մէջ պիտի իյնային, (որովհետեւ) իրենց սիրտը սուտի անձնատուր եղած է:

29. Անոնք սա լեզուն գործածեցին. այս աշխարհիս վրայ մեր վայելածէն զատ ուրիշ աշխարհ չկայ. մենք յարութիւն չպիտի առնենք:

30. Բայց երբ Յաւիտեանականին առջեւ ելլեն, (յարութեան օրը) իրենց պիտի հարցուի, ասիկա ճշմարիտ յարութիւն մը չէ՞: Անոնք պիտի պատասխանեն. կ'երդնունք քու վեհափառ սրբութեանդ վրայ որ ճշմարիտ յարութիւն մըն է: Ուրեմն, պիտի յարէ Բարձրեալը, ճաշակեցէք ձեր անհաւատութեան պատիժը:

31. Անոնք որ սուտ կը հոչակէին յարութեան օրը, այլեւս մէջտեղ չ'կան. մահը յանկարծակիի բերաւ զանոնք և անոնք գոչեցին. վա՛յ մեզի որ մոռցանք այս աղետալի վայրկեանը. անոնք ուսերնուն վրայ պիտի կրեն իրենց ոճիրներուն բեռը. սարսափելի բեռ (1):

(1) Այն օրը ուր անհաւատները յարութիւն առնեն, կեանքի մէջ իրենց գործած չարիքները սարսափելի երեւոյթով մը աչքերնուն առջեւ պիտի ներկայանան և պիտի ըսեն. չէք ճանչնար մեզի, աշխարհի մէջ մենք զձեզ կրեցինք, դուք ալ ճիմա զձեզ պիտի կրէք. այս ըսելով վրանին պիտի ցատկեն և իբր բեռ պիտի ծանրանան ուսերնուն վրայ, (Եհէա)

32. Այս աշխարհի կեանքը անցաւոր ժամանց մըն է. անոնք որ Աստուծոյ կ'երկնչին աւելի թանկագին կեանք մը պիտի ունենան. չէ՞ք հասկնար ասիկա :

33. Մենք գիտենք (ս'վ Մուհամմէտ) թէ անոնց խօսքերը քեզի վիշտ կը պատճառեն. բայց զքեզ չէ՛ որ իբր ստախօս կ'ամբաստանեն, այլ անոնք կ'ուրանան աստուածային կրօնքը :

34. Քեզմէ առաջ եկող մարգարէներն ալ ստախօս համարեցին անոնք. բայց մարգարէները համբերատարութեամբ սովազցին մարդոց անարդարութեան, մինչև այն վայրկեանը, երբ մենք օգնութեան հասանք, որովհետեւ Աստուծոյ խօսքը անսխալական է. դուն գիտես առաքեալներուն պատմութիւնը :

35. Անտարակոյս անոնց ատելութիւնը տաժանելի է քեզի (և եթէ կարենայիր) գեանձն տակ փոս մը պիտի փորէիր կամ սանդուխտով երկինք պիտի բարձրանայիր, անոնց առջեւ հրաշք մը դործելու համար : Եթէ Աստուած թուէր, միթէ զանոնք բոլորը փրկութեան ճամբուն մէջ չպիտի միացնէր. ուրեմն տգէտներուն դասէն մի՛ ըլլար :

36. Անտարակոյս անիկա իր ձայնին անսացողներուն խնդրանքը պիտի ընդունի. մեռելներուն յարութիւն պիտի տայ և իր առջեւ պիտի հանէ :

37. Անոնք ըսին. մենք չպիտի հաւատանք բնաւ, մինչև որ երկնային նշան մը քու առաքելութիւնդ չվրկայէ. պատասխանէ անոնց. Աստուած հրաշքներ դործելու չափ զօրաւոր է, բայց մեծ մասամբ դուք չէք գիտեր :

38. Աշխարհի վրայ գտնուող կենդանիները, միջնորդին մէջ սաւառնող թռչունները ձեզի նման էակներ են. Գիրքին մէջ ոչ մէկ բան զանց առնուած է, անոնք

ալ Աստուծոյ առջեւ պիտի ելլեն վերջին դատաստանին օրը :

39. Անոնք որ մեր վարդապետութիւնը սուտ կը հռչակեն, խուլ և համբ մնալով կը թափառին մութին մ.ջ. Աստուած ուզածը կը մոլորեցնէ և ուզածը ուղիղ ճամբան կ'առաջնորդէ :

40. Ըսէ անոնց. եթէ չարչարանքը ձեր առջև պատրաստ ըլլար, եթէ ժամը հնչէր, Աստուծոյ զատ ուրիշ մէկը օգնութեան պիտի կանչէիք. (ըսէք) եթէ անկեզմ էք :

41. Անտարակոյս զինքը պիտի կանչէիք, և եթէ ան փափաքէր, պիտի աղատէիք այն նեղութիւններէն որոնք իր գութը հայցել կուտային ձեզի. ձեր պաշտած կուռքերը պիտի մոռնայիք :

42. Մենք զրկեցինք մարգարէներ քեզմէ առաջ, որպէսզի ազգարարին ժողովուրդներուն, և անոնց զգացուցինք աղէտներ (և չարիքներ) որպէսզի մեր գութը հայցեն :

43. Մեր պատիժները զարկին զանոնք, և սակայն զղջում չը յայտնեցին երբէք. սրտերնին կարծրացաւ և Սատանան հրապուրեց զանոնք և տարաւ դէպ ի անհնաւ զանգութիւն :

44. Բայց մինչ անոնք անտեսելով մեր ազգարարութիւնները, հաճոյքներու մէջ կը սպառէին այն ինչքերը զորս չուայրէն տուած էինք իրենց, աստուածային վրէժիսնորութիւնը յանկարծակիի բերաւ զանոնք և յուսահատութեան մէջ նետեց :

45. Իրենց չարագործութեանց միջոցին բնաջինջ եղան (1). Իհնք Տիրոջը, տիեզերքի վեհապետին :

(1) « Այս չարագործ ժողովուրդը բնաջինջ եղաւ մինչև վերջին անհատը. »  
(Քաղիմերքի)

46. Ըսէ՛ անոնց . ի՞նչ կը կարծէք դուք , եթէ Աստուած զրկէր զձեզ լսելիքէ և տեսանելիքէ . եթէ ձեր սրբաւորուն վրայ կրնաք մը դնէր , իրմէ դատ ո՞վ կրնար վերջստին բանալ զանոնք . տես թէ քանի կերպով կը բացատրենք Աստուծոյ միութիւնը , և սակայն անոնք յամաւորէն զեռ կը մերժեն լոյսը :

47. Ըսէ՛ անոնց . ի՞նչ կը կարծէք դուք . եթէ երկնային պատիժները յանկարծակի և կամ հրապարակաւ իյնային ձեր վրայ , չէ՞ որ միայն ամբարիշտները զո՞ս պիտի երթային :

48. Մենք մարգարէներ կը զրկենք միայն անոր համար որ անոնք ազգերուն յայտնեն վարձատրութիւնները և պատիժները . ով որ հաւատացեալ է և առաքինի , երկիւզէ և չարչարանքէ զերժ պիտի ըլլայ :

49. Անոնք որ Իսլամութիւնը կ'անարգեն իրենց ամբարշտութեան պատիժը պիտի ստանան :

50. (Ըսէ անոնց .) Ես ձեզի չեմ ըսեր թէ երկնային քանձերը ձեռքիս մէջ ունիմ , թէ գաղանիքներուն ծանօթ եմ . ես ձեզի չեմ ըսեր թէ հրեշտակ մըն եմ , այլ ես կը քարոզեմ միայն ինչ որ յայտնուեցաւ ինձի : Միթէ կոյրը և ոչ-կոյրը միլենոյն քայլո՞վ կը քայլեն . չէ՞ք հասկնար այս բանը :

51. Քուրանը քարոզէ անոնց որ կ'երկնչին . յայտնէ անոնց որ Յաւիտենականին առջեւ պիտի հաւաքուին , որ ուրիշ պաշտպան և բարեխօս չպիտի ունենան Աստուծմէ դատ , որպէս զի իրենց քայլերը զգուշութեամբ առնին :

52. Մի՛ մերժեր զանոնք որ առտու իրիկուն Աստուծոյ կը դիմեն և կը փափաքին անոր ակնարկին արժանանալ . քեզի անկ չէ անոնց մտադրութիւնները դատել ,

ինչպէս որ անոնց չի վերաբերիր քուկիմներդ դատել : Եթէ մերժես զանոնք , անարդար գործ մը ըրած կ'ըլլաս :

53. Մենք այսպէս փորձեցինք մարդիկը մէկը միւսով , որպէս զի ըսեն . ասո՞նք են (մեր մէջէն անոնք) որ Տիրոջը չնորհները ընդունեցին : Միթէ Աստուած չի՞ գիտեր թէ որոնք են երախտապարտները :

54. Երբոր հաւատացեալները քեզի գան , ըսէ՛ անոնց . խողազութիւն ընդ ձեզ , Աստուած պարտականութիւն համարած է զթած ըլլալ . եթէ ձեր մէջէն մէկը անգիտակցաբար միզք մը գործէ և յետոյ զղջայ ու ուղղուի , աստուածային գութին պիտի արժանանայ :

55. Ահա այս կերպով է որ մենք կը բացատրենք Քուրանի պատուիրանները , որպէս զի ամբարիշտներուն ձամբան լուսաւորուի :

56. (Ըսէ անոնց .) Ինձի արգիլուած է պաշտել կուռքերը . եթէ ձեր փափաքներուն հետեւիմ , մոլորութեան մէջ կը մխրճուիմ և կը գաղբիմ լուսաւորուած ըլլալէ (և ձշմարիտ ձամբէն ընթանալէ) :

57. (Ըսէ .) Աստուծոյ կամքը իմ օրէնքս է , ու դուք անոր չէք հնազանդիր . ձեր ուղածները փութացնելը իմ ձեռքս չէ <sup>(1)</sup> . ձեր վիճակին մասին վճիռ մը տալը Աստուծոյ միայն կը պատկանի . արդարութեամբ պիտի գատէ անիկա . դատաւորներուն ամենէն լուսամիտն է <sup>(2)</sup> :

58. Ըսէ անոնց . եթէ իմ իշխանութեանս մէջ ըլլար փութացնել իր վճիռը (զոր դուք փութացնել կ'ուզէք)

(1) Ձեր ուղածները , այսինքն պատիժը . անհաւատները շարունակ կ'ըսէին Մուհամմէտի թէ ի՞նչ պատիժ որ պիտի տաս , շուտով տուր :

(2) « Վիճարանութիւնները վերջացնելու մէջ ամենէն ճարտուն է : »

մեր միջև գտնուած անհամաձայնութիւնը շուտով վերջ կը գտնէր. Աստուած գիտէ թէ որո՞նք են ամբարշտանները :

59. Անիկա իր ձեռքին մէջ ունի ապագայի (1) բանալին. միայն ինք գիտէ զայն. երկրի վրայ և ծովերուն յատակը եղածները գիտէ. տերև մը չիյնար առանց իր գիտութեան. երկրիս (աղջամուղջին) մէջ չկայ ցորենի հատիկ մը, (թարմ կամ չորցած շիւղ մը) որուն մասին գրուած չլլայ Յայտնութեան Գիրքին մէջ (2) :

60. Անոր կը պարտիք գիշերուան քունը և առտուան զարթնումը. գիտէ թէ ի՞նչ կ'ընէք ցերեկը. (օր մը ձեզի յարութիւն պիտի տայ) ձեր կեանքին ժամանակամիջոցին լրանալէն ետք. այնուհետև իր առջև պիտի ելլէք վերստին, և անիկա ցոյց պիտի տայ թէ ինչեր ըրած էք :

61. Իր ծառաներուն բացարձակ տէրն է. ձեզի իբր պահապան (և ձեր վրայ հսկող) հրեշտակներ տուած է ուրոնց պաշտօնն է ձեր օրերը վերջացնել կանխապէս նշանակուած ատենը. անոնք խնամով ի գործ կը դնեն երկինքի հրամանը (3) :

62. Այնուհետև դուք կը վերադառնաք ճշմարտութեան Աստուծոյն. միթէ անոր անկ չէ՞ դատաստան ընել, անոր՝ որ դատաւորներուն ամենէն արդարադատն է :

63. (Ըսէ՛ անոնց.) ո՞վ է ան որ զձեզ կ'ազատէ երկրի և ծովերու խաւարէն, երբ զայն օգնութեան կը կանչէք հրապարակաւ կամ գաղտնաբար, այսպէս գոչելով. Տէր, եթէ զմեզ ազատես այս փորձանքէն, քեզի երախտապարտ պիտի ըլլանք :

(1) « Գաղտնի բաներու »

(2) Յայտնութեան Գիրքը երկնային վճիռներու գիրքն է, ուր գրուած է թէ ի՞նչ եղած է, ի՞նչ կ'ըլլայ և ի՞նչ պիտի ըլլայ :

(3) « Ըր բարեգործութիւնները կ'ընդունին մեռնող անձը : »

64. (Ըսէ՛ .) Աստուած է որ զձեզ կ'ազատէ. իր բարութիւնն է որ կը պիտի ձեր վրայ ճշուող ձախորդութիւնները, և տակաւին դուք կուպաշտութեան կը դիմէք :

65. Ըսէ՛ անոնց. ինքն է որ կրնայ վիշտեր հաւաքել ձեր գլխուն վրայ, ձեր քայլերուն տակ անդունդներ բանալ, ձեր միջև անհամաձայնութիւն սերմանել և ումանց զգացնել այլոց անձկութիւնը : Տեսէք թէ ինչքան տարբեր ձեւերով ձեզի կը ներկայացնենք աստուածային ոյժը (1) :

66. Քու ժողովուրդդ իսկ սուրբ կը հռչակէ այն Գիրքը որ ճշմարտութիւնը կը պարունակէ. ըսէ՛ անոնց. ես ձեր պաշտպանն ըլլալէ դադրած եմ. ամէն նախագուշակութիւն իր որոշ ժամանակամիջոցը ունի(2). դուք պիտի տեսնէք (անտարակոյս) :

67. Փախի՛ր անոնցմէ որոնք կրօնքը կը նախատեն, և մի՛ մօտենար մինչև որ լեզունին չը փոխեն (3) : Երբ փորձիչ սատանան ձեզի մոռցնել տայ այս պատուէրները, ու երբ վերստին յիշէք զանոնք, մտքերնիդ բերէք որ անհաւատներուն հետ պէտք չէ նստիք :

68. Թող անոնք որ Տիրոջմէն կ'երկնչին, արհամարհանք միայն ցոյց տան անհաւատներուն հանդէպ ու զա-

(1) « Ահաւասիկ թէ ինչպէս կը կազմենք պատուիրանները ու զանոնք վերստին կը յօրինենք և գործադրութեան կը դնենք, յարմար տեսնին, որպէս զի անոնք վերջ ի վերջոյ հասկնան : » (Քաղեմիրաբի)

(2) « Ամէն մարգարէ իր տեղը ունի. »

(3) « Երբ տեսնես որ անհաւատները կը վիճաբանին մեր հրաշքներուն վրայ, հեռացիր անոնցմէ մինչև որ ուրիշ նիւթի մը վրայ խօսին : »

նոնք մտքերնին բերեն անոնցմէ խուսափելու համար <sup>(1)</sup> :

69. Հեռացի՛ր անոնցմէ, որոնք աշխարհային կեանքի հրապոյրներէն կուրացած, կը ծաղրեն կրօնքը. իմաց տուր անոնց որ կորստեան դատապարտուած յանցաւոր հոգիները ոչ մէկ պաշտպան (ուչ մէկ բարեխօս) պիտի գտնեն Աստուծոյ մօտ. փոխարէն ինչ գին որ տան իբր հատուցում, պիտի մերժուին. իրենց գէշ գործերուն իբր հատուցում եռացող ջուր պիտի ստանան ծարաւնին անցընելու համար. անհաւատարմութիւնը չարչարանքներո պիտի քաւեն:

70. Ըսէ՛ անոնց. ինչո՞ւ օգնութեան կանչենք այնպիսի չաստուածներ, որոնք ո՛չ կրնան օգնել մեզի և ոչ ալ վնասել: Ինչո՞ւ վերադառնանք մեր քայլերուն վրայ երբ այլևս լուսաւորուած ենք (ու Աստուած մեզի շիտակ ճամբան կ'առաջնորդէ) և ինչո՞ւ նմանինք անոնց որ հրապուրուած են սատանայէն (ու տարուած են աւնապատին մէջ) մինչ իրենց ընկերները փրկութեան ճամբան կը հրաւիրեն զիրենք (և կը գոչեն, մեզի ետէք.) ըսէ՛ անոնց. Աստուծոյ կրօնքն է միայն ճշմարիտը. մենք հրաման ստացանք Իսլամութիւնը ընդգրկել. ասիկա է կրօնքը տիեզերքի Աստուծոյն:

71. Ձեր աղօթքը (ճշգրտապահութեամբ) կատարեցէք, երկնչեցէք Աստուծմէ, դուք ամենքդ իր աստեանին առջև պիտի ելլէք:

(1) « Աստուծմէ երկնչողներէն հաշիւ չպիտի պահանջուի այս մասին, բայց անոնք պարտաւոր են յիշել պատուէրը, որպէս զի երկնչին Տիրօջմէն: » Իսլամները կ'առաքկէին որ եթէ պէտք ըլլար հեռանալ անհաւատներէն, ամէն անգամ որ անոնք նոր կրօնքը ծաղրէին, ո՛չ մէկ տեղ կարելի պիտի ըլլար մնալ վայրկեան մը իսկ. այս պատճառաւ Մուհամմէտ լրացուց 67րդ տունին իմաստը այս պատուէրով:

72. Անիկա երկինքի և երկրի ճարտարապետն է, ու երբ ուզէ էակները ստեղծել կ'ըսէ՝ եղիցի՛, և կ'ըլլայ:

73. Իր խօսքը ճշմարտութիւնն է. անիկա թագաւորն է այն օրուան <sup>(1)</sup> երբ փողը պիտի հնչէ. գիտէ յայտնի և գաղտնի բաները. տէր է իմաստութեան և գիտութեան:

74. Աբրահամ ըսաւ իր հօրը՝ Ազարին <sup>(2)</sup>. Աստուծոյ վայել պաշտամունքը կուրքերուն պիտի մատուցանես. գուն և քու ժողովուրդդ ամենախորունկ խաւարի մէջ էք:

75. Մենք (այսպէս) ցուցուցինք Աբրահամին՝ երկինքի և երկրի թագաւորութիւնը որպէսզի իր հաւատքը անխորտակելի ըլլայ:

76. Երբ գիշերը իր խաւարով պատեց զայն, ասող մը տեսաւ և գոչեց. ա՜հա՛ իմ աստուածս: Երբ աստղը անհետացաւ՝ ըսաւ. ես չպիտի պաշտեմ այն չաստուածները որոնք կ'անհետանան:

77. Երբ լուսինը տեսաւ՝ գոչեց. ա՜հա իմ աստուածս և երբ լուսինը անհետացաւ, անիկա յարեց. եթէ իմ (ճշմարիտ) Տէրս չլուսաւորէր զիս, պիտի մոլորէի:

78. Երբ արևելքէն արևը ծագեցաւ, անիկա գոչեց, ասիկա իմ աստուածս է. միւսներէն աւելի մեծ է այս: Բայց երբ արևն ալ մարը մտաւ, գոչեց. ո՛վ իմ ժո-

(1) Եսահա կ'ըսէ թէ՛ ասիկա այն օրն է ուր մահուան հրեշտակը պիտի կանգնի Երուսաղէմի մօտ լեռան մը վրայ, ու փողը պիտի փչէ, իր ձայնը լսելի ընելով Երուսաղէմէն մինչեւ Սինա լեռը, ու բոլոր մահկանացուներու հոգիները հոն պիտի հաւաքուին. երբ հրեշտակը փչէ, հոգիները հոյլ ի հոյլ պիտի երթան միանալ իրենց մարմիններուն: Այսպէս յարութիւն աւած մարդիկը պիտի երթան հոն, ուր կը կոչէ երկնային պատգամաւորին ձայնը:

(2) Որ կուսպաշա էր:

դովուրդս, ես ձեր չաստուածներուն պաշտամունքը կը մերժեմ:

79. Ճակատս բարձրացուցի դէպ անոր, որ երկինքը ու երկիրը կազմեց. ես կը պաշտեմ միակ Աստուածը, իմ ձեռքս երբէք խունկ չպիտի ծխէ կուռքերուն առջև:

80. Երբ ժողովուրդը անոր հետ վիճաբանութեան մտաւ, անիկա ըսաւ. Աստուծոյ միութեան մասին կ'ընդգիմախօսէ՞ք ինձի. անիկա զիս չիտակ ճամբան առաջնորդեց, ես չեմ վախնար ձեր կուռքերէն, իմ պաշտած Աստուածս ինչ որ ուզէ կ'ընէ, իր գիտութիւնը կը պարփակէ ամբողջ տիեզերքը. չէ՞ք գիտեր դուք:

81. Ինչո՞ւ վախնամ անոնցմէ զոր դուք Բարձրեալին հաւատար կը դասէք, (քանի որ դուք չէք վախնար չաստուածները անոր հաւատար դասելէ.) Աստուած այդ մասին թողտուութիւն չէ ըրած ձեզի. երկու կրօնքներէն ո՞րն է ճշմարիտը, ըսէ՞ք, եթէ գիտէք:

82. Անոնք որ կը հաւատան և իրենց հաւատքը չեն ծածկեր մոլորութեան վերարկուով, պիտի վայելեն խաղաղութիւնը և պիտի ընթանան փրկութեան ճամբայէն:

83. Ասոնք են Աստուծոյ միութեան արացոյցները զորս տուինք Արքանամին (որպէս զի գործածէ ընդդէմ իր ժողովուրդին.) Աստուած կը բարձրացնէ իրեն հաճոյ թուածները. գիտուն է սն և իմաստուն:

84. Անոր իբր զաւակ տուինք Իսահակը և Յակոբը, որոնք քայեցին հաւատքին ջահովը. աւելի առաջ լուսաւորած էինք Նոյը, իսկ Արքանամի սերունդին մէջէն մեր լոյսով առաջնորդեցինք Դաւիթը, Սողոմոնը, Յորը, Յովսէփը, Մովսէսը և Ահարոնը. մենք այսպէս կը վարձաւորենք առաքինութիւնը:

85. Արդարներուն դասէն էին նաև Զաքարիա, Յովհաննէս, Յիսուս և Եղիա:

86. Մենք իրենց նման մահկանացուներէ աւելի վեր բարձրացուցինք Իսմայէլը, Եղիսէն, Յովնանը, Ղովտը:

87. Մենք փրկութեան ճամբան առաջնորդեցինք զանոնք որ ընտրեցինք իրենց հայրերուն, եղբայրներուն և սերունդին մէջէն:

88. Այս է Աստուծոյ ճամբան. իր ծառաները առաջնորդելու համար այդ լոյսը կը գործածէ, բայց երբ մարդիկ կուպաշտուիւն կ'ընեն, իրենց գործերուն պատուը կը կորսնցնեն:

89. Այսպէս ըրին անոնք՝ որոնց տուինք նուիրական մատենաները, իմաստութիւնը և մարգարէութեան շնորհը. եթէ իրենց սերունդը արհամարհէ այս բարիքները, մենք հաւատացեալ ազգի մը պիտի փոխանցենք զանոնք:

90. Այսպէս եղան անոնք զոր Աստուած փրկութեան ճամբան առաջնորդեց. ուրեմն հետեւեցէք անոնց կրօնքին: Ըսէ՛ կուպաշտներուն. ո եւ է վարձ չեմ պահանջեր Քուրանին համար, անիկա ինձի զրկուեցաւ մարդոց լուսաւորութեանն համար:

91. Հրէաները ճշմարտութեան յարգ չեն ընծայեր երբ կը պնդէին թէ՛ Աստուած ոչ մէկ բան յայտնած է մարդոց. հարցո՛ւր անոնց. ո՞վ զրկեց Մովսէսին այն Գիրքը ուր կը փայլի ճշմարիտ լոյսը (և որ մարդոց առաջնորդն է) այն Գիրքը զոր (նրբաշերտեբու վրայ) կը գրէք (այն գիրքը զոր ցոյց կուտայք) և որուն մէկ մասը կը ծածկէք սակայն. ըսէ՛ անոնց. Աստուած զրկեց այդ Գիրքը: Քուրանը ձեզի սորվեցուց այն բանը զոր չէիք գիտեր, ինչպէս ձեր հայրերը չէին գիտեր: Զո՞ւ՞ զանոնք

որ միտքովն խաւարի տիղմերուն մէջ ուր կը տապալու-  
արկին (1) :

92. Այդ օրհնեալ Գիրքը երկինքէն իջեցուցինք նախ-  
կին նուիրական մատեանները հաստատելու համար, որ-  
պէս զի դուն զայն քարոզես (քաղաքներու մայր) Մէք-  
քէի մէջ և չրջակաները. անոնք որ հանդերձեալ կեան-  
քին կը հաւատան, այս Գիրքին ալ պիտի հաւատան, ու  
կէտ առ կէտ պիտի գործադրեն աղօթքի պատուէրները :

93. Ի՞նչ բան աւելի ամբարիշտ է քան Աստուծոյ  
հաշտոյն սուտեր խօսիլը, քան՝ ինքզինքին վերագրելը  
այնպիսի յայտնութիւններ որոնք երբէք եղած չեն, քան՝  
ըսելը թէ երկինքէն գիրք մը պիտի իջեցնեմ Աստուծոյ  
զրկածին յար և նման (2) : Ո՛հ, ի՞նչ անուելի տեսարան  
պիտի պարզուի երբ նենգամիտները մահուան տանջանք-  
ներու մէջ իյնան ու երբ հրեշտակը իր բազուկը անոնց  
վրայ երկարելով սա բառերը արասանէ. — Տուէ՛ք հո-  
գինիդ, այսօր զարհուրելի չարչարանքներու պիտի են-  
թարկուիք իբր արժանաւոր վարձատրութիւն ձեր նա-  
խատալից սուտերուն և այն գոռոզութեան, որով արհա-  
մարհեցիք Բարձրեալին կրօնքը :

94. Դուք մեզի կը վերադառնաք ամէն բանէ մեր-  
կացուած, այնպէս՝ ինչպէս ստեղծեցինք զձեզ. դուք ձեր  
ետին կը թողուք այն ինչքերը զորս չնորհած էինք ձեզի :  
Ո՛ւր են այն բարեխօսները զորս Աստուծոյ հաւասար կը  
դասէիք. զձեզ անոնց կապող կապերը խզուեցան, ա-

(1) «Թող անոնք պարապ խօսքերով ժամանակ անցընեն . . .  
(Քաղիմիւրքի)

(2) Մէկ քանի կեղծ մարգարէներ, ինչպէս Մոսայլամա և էլ  
Սօվատ, Մուհամմէտի օրով կ'ըսէին թէ իրենք ալ երկինքէն գիրք  
կրնան իջեցնել :

նոնցմէ սպասած պաշտպանութիւննիդ ջուրը ինկաւ (1) :

95. Աստուած կը զատէ ցորենահատիկը հասկէն և  
կուար՝ արմաւէն. անիկա մահէն կեանք կը ստեղծէ և  
կեանքէն՝ մահ. ձեր Տէրն է ան, ուրեմն ինչո՞ւ իրմէ  
երես կը դարձնէք :

96. Ան է որ արշարոյսը կը զատէ խաւարէն. ան է  
որ հաստատեց գիշերը հանգիստի համար. արեւը և լու-  
սինը ցոյց կուտան ժամանակին տոմարական հաշիւները.  
այս է հրահանն անոր որ հզօր և իմաստուն է :

97. Ան է որ աստղերը զետեղած է երկինքին վրայ,  
որպէս զի զձեզ առաջնորդին խաւարին մէջ, երկրիս և  
ծովերուն վրայ. իմաստունը ամբողջ տիեզերքին մէջ կը  
տեսնէ Աստուծոյ զօրութեան հետքերը :

98. Ան է որ կազմեց զձեզ ամենքդ միակ մարդէ  
մը. (ձեր հօրը երիկամունքին մէջ ընդունարան մը ու-  
նիք.) ան է որ սեղ մը կը պատրաստէ ձեր մօրը ծոցին  
մէջ. իմաստունը կը հասկնայ անոր զօրութեան ար-  
դիւնքները :

99. Ան է որ անձրեւ կ'իջեցնէ երկինքէն բոյսերու  
սերմերը պողարերելու համար. երկիրը դալարինելով կը  
ծածկէ. հասկերուն մէջ հաւաքուած ցորենահատիկները  
կը կազմէ. կ'աճեցնէ արմաւենիները և անոնց պտուղը  
որ ողկուզածեւ կը կախուի (արմաւենիներու ճիւղերէն.)  
դուք Աստուծոյ կը պարտիք այն խաղողները, ձիթապը-  
տուղները և նուռերը որոնք ձեր պարտէղիները կը ձո-  
խացնեն (և որոնք այնքան կը զանազանին իրարմէ.)  
աչքերնիդ սեւեռեցէք այդ պտուղներուն և անոնց պըտ-  
ղարերմանն ու հասունութեանը վրայ, և եթէ հաւատք

(1) « Աստուծոյ հաւասար դասածնիդ անհետացաւ . . . »

ունիք, պիտի հասկնաք թէ Բարձրեալին զօրութիւնը կա անոնց մէջ:

100. Անոնք ոգիները (1) Աստուծոյ հաւասար դասեցին. մինչդեռ Աստուած է որ ստեղծած է զանոնք. իրենց տգիտութեամբը Աստուծոյ վերագրեցին մանչեր և աղջիկներ. գովեալ է Աստուած, անիկա շատ վեր է այսպիտի անարգանքներէ:

101. Երկինքի և երկրի արարիչն է ան. ո եւ է կին չէ ունեցած, ինչպէ՞ս կրնայ զաւակ ունենալ. տիեզերքը իր ձեռակերտն է ու իր գիտութեամբ կ'ընդգրկէ ամբողջ տարածութիւնը:

102. Զեր Տէրը, ձեր Աստուածն է ան. իրմէ զատ ուրիշ Աստուած չկայ. բոլոր էակները անոր կը պարտին իրենց գոյութիւնը. պաշտեցէք զինքը. ամէն բանի վրայ կը հակէ ան:

103. Մարդոց աչքերը կը տեսնէ ան, մինչ մարդիկ չեն կրնար նշմարել իր աչքերը. բարութեամբ և իմաստութեամբ լեցուն է:

104. Իր կրօնքը ձեզի յայտնեց ան. ո՛վ որ իր աչքերը բացած է, լոյսը իրեն բաժին պիտի ըլլայ(2). ո՛վ որ փակած է, աչքերը, խաւարին մէջ պիտի մնայ: Աստուած երբէք ինծի տուած չէ ձեր վրայ պահապան ըլլալու հոգը:

105. Ահա այսպէս մենք կը բացատրենք իր վարդապետութիւնը (3), որպէս զի ըսեն քեզի. դուն լուսաւորուած ես, և որպէս զի յայտնենք կրօնքը իմաստուններուն աչքին առջեւ:

(1) Արարձերը կը կարծէին թէ ոգիները հրեշտակներուն և մարդոց միջեւ գտնուող արարածներն են:

(2) «Ո՛վ որ կը տեսնէ, ի նպաստ իրեն կը տեսնէ:»

(3) «Ահա այսպէս մենք կ'օգտագործենք ֆուբանի տունները.»

106. Աստուծոյ ներշնչումներուն հետեւէ. իրմէ զատ ուրիշ Աստուած չկայ. կռապաշտներէն հեռացիր:

107. Եթէ Աստուած ուզէր անոնք չպիտի պաշտէին չաստուածները. դուն անոնց ո՛չ պահապանը ո՛չ ալ պաշտպանը պիտի ըլլաս:

108. Մի՛ նախատեր բնաւ անոնց պաշտած չաստուածները, գուցէ անոնք ալ իրենց տգիտութեամբ զԱստուած նախատեն, (այսպէս է որ) մարդոց ցոյց կուտանք իրենց պարտականութիւնները. ամենքն ալ պիտի ելլեն Աստուծոյ առջև, որ ցոյց պիտի տայ պատկերն անոնց արարքներուն:

109. Անոնք հանդիսաւորապէս երգում բրած են Աստուծոյ առջև, որ եթէ հրաշք մը գործէ աչքերնուն առջև, այն ատեն պիտի հաւատան Աստուծոյ, ըսէ՛ անոնց. հրաշք գործելը Աստուծոյ կարողութեան սահմանին մէջ է բաց չի գործեր, որովհետեւ (անհաւատները) հրաշքը գործուելէն ետք ալ հաւատքի չպիտի գան:

110. Անոնց աչքերը և սրտերը ճշմարտութենէն պիտի հեռացնենք, (բանի որ) առաջին հրաշքին չհաւատացին պիտի ձգենք զանոնք որ թափառին մոլորութեան խաւարին մէջ:

111. Եթէ մինչև իսկ հրեշտակներ իջեցնէինք երկինքէն, եթէ մեռելները խօսէին իրենց, եթէ բոլոր հրաշքները անոնց առջև հաւաքէինք, դա՛րձեալ չպիտի հաւատային, եթէ Աստուած չլծոյլատրէր. (բայց) իրենցմէ մեծագոյն մասը կ'անդիտաւայ այս ճշմարտութիւնը:

112. Մարգարէներուն իբր թշնամի տուինք մարդոց և ոգիներուն փորձիչը (1). անիկա հրապուրիչ խօսքեր կը

(1) «Ահա՛ այս կերպով յարուցինք թշնամի մը իւրաքանչիւր մարգարէի դէմ, և փորձիչ սատանաներ, ոգիներուն և մարդոց մէջէն.»  
(Բապիմիրքի)

գործածէ զանոնք հրապուրելու համար. (եթէ Աստուած ուզէր, այս բանը չէր ըլլար.) հեռացի՛ր անկէ և իր սուտերէն:

113. Հանդերձեալ կեանքը ուրացողները ձգէ՛ իրենց սիրտերը բանան այն հրապուրներուն զորս շատ կը սիրեն. ձգէ՛ թող ստանան այն վարձքը որուն արժանի են:

114. Աստուծոյ զատ ուրիշ դատաւոր ինչո՞ւ վնասուած պիտի. ան է որ երկիրքէն զրկեց Քուրանը, (մաս առ մաս) անոր մէջ բարին ու չարը կը ռուսած են. Հրէաները գիտեն թէ Քուրանը իրապէս երկիրքէն իջած է. ուրեմն չ'ըլլայ որ կասկածիս:

115. Աստուծոյ խօսքը կը կատարուի ճշմարտութեամբ և արդարութեամբ<sup>(1)</sup>. ոչ մէկ բան կրնայ փոխել իր պատուէրները. ամէն ինչ գիտէ և կ'իմանայ ան:

116. (Այս երկրին մէջ ապրող) մարդիկը մեծ մասամբ սուտերէ և կարծիքներէ կ'առաջնորդուին. եթէ հետեիս անոնց, Աստուծոյ ճանապարհէն պիտի հեռացնեն զքեզ:

117. Աստուած, (Քու Տէրդ) ամենէն աղէկ գիտէ թէ ո՞վ մոլորութեան մէջ է, և ո՞վ լուսաւորուած է հաւատքով:

118. Եթէ կը հաւատար իրեն, կերէ՛ք միայն այն կենդանիները որոնց վրայ Աստուծոյ անունը կոչած էք:

119. Եւ ինչո՞ւ չպիտի հետեւէիք այս պատուէրին, քանի որ Աստուած գիտցուցած է ձեզ արգիլուած ուտելիքներուն անունները. միայն հարկեցուցի՛չ պարագաներու մէջ անոնք թոյլատրելի կ'ըլլան: Մարդիկ մեծ մասամբ կը մոլորին<sup>(2)</sup> հրապուրուելով իրենց կիրքերէն և կուրացած՝ իրենց ազգիտութենէն. բայց Աստուած կը ճանչնայ ամբարիշտները:

(1) «Քու Աստուծոյ խօսքը լուսն է ճշմարտութեան և արդարութեան.» (2) «Ուրիշները կը մոլորեցնեն»

120. Ոճիր<sup>(1)</sup> մի՛ գործէք, գաղտնապէս թէ յայտնապէս, որովհետեւ չարագործները պիտի ստանան իրենց արժանի վարձքը:

121. Մի՛ ուտէք բնաւ այնպիսի կենդանիներ, որոնց վրայ կոչուած չէ Աստուծոյ անունը. ոճիր է: Սատանաները գիրենք պաշտողները պիտի թելադրեն այս մասին վիճարանիլ ձեզի հետ. եթէ տեղի տաք, կուսպաշտ պիտի ըլլաք:

122. Ան՝ որ մեռած էր, և որուն տուինք կեանք և լոյս, որպէս զի մարդոց մէջ շիտակ ճամբէն ընթանայ, միթէ նման պիտի ըլլայ անոր՝ որ խաւարի մէջ մխրձուած է, և անկէ դուրս չպիտի ելլէ բնաւ: Չարամիտներուն աչքին՝ ոճիրը կը գեղեցկանայ<sup>(2)</sup>:

123. Իւրաքանչիւր քաղաքի մէջ ապիրատներ գրինք, որպէս զի խաբեն<sup>(3)</sup> բայց անոնք միայն ինքզինքնին կը խաբեն, և չեն գիտեր:

124. Մէքքէի բնակիչները հրաշքի մը ականատես ըլլալէ ետք ըսին. մենք չպիտի հաւատանք, մինչեւ որ չտեսնենք մարգարէներուն գործածին նման հրաշքեր: Աստուած (ամենէն աղէկ) գիտէ թէ ո՞ւր պիտի ուղղէ իր առաքելութիւնը: Յանցաւորները նախատինքի և չարաչար տանջանքներու պիտի ենթարկուին, ի վարձ իրենց անօրէնութեանց:

(1) «Մեղք»

(2) «Ահա՛ այս կերպով անհաւատներուն գործերը առաջուքնէ կը պատրաստուին»

(3) «Այնպէս մը ըրինք, որ ամէն մէկ քաղաքի մեծամեծները ոճրագարս մարդիկ ըլլան» կը թարգմանէ Քաղիմիբեքի, և կը յարէ թէ Մուհամմէտ կ'ակնարկէ Մէքքէի հարուստներուն և ազգեցեկներուն, որոնք ժողովուրդը իրեն դէմ կը հանէին:

125. Ատուուած (Իսլամին համար) պիտի բանայ սիրտըն անոր զոր լուսաւորել կ'ուզէ. Իսլամութեան քաղցրութիւնները ճաշակել պիտի տայ. իսկ ան՝ զոր պիտի մոլորեցնէ, ճնշուած սիրտ մը պիտի ունենայ նման անոր որ կը տապալակի բարձրանալու համար: Անհաւատներուն պատիժը անա անյս պիտի ըլլայ:

126. Ասիկա Ատուուծոյ կրօնքն է. ճշմարիտ է ան. արդէն (մանրամասնօրէն) բացատրած ենք անոնց՝ որ մըտացի են:

127. Ատուուած անոնց պատրաստած է խաղաղութեան բնակավայրը. ի վարձատրութիւն իրենց արարքներուն, անոնց պաշտպանը պիտի ըլլայ:

128. Այն օրը՝ ուր ամենքը պիտի հաւաքուին Ատուուծոյ առջեւ, ոգիներուն պիտի ըսենք. ո՞վ սղիններ, դուք խաբեցիք մարդիկը: Տէր, պիտի ըսեն զիրենք պաշտողները, անոնք մեզմէ չատերուն օգնութեան հասան (մենք փոխադարձ ծառայութիւններ կը մատուցանէինք) այս կեանքի ընթացքին որուն նախասահմանուած վախճանին հասանք անա: Ատուուած պիտի պատասխանէ. կըրակը պիտի ըլլայ ձեր բնակավայրը. հոն պիտի կենաք (յաւիտենապէս) և իմ կամքովս: Բարձրեալը գիտուն է և խմաստուն:

129. Յանցաւորները, իրենց արարքին համեմատ, զատկարգերու պիտի բաժնենք (1):

130. Չայն մը պիտի դռչէ. ո՞վ հաւաքոյթ մարդոց և ոգիներու. դուք ձեր մէջ չունեցա՞ք միթէ (ձեր մէջէն բնորոտ) Ատուուծոյ մարդտրէները. միթէ անոնք չյայտնեցին իր հրաշալիքները. մեծ օրուան յիշատակը չարթընցուցին միթէ ձեր մէջ: Անհաւատները պիտի պա-

(1) « Չարերուն մէջէն ոմանք պիտ կը կարգենք միւսներուն »

տասխանեն. հակառակ մեզի կը խոստովանինք: Այս աշխարհի կեանքը հրապուրած էր զանոնք. անոնք պիտի խոստովանին թէ անհաւատ եղած են:

131. Եւ ասիկա այսպէս եղաւ (1). Ատուուած մարգարէներ զրկեց անոնց, որովհետեւ անիկա չի պատժէր բնաւ յանցաւոր քաղաքները, բնակիչներուն ազդարարելէ առաջ:

132. Արժանիքներուն համաձայն պիտի տրուին վարձատրութիւնները (2). Ատուուած ուշադիր կը զիտէ ձեր արարքները:

133. Ատուուած հարուստ և ողորմած է. եթէ ուզէ կրնայ զձեզ բնաջինջ ընել և նոր մարդիկ բերել ձեր տեղը, ինչպէս որ ձեզ ծնեցուց նախկին սերունդներէն:

134. Իր խոստումները (3) պիտի իրագործէ, և դուք չէք որ պիտի կարենաք ջնջել (Ատուուծոյ վճիռները):

135. Ըսէ՛ մարդուն (4). ոյժերուդ համաձայն աշխատէ, ես ալ իմ կարողութեանս համարատասխան պիտի ընեմ բարիքներս:

136. Պիտի տեսնէք թէ որոնց առջև պիտի բացուի արքայութիւնը. կռապաշտները բնաւ չպիտի վայելեն (ատուուածային) երջանկութիւն:

137. Անոնք (Ատուուծոյ ծնեցուցած) հունձքին և հօտերուն մէկ մասը Ատուուծոյ կուտան, և մէկ մասն ալ՝ իրենց չատուածներուն. Ատուուած մերժեց ընդունիլ ա-

(1) Ատուուած քաղաք մը պատժելէ առաջ մարգարէներ կը զրկէր, որոնք պաշտօն ունէին ազդարարելու:

(2) « Ամէն հոգի իր արարքներուն համապատասխան աստիճան մը պիտի գրաւէ. »

(3) « Սպառնալիքները » (4) « Ժողովուրդիք »

նոնց ընծան, և անոնք կուռքերուն մատուցին զայն . որ-  
քան սխալ են իրենց դատողութիւնները (1) :

138. Իրենց հաւատալիքները հաստատելու և իրենց  
նմանները անդունդին մէջ քաշելու համար կուսպաշտները  
պարծանք կը համարէին իրենց զաւակները սպաննել : Ե-  
թէ Աստուած ուզէր, կրնար արգիլել այս բարբարոսու-  
թիւնը . (բայց ձգէ որ ուզածնին ընեն .) անոնցմէ և անոնց  
հնարած սրբապղծութիւններէն հեռացի՛ր :

139. Անոնք կ'ըսեն . այս ինչ կենդանիները և այն  
ինչ հունձքերը արգիլուած են . ստանց մեր արտօնու-  
թեան ոչ ոք պիտի կրնայ մտանիլ անոնցմով . երևա-  
կայական վճիռներու մէջ կը մոլորին . կենդանիներ ու-  
նին, որոնց բնու կրել չեն տար . ուրիշ կենդանիներ կը  
մեռցնեն, ստանց Աստուծոյ անունը յիշելու . իրենց բո-  
լոր սուտերը Աստուծոյ վրայ կը նետեն . Աստուած անոնց  
արարքներուն համաձայն պիտի տայ վարձքը :

140. Անոնք կ'ըսեն . (այսինչ) կենդանիներու ըն-  
դերքը (2) թողատրուած է այր մարդոց (3) և արգիլուած  
է կիներուն . բայց ամենքն ալ կ'ուտեն մեռած կենդա-  
նիին սաղմը (վիժած) : Աստուած պիտի հատուցանէ իրենց  
արարքները . զխտուն և իմաստուն է ան :

(1) Կուսպաշտ Արարները սովոր էին երկու մասի բաժնել ի-  
րենց հողերը, պտուղները և հունձքը . մէկ մասը գերագոյն Աստու-  
ծոյ կը յատկացնէին, միւսը՝ կուռքերուն . Աստուծոյ բաժինը կը  
գործածէին սնուցանելու համար աղքատները և ուղեւորները . իսկ  
կուռքերուն բաժինը կը նուիրէին իրենց կրօնաւորներուն . եթէ Աս-  
տուծոյ սահմանուած պտուղ մը իշնար կուռքերուն սահմանուած  
հողին մը վրայ, կուռքին կուտային զայն, որովհետեւ Աստուած  
հարուստ ըլլալով պէտք չունի, կ'ըսեն : (Քաղմիրաբէ)

(2) « Զաբը » (3) « Մեր մանչերուն »

141. Անդունդը կրնաւ է զանոնք որ իրենց կոյր  
ազիտութեանը մէջ կը սպաննէին իրենց սպաքները, և  
սուտերու վրայ յենլով՝ կ'արգիլէին այն ուտեստները  
զորս թողատրուած է Աստուած : Անոնք մոլորած են և ճշ-  
մարիտ ճամբուն մէջ չեն ընաւ :

142. Աստուած է որ կը բուսցնէ տունկերը և ծա-  
ռերը որոնք կը զարգարեն ձեր պարտէզները . ան է որ  
կը ծաղկեցնէ ձիթապտուղները, (արմաւենիները և տե-  
սակ տեսակ ցորենները,) նարնջենիները, (նունենիները,) և  
բազմազան պտուղներ որոնց ձեւն ու համը անքան տար-  
բեր են : (Անիկա ըսաւ .) ձեզի եղած ընծաներով մտանե-  
ցէք, և հունձքի օրը տասանորդը տուէք . զգուշացէք  
մտիտ մտերէ . Աստուած չի սիրէր չապրութիւնը :

143. Ձեր ընտանի կենդանիներուն մէջ կան որ  
ստեղծուած են բնու կրելու համար, և կան ալ որ անկա-  
բող են այդ բանին (1) . կերէ՛ք այն կենդանիները որոնց  
միտը թողատրուած է ձեզի, և մի՛ անսաք ստատանային  
հրապոյրներուն, որովհետեւ ձեր յայտնի թշնամին է ան :

144. Կուսպաշտները կը պնդեն թէ Աստուած արգի-  
լած է ութը զոյգ կենդանի (2) . ստանցմէ երկու զոյգը ոչ-  
խարի ցեղէն են և երկուքը՝ այծի . հարցո՛ւր իրենց . Աստ-  
ուած էզե՛րը թէ արունները արգիլեց, թէ՛ էզերուն կրած  
սաղմերը արգիլեց . բանուոր պատասխան մը տուէք ին-  
ծի, եթէ անկեղծ էք :

145. Անոնք կ'ըսեն զարձեալ թէ Աստուած արգի-  
լեց երկու զոյգ ուղտեր և երկու զոյգ եզներ . հարցո՛ւր  
անոնց . Աստուծոյ արգիլածները արուններն են թէ՛ էզերը ,

(1) « Եւ ոմանք ալ սպաննուելու համար - » (Քաղմիրաբէ)

(2) « Ութը տեսակ արջաւ, որոնք զոյգեր կը կազմեն . »

կամ թէ՛ էգերուն ընդերքին մէջ գտնուածնն<sup>6</sup> ըն են . դուք ներկայ էիք երբոր Աստուած այս պատուէրը տուաւ . ի՞նչ կայ աւելի ամբարիշտ քան Աստուծոյ վերագրել սուտ մը , տգէտ մարդիկը մոլորեցնելու համար : Անտարակոյս Աստուած չպիտի առաջնորդէ նենգամիտները :

146. Ըսէ՛ անոնց . ուտեստի մասին ինձի յայտնած օրէնքին մէջ արգելք դրուած է միայն մտած կենդանիները ուտելուն դէմ , ինչպէս նաեւ խոզի միսին և (հոտոլ) արիւնին դէմ<sup>(1)</sup> . ասոնք ուտելը սրբապղծութիւն է . նըմանապէս արգիւրած է ուտել այն կենդանիները , որոնց վրայ Աստուծոյ անունը չէք կոչեր (սպաննած ատեննիդ) : Ան որ անհրաժեշտ հարկէ մղուած և ո՛չ թէ իր փափաքը զոհացնելու կամ անհնազանդ ըլլալու համար այս պատուէրը ոտնակոխ ընէ , Աստուծոյ գութին պիտի արժանանայ :

147. Գալով Հրէաներուն , մենք անոնց արգիլեցինք բոլոր այն կենդանիները որոնց ոտքին կճղակը ձեղքուած չէ . անոնց արգիլեցինք նաեւ եզան և ոչխարի ճարպը , ի բաց առեալ կոնակի , աղիքներու և ոսկորներու հետ խառնուած ճարպը . այս արգելքը դրինք ի պատիժ իրենց ոճիրներուն . մենք արդարադատ ենք :

148. Եթէ զքեզ ամբաստանեն իբր խաբւբայ , ըսէ՛ անոնց . ձեր Աստուածը անհուն գթութեամբ լեցուն է , բայց ապիրատներուն պիտի զպացնէ իր վրէժինդրութիւնը :

149. Կռապաշտները պիտի ըսեն որ՝ եթէ Աստուած ուղէր , ո՛չ մենք ո՛չ ալ մեր հայրերը խունկ պիտի ծիւէին կուռքերուն առջև , բայց մեզի արգելք մը դնող չ'եղաւ :

(1) Լեարդը և հորթի թոքը զոր Արարները կը նկատէին թանձր-բացած արիւն , արգելուած չէին , որովհետեւ փութանը կ'արգիլէ միայն հեղուկ արիւն ուտելը :

Այս լեզուն գործածեցին նաեւ անոնք (այն մարդարէնե-րուն) որ իրենցմէ առաջ եկան , մինչև այն վայրկեանը երբ մեր պատուհասները թափեցան անոնց գլխուն . պատասխանէ՛ անոնց . եթէ այս խօսքերնիդ հիմ մը ունի , հասկցուցէ՛ք մեզի . բայց դուք կարծիքէ միայն կ'առաջ-նորդուիք և անպարկեշտօրէն կը ստէք :

150. Ըսէ՛ անոնց . միայն Աստուծոյ վճիռը ճշմարիտ է . եթէ ան ուղէր զձեզ բոլորդ կը լուսաւորէր :

151. Ըսէ՛ անոնց . ո՞ւր են ձեր վկաները որոնք կարենան վկայել թէ Աստուած արգիլած է ձեր ըսած կենդանիները . եթէ երբէք վկայութիւն ալ տան , չ'ըլլայ որ դուն ալ անոնց պէս ընես : Մի՛ հետեւիր անոնց՝ որոնք Իսլամութեան դէմ կը խօսին<sup>(1)</sup> , ո՛չ ալ անոնց՝ որոնք կ'ուրանան հանգերձեալ կեանքը և կուռքերուն խունկ կը ծխեն :

152. Ըսէ՛ անոնց . եկէ՛ք և ես ձեզի պիտի իարգամ թէ ի՞նչ բան արգիլած է ձեր Աստուածը : Ոչ ոք Աստուծոյ հաւատար դասեցէք . ձեր ազգականներուն բարիք ըրէք . աղքատութենէ վախնալով ձեր սղաքը մի՛ սպաննէք<sup>(2)</sup> . մենք ձեզի պիտի տանք հարկ եղած սնունդը , թէ՛ անոնց և թէ ձեզի համար : Թէ՛ հրապարակային և թէ գաղտնի ոճիրէ<sup>(3)</sup> խուսափեցէք . ձեր նմանները մի՛ սպաննէք բնաւ , տարբեր խնդիր է եթէ արդարութիւնը այնպէս կը պահանջէ . Աստուծոյ արգելքը բացարձակ է այս մասին : Ահա ասոնք են Աստուծոյ պատուէրները զորս կուտայ ձեզի , որպէսզի իմաստուն դառնաք (վերջապէս) :

(1) « Մի՛ փնտեր համակրանքը անոնց՝ որոնք սուտ կը հըռ-չակեն մեր նշանները . » (Քաղիմիւրքի)

(2) Կռապաշտ Արարները սովոր էին իրենց տղաքները սպանել սովի միջոցին : (3) « Ամօթալի գործերէ »

153. Մի՛ գպչիք բնաւ, որբերու ստացուածքին. տարբեր խնդիր է եթէ կ'ուզէք արգիւնաւորել զայն, մինչև որ որբը չտիւնաւորութեան տարիքը թեւակոխէ: Կշտելու և չափելու մէջ արդար եղէք. ամէն մէկէն իր կարողութեան չափով բան պիտի պահանջենք: Չեր խօսքերուն, ձեր երգումներուն (և վճիտներուն) մէջ ճշգրիտ եղէք, եթէ նոյն իսկ ձեր անձին դէմ<sup>(1)</sup> խօսիլ պէտք ըլլայ: Անա ասոնք են Աստուծոյ պատուէրները, մտքերնիդ պահեցէք զանոնք:

154. Փրկութեան ճամբան այս է. ուզիլ է այդ ճամբան. մի՛ հետեւիք այնպիսի ճամբաներու որոնք զձեզ մտորեցնէին թերեւս. Աստուած պատուէրներ կուտայ ձեզի, որպէսզի երկնչիք իրմէ:

155. Մենք սուինք Մովսէսին օրէնքի տախտակները (կատարեալ գիրքը,) որոնք արգարները կ'առաջնորդեն դէպի կատարելութիւն. անոր մէջ Հրէաները կը գտնեն ամէն բանի մասին մանրամասն բնագորութիւն, լոյս, գթութիւն և հանդերձեալ կեանքի վրայ հաւատք:

156. Հաւատացէ՛ք Քուրանին զոր երկինքէն իջեցուցինք. օրհնեալ Գիրք մըն է ան. (հետեւեցէք անոր) և երկնչեցէք Տիրոջմէն, որպէս զի իր գթութեան արժանաբ:

157. Դուք այլևս չպիտի ըսէք թէ մեզմէ առաջ երկու ազգեր<sup>(2)</sup> երկինքէն ընդունեցին նուիրական մատեանները, և թէ դուք ուսումնասիրած չէք զանոնք:

158. Դուք այլևս չպիտի ըսէք որ եթէ ձեզի ալ գիրք մը զրկուած ըլլար, անոնցմէ աւելի լուսաւորուած

(1) « Ազգականի մը դէմ » (Քաղիմիրքի)

(2) Քրիստոնէաները և Հրէաները:

պիտի ըլլայիք. դուք արդէն ստացաք աստուածային պատգամները, լոյս և երկնային շնորհներ: Արդ՝ որբա՛ն ան օրէն արարք մըն է անարգել սուրբ կրօնքը և անկէ ուժանալ: Մեր կրօնքը մերժողներուն վերապահած ենք սարսափելի պատիժ մը որ արդար վարձքն է իրենց անհնազանդութեան:

159. Արդեօք անոնք կը սպասեն որ հրեշտակները զան, կամ Աստուած ինքը անձամբ գայ, և իր նշանները ու վրէժները երեւան զան. այն օրը ուր Աստուած ցոյց տայ զանոնք, հաւատքը անօգուտ պիտի ըլլայ անոր՝ որ մինչև այն ատենը հաւատացած չէր և բարիք գործած չէր: Ըսէ՛ անոնց. եթէ դուք սպասէք, մենք ալ պիտի սպասենք:

160. Չ'ըլլա՛յ որ անցնիս անոնց կողմը՝ որոնք իրենց կրօնքին մէջ պառակտուած ըլլալով, տարբեր տարբեր յարանուանութիւններ կազմած են. Աստուծոյ միայն անկ է դատել զանոնք և ցոյց տալ իրենց արարքները:

161. Ո՛վ որ բարիք մը գործէ, տասնապատիկ աւելի պիտի վարձատրուի. ո՛վ որ չարիք մը գործէ, միայն այդ չարիքին համարժէք պատիժ մը պիտի ընդունի. ոչ ոքի անարդարութիւն պիտի ըլլայ:

162. Ըսէ՛ անոնց. Աստուած զիս առաջնորդեց ու զիլ ճամբուն մէջ և ինձի սորվեցուց սուրբ կրօնքը, հաւատքը Արբահամի՝ որ հաւատաց միակ Աստուծոյ և որ մերժեց խունկ ծխել կուռքերուն:

163. Ըսէ՛ անոնց. իմ աղօթքս, իմ հաւատքս, իմ կեանքս և իմ մահս Աստուծոյ կը պատկանին. անիկա տիեզերքի վեհապետն է. ոչ ոք անոր հաւատար է. ինքը հրամայեց այսպէս հաւատալ, ու ես առաջինն եմ Իսլամներուն:

164. Ինչո՞ւ պիտի փնտռեմ աշխարհը կառավարող Աստուծո՞ւն զատ ուրիշ մը . ամէն մարդ իր գործերուն հաշիւը պիտի աայ, ոչ ոք ուրիշին բերը պիտի կրէ . մարդիկ բոլորն ալ Աստուծոյ ատեանին առջեւ պիտի ելլեն . Աստուած անոնց պիտի ըսէ թէ՛ ի՞նչ բանի մէջ հեռացան իր պատուէրներէն :

165. Ան է որ զձեզ հաստատեց երկրի վրայ, նախորդ սերունդներուն անգը լեցնելու համար . մէկը միւսէն աւելի վեր կը բարձրացնէ ան, որպէս զի (այս կերպով) փորձութեան ենթարկէ զձեզ : Աստուած արագ է իր պատիժներուն մէջ, բայց նաեւ գթած և անյիշաչար է :

## ՎԵՐՋ Զ. ԳԼՈՒԽԻ

## ԳԼՈՒԽ Է.

### Է Լ Ա Ր Ա Ֆ (1)

Տրուած՝ Մեքէի մէջ . — 205 տուն

Յանուն ողորմած եւ անյիշաչար Աստուծոյ .

1. ԷյիՖ, լամ, միմ, սաս : Ահաւասիկ այն Գիրքը (Քուրանը) որ երկինքէն զրկուեցաւ քեզի . (անոր մասին սրտիդ մէջ ո եւ է անհանգստութիւն թող չ'ըլլայ) և մի՛ վախնար զայն գործածելու՝ չարերուն սպառնալու և հաւատացեալները քաջալերելու համար :

2. Հետեւեցէք այն կրօնքին որ Աստուծո՞ւն եկած է ձեզի . իրմէ զատ ուրիշ պաշտպան մի՛ ունենաք . որքան քիչերը պիտի անսան այս խորհուրդներուն (2) :

3. Քանի՛ քաղաքներ կործանեցինք (երբ մեր զայրոյթը իջաւ անոնց վրայ) գիշերուան խաւարին մէջ կամ օրը ցերեկով, մինչ բնակիչները հանգիստի քաղցրութիւնները կը վայելէին :

4. Մեր վրէժխնդրական արարքներէն հայածուած՝ անոնք կը գոչէին . այս՛, յանցանք գործեցինք (ամբարիշտ եղանք) :

(1) Էլ Արաճը անունն է այն պատին որ կը կանգնի դժոխքին և արքայութեան մէջտեղը . դատապարտեալները հոն կը զատուին արքայութիւն գացողներէն : Տեսակ մը քաւարան է Էլ Արաճը, որ սահմանուած է՝ իրենց ծնողաց կամքին հակառակ նուիրական պատերազմ մղողներուն : (Ճէլալէտտին)

(2) «Որքան քիչ կը մտածէք այս բաներուն վրայ» (Քազիմիրքի)

5. Հաշիւ պիտի պահանջենք այն ժողովուրդներէն, որոնց մարգարէներ զրկեցինք, և նաև հաշիւ պիտի պահանջենք մեր մարգարէներէն:

6. Մենք գիտակցաբար անոնց աչքին առջև պիտի ներկայացնենք ըրածնին, որովհետև ակամատես էինք մենք:

7. Մեծ օրուան դատատանը արդար պիտի ըլլայ. անոնք որ կշռուին (և ծանր գան) և կշիռին նժարը հակեցնեն, երանութիւն պիտի վայելն (<sup>1</sup>):

8. Անոնք՝ որոնց գործերը կշռուելով պակաս պիտի գան, պիտի կորսնցնեն հոգինին, որովհետև մեր կրօնքը արհամարհեր էին:

9. Մենք զձեզ հաստատեցինք աշխարհի վրայ, մենք ձեզի ուտելիք տուինք. որքան քիչ երախտագէտ էք:

10. Մենք ստեղծեցինք և կազմեցինք զձեզ նախամարդով. յետոյ ըսինք հրեշտակներուն, պաշտեցէ՛ք Ազամը, և անոնք պաշտեցին. միայն էպլիս մերժեց պաշտել:

11. Աստուած ըսաւ անոր. ինչո՞ւ չես հնազանդիր իմ հրամանիս, (ինչ բան կ'արգիլէ զքեզ): Էպլիս պատասխանեց. ես Ազամէն աւելի գերազանց խմոր մը ունիմ. դուն զիս ստեղծեցիր հուրէն, մինչ զայն ստեղծեցիր անշահ հողէն:

12. Աստուած հրամայեց. կորսուէ՛, գնա՛ այս տեղէն. արքայութիւնը գոռոզներուն տեղը չէ. փախիր, գնա՛, արհամարելիներուն կարգը պիտի զատուիս:

(1) Մասնատակմաները պարտին հաւատալ թէ մահկանացուներուն արաբները կշռող կշիռքին նժարները երկնքի և երկրի տարածութեան չափ ընդարձակ պիտի ըլլան: (Եւ Կազէլ)

13. Անհնազանդ հրեշտակը այն ատեն յարեց. պատիժ յետաձգէ մինչև յարութեան օրը:

14. Լա՛ւ, ըսաւ Ամենակարողը:

15. Քանի որ փորձեցիր զիս, յարեց էպլիս, պիտի աշխատիմ մարդիկը մոլորեցնել քու (չիտակ) ճամբայէդ:

16. Յարձակումներս պիտի բազմապատկեմ. որոգայթ պիտի լարեմ, անոնց աջ ու ձախ կողմերը, ետին և առջին: Շատ քիչերը միայն քեզի երախտագիտական ցոյցեր պիտի ընեն:

17. Յաւիտենականը սա բառերը արտասանեց. կորսուէ՛ արքայութեանէն, նախատինքով ծածկուած և ատանց ներողութեան արժանանալու յոյսի. քեզի հետևողները դժոխքի ընկերներդ պիտի ըլլան (<sup>1</sup>):

18. Իսկ դուն, ո՛վ Ազամ, կողակցիդ հետ բնակէ՛ արքայութեան մէջ, ու հոն բուսնող բոլոր պտուղներէն կերէք ուղածնուզ չափ. միայն թէ մի՛ մօտենաք սա ծառին, գուցէ մեղքի մէջ ինչաք:

19. Աստանան անոնց թելադրութիւնները ըրաւ, աչքերնին բանալու և ցոյց տալու մերկութիւննին (զոր մինչև այն ատենը չէին տեսած) և ըսաւ. Աստուած արգիլեց ուտել այս ծառին պտուղէն, որովհետև կը վախնայ որ եթէ ուտէք երկու հրեշտակներ կ'ըլլաք ու կ'անմահանաք:

20. Երբումով վստահացուց զանոնք որ ճշմարիտ կը խօսի և իրենց հաւատարիմ խորհրդակամն է:

21. Այս ծուղակէն խարուելով, անոնք կերան արգիլուած պտուղը, և անմիջապէս տեսան թէ մերկ են.

(1) « Եւ ո՛վ որ քեզի հետեւի . . . դժոխքը պիտի լեցնեմ ձեզմով: » (Քաղեմիւրքի)

սկսան ծածկուելի (պարտէզին մէջ գտնուող) տերեւներով<sup>(1)</sup> Աստուած գոչեց. ո՛վ Ադամ, քեզի արգիլած չէի՞ այս ծառին պտուղը ճաշակելը, քեզի չ'ազդարարեցի՞ որ սասանան ձեր թշնամին է:

22. Մնոնք պատասխանեցին, Տէր, յանցաւոր ենք, և եթէ գութդ չչնորհես մեզի, ստուգապէս կորուած ենք:

23. Աստուած ըսաւ. վա՛ր ի՞նչք, իրարու թշնամի եղաք այլևս<sup>(2)</sup>. երկիրը պիտի ըլլայ ձեր բնակավայրը և առժամեայ վայելքը:

24. Հոն պիտի ապրիք, հոն պիտի մեռնիք. հոնկէ յարութիւն պիտի առնէք որ մը:

25. Ո՛վ Ադամի զաւակներ, ձեզի զգեստ զրկեցինք որպէս զի մերկութիւննիդ ծածկէք. (զրկեցինք նաև թանկագին զարդեր) բայց ամենէն թանկագին ծածկոցը բարեպաշտութիւնն է: Ահա ատնք են Աստուծոյ պատուիրանները. (թերեւս) մարդիկ խորհրդածեն անոնց վրայ:

26. Ո՛վ Ադամի զաւակներ. թող սատանան չհրապուրէ զձեզ, ինչպէս հրապուրեց ձեր հայրերը. արքայութենէն վտարուելիւն պատճառ եղաւ, երբ զանոնք ծածկող քողը ձգելով մերկութիւննին երևան հանեց. սատանան և

(1) Արար մեկնիչներէն Եսայեա կ'ըսէ որ ինքը Մուհամմէտի բերնէն լսեր է հետեւեալը. — Ադամ բարձր արմաւենիի մը հասակը ունէր. ուսերուն վրայ երկարած էին մազերը. իբ անհնազանդութենէն վերջ նշմարեց թէ մերկ է և փախաւ ծածկուելու համար. մազերը ծառի մը կառչեցան, որով կանգ առաւ. ձգէ՛ զիս, ըսաւ Ադամ. ծառը պատասխանեց՝ գնա՛. յետոյ Ադամ լսեց Աստուծոյ ձայնը որ զինքը կը կանչէր, և ըսաւ՝ կ'ամչնամ երեւալու:

(2) Այսինքն թէ՛ մարդիկ և սատանան՝ յաւիտենապէս թըլշնամի եղան իրարու: (Քաղեմիրսքի)

իր արբանեակները կը տեսնեն զձեզ, բայց դուք չէք տեսներ զանոնք. անհաւատներուն պետերն են անոնք:

27. Երբ նենգամիտները սանակոխ ընեն օրէնքները<sup>(1)</sup>, կ'ըսեն. մեր նախահարց սովորութեան կը հետեւինք. Աստուած այսպէս գործել կը հրամայէ: Պատասխանէ՛ անոնց. անկարելի է որ Աստուած հրամայած ըլլայ ամօթալի գործ մը ընել. Աստուծոյ մասին չգիտցած բաներնուդ վրայ ինչո՞ւ կը խօսիք:

28. Ըսէ՛ անոնց. Աստուած հրամայած է ինձի արդարութիւնն ի գործ դնել. ձեր ճակատը զարձուցէք հոն՝ ուր կը պաշտեն զայն. իր անունը կոչեցէք. անկեղծ եղէք ձեր հաւատքին մէջ. ինչպէս (ոչինչէն) ստեղծեց զձեզ, այնպէս ալ իր մօտ պիտի կանչէ. (ձեր մէջէն) ոմանք կը լուսաւորէ, իսկ միւսները մոլորութեան մէջ կը թողու. այս վերջինները (փոխանակ Աստուծոյ) սատանան առին իբր պաշտպան, ու կը կարծեն թէ չիտակ ճամբէն կ'ընթանան:

29. Ո՛վ Ադամի զաւակներ. ամէն անգամ որ մըզկիթ<sup>(2)</sup> երթաք, ձեր ամենէն գեղեցիկ զգեստները հագէք. կերէք և խմեցէք, բայց չափաւորութեամբ, որովհետև Աստուած չի սիրեր չափազանցութեան մէջ ինկողները:

30. Ըսէ՛ անոնց. ո՛վ կրնայ արգիլիլ Աստուծոյ ծառաներուն՝ ի պատիւ իրեն պճնուելէ այն զարդերով զորս ինք չնորհած է, և սնանիլ այն ուտեստներով զորս

(1) « Երբ նենգամիտները ամօթալի գործ մը կատարեն. »

(2) Քաղեմիրսքի դիտել կուտայ թէ Բուրանին մէջ Գամի բառը գործածուած չէ բնաւ, այլ՝ ըսուած է մէսնիս, որ հայերէն մզկիթ բառին կը համապատասխանէ: Այսօր իսլամները առհասարակ Գամի կ'անուանեն իրենց ընդարձակ աղօթավայրերը, միայն Մէքքէի աղօթավայրն է որ կը պահէ մէսնիս յորջորջումը:

իր առատաձեռնութեամբը բաշխած է. ասոնք իրաւունքներն են անոնց որ կը հաւատան այս աշխարհի մէջ և հանդերձեալ կեանքին <sup>(1)</sup>: Այս կերպով է որ Աստուած իր պատուիրանները կը բացատրէ իմաստուններուն:

31. Աստուած արգիլած է գաղանապէս և յայտնապէս գործուած ոճիրը. անորէնութիւնը և անարդար բռնութիւններն ալ արգիլած է. ձեզի երբէք իշխանութիւն չէ տուած կուսքեր շինելու և ոչ ալ թոյլատրած է որ իրեն մասին չգիտցած բաներնիդ խօսիք:

32. Կեանքի սահմանը (իւրաքանչիւր ազգի համար) որոշած է կանխապէս. (երբ հասնի վայրկեանը) ոչ ոք կրնայ դաշն ետ մղել կամ փութացնել:

33. Ո՛վ Աղամի զաւակներ. ձեր մէջէն մարգարէներ պիտի ելին, որոնք իմ պատուիրաններս պիտի հաղորդեն ձեզի. ով որ Տիրոջմէն երկնչի և առաքինի գործեր կատարէ, սոսկումէ և չարչարանքէ զերծ պիտի մնա:

34. Այն գոռոզները որոնք Իսլամութենէ կը հեռանան <sup>(2)</sup> և անոր ճշմարտութիւնը կ'ուբանան, յաւիտենական բոցերուն մէջ պիտի նետուին:

35. Ի՞նչ կայ աւելի ամբարիշտ քան Բարձրեայը նախատելը, և իր պատգամները սուտ համարելը: Կռապաշտները պիտի վայելեն Քուրանի մէջ յայտնուած բարիքներուն մէկ մասը, մինչև որ մահուան հրեշտակը զայ և իրենց հարցնէ. ո՛ւր են այն շատուածները զորս կը կոչէիք (և Աստուծոյ անուան քով կը գնէիք): Պիտի պատասխանեն. անոնք անհետացան գացին: Եւ այս խոստովանութեամբ իրենք իսկ վկայած պիտի ըլլան իրենց անհաւատութեան:

(1) « Ասոնք կը պատկանին հաւատացեալներուն, այս աշխարհի մէջ, և մանաւանդ՝ յարութեան օրը: »

(2) « Որոնք մեր նշանները սուտ կը հռչակեն »

36. Աստուած պիտի ըսէ անոնց. մտէ՛ք զժողովքին մէջ այն ոգիներուն և մարդոց հետ որոնք հոն մնալու զատապարտուած են (և անհետացած են ձեզմէ առաջ.) բոցերուն մէջ մխրձուեցէ՛ք. (ամէն անգամ որ նոր սերունդ մը զժողովք մտնէ) պիտի անիծէ իրմէ առաջ մտածը, մինչև որ ամենքն ալ հոն հաւաքուին. այն ատեն վերջին անգամ մտնողը (առաջինը ցոյց տալով) պիտի ըսէ. Տէ՛ր, անա՛ այն հերձուածողները որոնք մոլորեցուցին զմեզ. մեր կրած պատիժին կրկին անգամը տուր անոնց: Բայց Աստուած պիտի ըսէ. ձեր ամենքին ալ պատիժը (կրկնապատիկ) աւելցուցած ենք, բայց դուք չէք գիտեր:

37. Եւ առաջինը ըսաւ վերջինին. մեր վրայ ի՞նչ առաւելութիւն ունիք. ճաշակեցէ՛ք հիմա այն պատիժը որուն արժանի եղաք ձեր արարքներով:

38. (Անտարակոյս) ամբարիշտները որոնք զոռոզութեամբ սուտ հռչակեցին մեր վարդապետութիւնը, իրենց առջեւ գոց պիտի գտնեն երկինքի զուռները <sup>(1)</sup>: Ինչո՞ւ այն ատեն միայն պիտի կարենան մտնել արքայութենէն ներս, երբ ուղար կարենայ անցնիլ ասեղին ծակէն <sup>(2)</sup>. ապերախտները այս կերպով պիտի վարձատրենք:

(1) ձեւալէտօին կըսէ թէ, միայն արդարներուն հոգիները պիտի ընդունուին եօթներորդ երկինքին մէջ. իսկ ամբարիշտները իրենց առջեւ գոց պիտի գտնեն արքայութեան դուռները և զժողովք պիտի գահալիժին: Արքայութեան մէջ մահաճակատները պիտի վայելեն մշտադատութիւնը, անգարար հոսող գետերը, փտրժասամ պտուղները և սեւաչուի կոյտերը, որոնք միայն սիրել գիտեն:

(2) Այս բաղդատութիւնը Աւետարանին մէջ ալ եղած է: Աւետարանի յունարէն մէկ թարգմանութեան վրայ յենելով ոմանք կըսեն որ, ո՛չ թէ ուղիքն, այլ մալուխին համար ըսուած է և եթէ կորենայ անցնիլ ասեղի ծակէն. ասիկա անշուշտ աւելի տրամաբանական բաղդատութիւն մըն է. թէեւ Քուրանին մէջ ալ ուղիք ըսուած է, բայց արաբերէն ցեւեւ (ուղտ) և հապլ (մալուխ) բառերը իրարու շատ մօտ են:

39. Գեհները պիտի ըլլայ իրենց անկողինը, կրակը՝ իրենց ծածկոյթը. ասիկա արդար վարձքն է ամբարիշտներուն :

40. Մենք ոչ ոքէ (որ հաւատացեալ է) չպիտի պահանջենք կարողութենէն վեր բան մը . այն հաւատացեալները, որոնք բարիք կը գործեն պիտի բնակին արքայութեան մէջ, որ յաւեոնական երանութեանց վայրն է :

41. Անոնց սրտերէն պիտի վանենք նախանձը . անոնց քայքայեալ սակ գետեր պիտի հոսին, ու անոնք պիտի գոչեն . Փառք Յաւիտեականին որ զմեզ այստեղը մտցուց . եթէ իր լոյսը մեզի չ'առաջնորդէր, մենք չպիտի գտնէինք այն ճամբան որ հոս բերաւ զմեզ . Մարգարէներուն խոստումները իրականացան : Չայն մը անոնց պիտի լսեցնէ սա խօսքերը . ահա՛ արքայութիւնը զոր ժառանգեցիք ձեր գործերով :

42. Երանութեան պարտէզին մէջ ապրողները պիտի ըսեն կրակի բնակիչներուն . Աստուծոյ խոստումներուն ճշմարտութիւնը փորձով հաստատեցինք, և դուք ալ հաստատեցի՞ք արդեօք . և անոնք պիտի պատասխանեն . այո՛ հաստատեցինք : Ու անոնց մէջէն մունետիկ մը պիտի կանգնի ու սա բառերը պիտի արտասանէ . Աստուծոյ անէճքը թող իջնէ ամբարիշտներուն վրայ :

43. Ու անոնց վրայ նաև, որոնք իրենց նմանները կը մոլորէցնէին Աստուծոյ ճանապարհէն, և որոնք ջանացին անոր մաքրութիւնը եղծանել և չը հաւատացին հանդերձեալ կեանքին :

44. Երանեալներուն և աստուածամերժներուն միջև պատուար մը պիտի բարձրանայ . ել Արամին վրայ պիտի գտնուին այն մարդիկը՝ որոնք միւսները պիտի ճանչնան մասնաւոր նշաններով և պիտի գոչեն արքայութեան

բնակիչներուն . խաղաղութիւն ընդ ձեզ : Բայց հակառակ բուն փափաքնուն չպիտի կրնան արքայութիւն մտնել աստուածամերժները :

45. Երբ անոնք իրենց նայուածքը դարձնեն գոփաքի բնակիչներուն, պիտի գոչեն . ո՛վ Աստուած, զմեզ անօրէններուն հետ մի՛ դասեր :

46. (Էլ Արաֆի վրայ գտնուողները) պիտի գոչեն աստուածամերժներուն թէ զիրենք կը ճանչնան ճակատնուն վրայ գրուած սարսաւի կնիքէն, ու պիտի հարցնեն . Ի՞նչ օգուտ ունեցան ձեր հարստութիւնը և գողութիւնը :

47. Անոնք որ ձեր երգումներուն համաձայն <sup>(1)</sup> երբէք չպիտի արժանանային աստուածային գութին, միթէ չը լսեցին սա մխիթարական խօսքերը . մտէ՛ք արքայութեան մէջ, երկիւղը և վիշտը թող հեռանան ձեր սրտերէն :

48. Կրակի բնակիչները պիտի գոչեն արքայութեան հիւրերուն . քիչ մըն ալ մեր վրայ սփռեցէք այն ջուրը և շնորհները որոնցմով Աստուած կը անուցանէ զձեզ . բայց անոնց պիտի պատասխանուի . այդ շնորհները արգիլուած են անհաւատներուն :

49. Անհաւատները ծաղրեցին կրօնքը (և զայն խաղալիքի մը վերածեցին .) անոնք աշխարհային կեանքի հրապոյրներէն տարուեցան . մենք զանոնք անտես կ'ընենք այսօր, որովհետև անոնք ալ անտես ըրին վերջին դատաստանի օրը և մեր պատգամները սուտ հռչակեցին :

50. (Եւ սակայն) մենք անոնց բերած էինք Գիրք մը որուն մէջ կը փայլի գիտութիւնը՝ հաւատացեալները լու-

(1) « Անոնք այն մարդիկն են որոնց մասին դուք երգում ըրած էիք թէ . . . » (Քաղեմիրաքի)

աստորելու համար և աստուածային գութը շնորհելու անոնց :

51. Արդեօք անոնք կը սպասեն որ Քուրանը լրանայ<sup>(1)</sup> . այն օրը ուր լրանայ , Քուրանի պատուիրանին դէմ գործողները պիտի ըսեն . Աստուծոյ ատաքեալները ճշմարտութիւնը կը քարոզէին մեզի , հիմա ո՞ւր պիտի գտնենք բարեխօս մը , և ի՞նչ յոյս ունինք կրկին աշխարհ գտնալու՝ ինքզինքնիս ուղղելու համար . (ա՛հ , եթէ կարենայինք դառնալ , ուրիշ կերպով պիտի վարուէինք .) բայց , արդէն (անգառնալի կերպով) անոնք կորսնցուցած պիտի ըլլան իրենց հոգին և իրենց պատրանքները փառատած պիտի ըլլան<sup>(2)</sup> :

52. Ձեր Աստուածը ստեղծեց երկինքն ու երկիրը վեց օրուան մէջ , ու յետոյ (հաստատօրէն) նստաւ իր գահին վրայ . ցերեկուան յաջորդել ատուաւ գիշերը , որ կը հետևի ցերեկին ատանց ընդմիջման . անիկա ստեղծեց արեւը , լուսինը և աստղերը , որոնք խոնարհաբար ենթակայ են իր օրէնքներուն : Իրեն կը պատկանի ստեղծագործութիւնը և էակները կառավարելու իրաւունքը : Օրհնա՛լ ըլլայ Աստուած՝ տիեզերքի վեհապետը :

53. Տիրոջ անունը յիշեցէք գաղտնապէս և հրապարակաւ<sup>(3)</sup> . բայց հեռու կեցէք ցոյցերէն . Աստուած կ'ատէ գոռոզները :

54. Մի՛ պղծէք երկիրը<sup>(4)</sup> մինչ մաքրագործուած է ան . երկիրը ի և յոյսով ազօթեցէք առ Աստուած (որովհետեւ) իր գթութիւնը մօտ է անոնց որ բարիք կը գործեն :

(1) « Կը սպասեն որ Քուրանը մեկնուի » (Քաղկեդոնցի)

(2) « Եւ իրենց հնարած չաստուածները պիտի անհետանան , »

(3) « Համեստութեամբ »

(4) « Երկրի վրայ անկարգութիւններ մի՛ ընէք : »

55. Աստուած է որ կը զրկէ հովերը , որոնք իր շնորհներուն<sup>(1)</sup> յառաջընթացներն են . մենք՝ անձրեւով լեցուն ամպերը կը մղենք չորցած դաշտերուն վրայ , անձրեւ կ'իջեցնենք , ամուլ հողը կը բարգաւաճեցնենք և առատ պտուղներ կը բուսցնենք : Այսպէս ալ մեռելները պիտի յարուցանենք իրենց գերեզմաններէն , որպէսզի (թեւեւս) խորհրդածէք այս բաներուն վրայ :

56. Լաւ հողը կ'արտադրէ ազէկ պտուղներ՝ Աստուծոյ թոյլտուութեամբ . գէշ հողը միայն գէշ պտուղներ կուտայ . այս կերպով է որ մենք կը բացատրենք աստուածային վարդապետութիւնը այն մարդոց՝ որոնք երախտագիտական արարքներ կը գործեն :

57. Մենք Նոյը իբր ատաքեալ զրկեցինք<sup>(2)</sup> . անիկա ըսաւ իր ժողովուրդին . պաշտեցէ՛ք ձեր Տէրը , իրմէ դատ ուրիշ Աստուած չի կայ . (ինչո՞ւ ուրիշ չաստուածներ պաշտել .) կը վախնամ որ մեծ օրուան պատիժին ենթարկուիք :

58. Իր ժողովուրդին մեծամեծները պատասխանեցին . դուն ծայրայեղ կուրուքեան մը մէջ կը գտնուիս :

59. Նոյ յարեց . ո՛վ իմ ժողովուրդս , ես մոլորութեան մէջ չեմ բնաւ , այլ՝ տիեզերքի վեհապետին ատաքեալն եմ :

60. Ես եկած եմ ձեզի յայանելու Բարձրեալին պատուիրանները և ձեզի սալ փրկարար խորհուրդներ . Աստուած ինձի տուաւ այնպիսի ծանօթութիւններ զորս չունիք դուք :

(1) Այսինքն՝ անձրեւին . Արաբիոյ շերմին կիմային համար անձրեւը շնորհի տեղ կ'անցներ , այնպէս որ շնորհ բառը հոմանիշ դարձած է անձրեւի :

(2) Նոյ նահապետ որ նախապէս ատաղձագործ էր , 50 տարեկանին Աստուծմէ պաշտօն ընդունեց քարոզութիւն ընել :

61. Դուք կը զարմանա՞ք որ Աստուծոյ խոստումները և սպառնալիքները ձեզի կը հաղորդուին ձեր մէջէն ընտրուած մարդու մը միջոցաւ, որպէս զի արժանի ըլլաք իր չնորհին:

62. Նոյը խաբերայ մը համարուեցաւ (այդ մարդոցմէն) և մենք աղատեցինք զայն ու անոր հետ տապանը մտնողները. իսկ այն կոյրերը որոնք մեր հաւատքը ուրացած էին, ջուրերուն մէջ խեղդուեցան:

63. Մենք Յովտը զրկեցինք իր արեւակից Ատէա-կաններուն (1). Յովտ ըսաւ անոնց. «՛վ իմ ժողովուրդս, պաշտեցէք Տէրը, իրմէ զատ ուրիշ Աստուած չկայ. չէ՞ք վախնար Աստուծամէ:

64. Ժողովուրդին իշխանները (որոնք անհաւատ էին) պատասխանեցին. կը տեսնե՞ք որ մտքի խանգարում ունիս. և չիտակը, կը կարծենք թէ խաբերայ մըն ես դուն:

65. Յովտ պատասխանեց. ևս յիմարացած մը չեմ բնաւ երբէք, այլ տիեզերքի վեհապետին առաքեալն եմ:

66. Ես կը կատարեմ ինձի յանձնուած առաքելութիւնը և եկած եմ ձեզի տայրու փրկարար (և անկեղծ) խորհուրդներ:

67. Զարմանալի՞ կը դանէք որ Բարձրեալը ձեր մէջէն մէկը ընտրեց իր պատուէրները ձեզի հաղորդելու համար. յիշեցէ՛ք որ Նոյի սերունդին տեղը զձեզ հաստատեց երկրի վրայ, որ զձեզ բազմապատկեց (2) և ձեր զօրութիւնը

(1) Նոյի ցեղէն սերած կռապաշտներ, որոնց զրկեր է Աստուած Յովտ, իրենց ցեղէն, որպէս զի միակ Աստուծոյ վարդապետութիւնը ընդունել տայ անոնց:

(2) «Տիասնի հասակներ առաւ ձեզի.» (Քաղկեդոնցի)

աւելցուց. յիշեցէ՛ք Աստուծոյ բարիքները, եթէ կ'ուզէք երջանիկ ըլլալ:

68. Ատէականները ըսին անոր. դուն եկած ես միակ Աստուծոյ կրօնքը քարոզելու մեզի և մեր հայրերուն պաշտանները լքել տալ կ'ուզես. եթէ սպառնալիքներդ լուրջ են, գործադրէ տեսնենք:

69. Մարգարէն յարեց. Աստուծոյ վրէժինդութիւնը և զայրոյթը քիչ ատենէն ձեր վրայ պիտի թափին. ինձի հետ պիտի վիճարանի՞ք այն անուններուն մասին, զորս դուք և ձեր հայրերը տուիք ձեր կուռքերուն. Աստուած ո՛չ մէկ կարողութիւն չտրճած է անոնց. սպասեցէք, ևս ձեր քանդուելուն ականատես պիտի ըլլամ:

70. Մեր գթութեան չնորհիւ ազատեցինք Յովտը և բոլոր անոնք որ հնազանդեցան իր ձայնին և մինչեւ վերջին անհաւատը բնաջինջ ըրինք, որովհետեւ սուտ կը հոչակէին մեր կրօնքը:

71. Թէմուտականներուն զրկեցինք (իբենց հայրենակիցներէն մին) Սալէնը, որ անոնց ըսաւ. «՛վ իմ ժողովուրդս, պաշտեցէք զԱստուած. անկէ զատ ուրիշ Աստուած չկայ (ինչո՞ւ ուրիշներ պիտի պաշտէիք.) սա էգ ուղտը իր զօրութեան ապացոյցն է. ձգեցէք որ ճարակի ան Տիրոջը դաշտին մէջ. անոր կեանքին դէմ մի՛ դաւէք. յետոյ չարաչար կը պատժուիք (1):»

(1) Սալէն գոցած էր Արարիչի լեռնոտ մէկ մասին կռապաշտ ժողովուրդը աստուածապաշտ դարձնելու. ժողովուրդը ըսաւ անոր. եթէ իրօք Աստուծոյ մարգարէն ես, սա ժայռէն էգ ուղտ մը ծնեցուր: Սալէն սկսաւ աղթել, և ի վերջոյ Աստուած ժայռին մէջէն էգ ուղտ մը դուրս հանեց իր ձագովը միասին. այս ուղտը ամէն իրիկուն ձրի կտր կը բաժնէր ժողովուրդին: Տեղացի շատ հարուստ կին մը նախանձելով սպաննել տուաւ թէ՛ ուղտը և թէ՛ ձագը. սպաննողները իբր վարձատրութիւն ստացան հարուստ կնոջը գեղեցիկ աղջիկը. բայց քանի մը օր ետք երկինքէն ահարկու ձայն մը դերեմք լեղապատառ ընելով մեռցուց: (Արար մեկնիչներ)

72. Յիշեցէք որ Ատի սերունդին տեղը գձեզ հաստաց երկրի վրայ, ձեզի տուաւ դաշտեր, որպէս զի պալատներ կատուցանէք, և ժայռեր՝ որպէս զի անոնց մէջ փորէք ձեր բնակարանները: Յիշեցէք երկիրքի բարիքները և երկրի վրայ ապականութիւն մի՛ տարածէք:

73. Թէ՛ մուտականներուն գոռոզ իշխանները ըսին հասարակ ժողովուրդին, որ աւելի խոնարհ ըլլալով հաւատացած էր մարգարէին. կը հաւատա՞ք դուք որ Սպլէ՛ Աստուծոյ առաքեալն է: Հասարակ ժողովուրդը պատասխանեց. մենք կը հաւատանք իր առաքելութեանը:

74. Իշխանները անխախտ մնալով իրենց գոռոզութեանը մէջ, ըսին մենք չենք հաւատար ձեզի նման:

75. Անոնք էգ ուղտին ոտքերը <sup>(1)</sup> կտրեցին, Աստուծոյ պատուէրին գէ՛մ գործեցին և յետոյ ըսին Սպլէ՛նին. սպառնալիքներդ ի գործ դիր տեսներք, եթէ իրօք Աստուծոյ առաքեալն ես:

76. Նոյն պահուն երկիրը շարժեցաւ իրենց ոտքերուն տակ, և (յաջորդ) առատուն անոնք գանուեցան մեռած իրենց տուններուն մէջ (և երեսի վրայ պառկած):

77. Մարգարէն թողլով ժողովուրդը, ըսաւ անոնց. (ձեզի հաղորդեցի Աստուծոյ պատուէրները) ձեզի իմաստուն խորհուրդներ տուի, բայց դուք չէք սիրեր զանոնք (որ ձեզի խորհուրդներ կուտան):

78. (Մենք զրկեցինք նաեւ Ղովար գէպի իր ժողովուրդը.) Ղովար ըսաւ Սողոմի բնակիչներուն. դուք պիտի գործէք այնպիսի ոճիր մը զոր չէ գործած երբէք ո և է ժողովուրդ՝ ձեզմէ՛ առաջ:

79. Ձեր վաւաչոտ փափաքները գոհացնելու համար

(1) « Աքերը » այսինքն՝ ծունկին ետեւի կողմը: (Քաղեմիրաբի)

ինչո՞ւ կը մերձենաք այր մարդոց, փոխանակ մերձենալու կանանց. բնութեան օրէնքները պիտի բռնաբարէ՞ք դուք <sup>(1)</sup>:

80. Սողոմի բնակիչները պատասխան չը տուին, այլ ըսին իրարու. վնասները Ղովար (և իրենները) մեր քաղաքէն, քանի որ չեն ուզեր մեր օրինակին հետեւիլ <sup>(2)</sup>:

81. Մենք ազատեցինք Ղովար և իր ընտանիքը բայց իր կինը պատժուեցաւ <sup>(3)</sup>:

82. Վրէժխնդիր անձրեւ մը իջեցուցինք անոնց վրայ և փճացուցինք յանցաւորները. տես թէ ի՛նչ կ'ըլլայ ապիրատներուն վախճանը <sup>(4)</sup>:

83. Մենք զրկեցինք Շախար գէպի իր հայրենակիցները՝ Մատէանականներուն. ո՛վ իմ ժողովուրդս, ըսաւ անոնց. պաշտեցէք տիեզերքի միակ Աստուածը. (ինչո՞ւ ուրիշ չաստուածներ պաշտէք.) Աստուած իր զօրութեան նշանները ցոյց տուաւ ձեզի. կշռելու և չափելու մէջ արդար եղէք, ինչ պարտք որ ունիք մարդոց, ամբողջութեամբ հատուցէք. մի՛ պղծէք երկիրը անոր մարքադործուելէն ետք. ձեր արարքին պատուները պիտի քաղէք եթէ հաւատք ունենաք:

84. Ճամբաներուն վրայ ստոկում մի սիւռէք բնաւ <sup>(5)</sup>

(1) « Իրաւ որ չափազանցութեան մէջ ինկած ժողովուրդ մըն էք դուք: » (Քաղեմիրաբի)

(2) « Ասոնք մարդիկ են որոնք սրբութիւն կը ծախեն: »

(3) Արար մեկնիչները կ'ըսեն թէ երկինքէն քար մը ինկաւ Ղովարի կնոջ գլխուն և զայն սպաննեց, որովհետեւ կայնած և ետին նայած էր:

(4) Այդ վրէժխնդիր անձրեւը կը բաղկանար դժոխքի խառնուաներուն տաք քարերէն, որոնք կ'իջնային յանցաւորներուն գլխուն վրայ և անմիջապէս կը մեռցնէին զանոնք: (ձէլալէտտին)

(5) « Ծուլակ մի՛ լարէք: » (Քաղեմիրաբի)

Աստուծոյ հաւատացողները հաւատքի ճամբէն մի՛ մոլորեցնէք, սխալ մեկնութիւններ մի՛ տաք անոր. յիշեցէք թէ դուք պղտիկ ժողովուրդ մըն էիք և Աստուած անեցուց զձեզ. ձեր ակնարկը աշխարհի վրայ պտտուցեցէք և տեսէք թէ ի՞նչ եղած է չարերուն վախճանը:

85. Եթէ ձեր մէջէն մաս մը հաւատայ իմ առաքելութեանս, մինչ միւս մասը մերժէ, սպասեցէք որ Աստուած ձեր անհամաձայնութեան վճիռը արձակէ. դատաւորներուն ամենէն արդարն է ան:

86. Մատենականներուն ցեղապետները գոռոզութեամբ գլխովցած՝ ըսին Շախլի. զքեզ պիտի վճնտենք քաղաքէն քեզի հետեւողներուն հետ միասին, եթէ չ'ընդունիր մեր հաւատքը. Շախլ պարեց. դուք պիտի փափաքէիք յաղթել այն սոսկումին որ ձեր կրօնքը կը ներշնչէ մեզի (1):

87. Մենք Աստուծոյ առջեւ սուտ խօսած պիտի ըլլայինք եթէ ձեր հաւատքը ընդունէինք. քանի որ անգամ մը Աստուած փրկած է զմեզ, միայն ինքը կրնայ հրաման ընել մեզի որ այդ կրօնքը վերստին ընդունինք. իր գիտութիւնը կ'ընդգրկէ ամբողջ տիեզերքը, մենք անոր վերայ դրած ենք մեր վստահութիւնը. Տէր, մեր և ժողովուրդին միջեւ բռնէ կշիռը, դուն դատաւորներուն ամենէն արդարն ես:

88. Անոնց մէջէն այն ցեղապետները որոնք մերժած էին հաւատալ, ըսին ժողովուրդին. եթէ հետեւիք Շախլին, ստուգապէս պիտի կորսուիք:

89. Երկրաշարժ մը յանկարծ տապալեց զանոնք ու

(1) « Մատենականները պատասխանեցին. ինչպէ՞ս կարելի է որ մեք հաւատանք, քանի որ ատելութիւն ունինք անոր գէժ: »

առտուն բոլորը մեռած գտնուեցան իրենց տուներուն մէջ, երեսնին գեանի վրայ:

90. Անոնք որ Շախլը իբր խաբերայ հռչակեցին, աներեւոյթ եղան, (ինչպէս եթէ երբէք ընտելած չ'ըլլային այս երկրին մէջ) և եպերելի գործերու անձնատուր եղան:

91. Շախլ Մատենականներէն հեռացած ատեն ըսաւ. ես ի կատար հանեցի այն առաքելութիւնը զոր Աստուծոյ ընդունած էի, ձեզի իմաստուն խորհուրդներ տուի. ինչո՞ւ անհաւատներուն կրեիք պատիճներուն համար տիրիմ:

92. Մենք ամէն անգամ որ առաքելներ զրկած ենք քաղաքներու մէջ, մեր պատիճներն ալ միասին զրկած ենք. ժողովուրդները կը պատժենք որպէս զի խոնարհ ըլլան անոնք:

93. Դժբաղդութիւնը կրելէն ետքը, յաջողութիւններ տուինք անոնց. մինչ անոնք մեր շնորհներէն գոռոզացած կ'ըսէին թէ՛ մեր հայրերուն նման մենք ալ ունեցանք աղէկ և գէշ բազդ. նոյն վայրկեանին, անակնկալ կերպով մը զանոնք ընա՛յին՞ ըրինք:

94. Եթէ յանցաւոր քաղաքներու ընակիչները հաւատացեալ ըլլային և Աստուծոյ երկնչէին, երկինքի և երկրի օրհնութիւնները անոնց վրայ պիտի թափէինք. (բայց անոնք սուտ հռչակեցին մեր նշանները) և իրենց սուտերուն փոխարէն պատուհասուեցան:

95. Ո՞վ կրնար վստահացնել այդ քաղաքներու ընակիչները թէ մեր գալուցիւր չպիտի թափէր գիշերուան միջոցին, մինչ անոնք քունի բազուկներուն մէջ էին:

96. Ո՞վ կրնար վստահացնել զանոնք որ մեր զայ-

րոյթը չպիտի պոռթկար անոնց գլխուն, ցերեկ ժամանակ, մինչ իրենք հաճոյքի մէջ էին:

97. Կը կարծէին թէ պիտի խուսափին Աստուծոյ հսկողութենէն, և ո՞վ կը կարծէ թէ կրնայ խուսափիլ, ի բաց առեալ անոնք՝ որոնք կորստեան դատապարտուած են:

98. Իրենք որ ժառանգորդներն են այն երկրին զոր թողուցին անհետացած սերունդները, տակաւին չէ՞ն հասկընար թէ մենք կարող ենք (եթէ ուզենք) պատժել զիրենք. թէ մենք կրնանք մեր կնիքը դրոշմել անոնց սրտին վրայ, որպէս զի չը կարենան բան մը հասկնալ:

99. Մենք քեզի պիտի պատմենք թէ ի՞նչ գծադրութիւններ եկան այն քաղաք՝ երուն գլխուն, որոնց զըրկեցինք մարգարէներ հրաչք գործելու կարողութեամբ: Այդ քաղաքներու ընակիչները շարունակ կը մերժէին հաւատալ վարդապետութեան մը զոր կեղծ հոչակած էին արդէն. այս կերպով է որ Աստուած կը փակէ անհաւատներուն սիրտը (իր կնիքը դրոշմելով):

100. Այդ քաղաքներուն մէջ մենք շատ քիչ մարդիկ գտանք որոնք հաւատարիմ ըլլան իրենց ուխտին (1). մեծ մասը նենգամբաններ է կը բազկանար:

101. Մովսէս, զոր զրկեցինք այս մարգարէներէն ետք, ներկայացաւ Փարաւոնի արքունիքը մեր նշաններով զինուած, բայց չը կրցաւ յաղթել թագաւորին և ժողովուրդի մեծամեծներուն յամառութեանը. դուն պիտի տեսնես թէ ի՞նչ է չարերուն վախճանը:

102. Մովսէս ըսաւ Փարաւոնին. ես ասիղերքի վեհապետին առաքեալն եմ:

(1) « Այդ մարդոց մեծ մասին քով ո եւ է հաւատարմութիւն չը գտանք իրենց ուխտին: » (Քաղկեդոնցի)

103. Աստուծոյ կողմէն իմ յայտնելիք հրահանգներս ճշգրիտ են, ձեր առջեւը պիտի գործեմ հրաչքներ իր գործութիւնը յայտնող. թոյլ տուր որ ինձի հետ մեկնին Իսրայէլի զաւակները: Փարաւոն պատասխանեց, եթէ դուն հրաչք գործելու կարողութիւն ունիս, գործէ՛, որպէս զի քու առաքելութեանդ հաւատամք:

104. Մովսէս իր գաւազանը նետեց և յանկարծ օձի փոխուեցաւ անիկա (շատ որոշ կերպով):

105. Յետոյ Մովսէս իր ձեռքը ծոցէն հանեց և անոր սպիտակութիւնը ապշեցուց ներկաները (2):

106. Փարաւոնի պապատականները գոչեցին. այս մարդը ճարտար կախարհ մըն է:

107. Փարաւոն ըսաւ. անիկա կ'ուզէ որ մենք հեռանանք մեր երկրէն. ի՞նչ պարտիմ ընել:

108. Անոնք պատասխանեցին. վար գիր զինքը և իր եղբայրը (2), և պետութեանդ բոլոր քաղաքներուն մէջ դրկէ՛:

109. Հրաման ընելով որ բոլոր ճարտար կախարհները հաւաքեն և քեզի բերեն:

110. Մեծ թուով կախարհներ հաւաքուելով (Փարաւոնի մօտ) սա խնդրանքը ըրին. տէ՛ր արքայ, մենք պիտի վարձատրուինք եթէ յաղթենք անոր:

111. Փարաւոն պատասխանեց. այո, անտարակոյս դուք իմ շնորհներուս պիտի արժանանաք:

(1) Մեկնելները կ'ըսեն թէ Մովսէսի մորթը պղնձագոյն էր, այնպէս որ երբ իր ձեռքը ծոցէն դուրս հանելու միջոցին ձիւնափայլ սպիտակութեամբ երեւցաւ, ընտան էր որ հրաչք մը նկատուեցաւ անիկա. իսլամներուն համար Մովսէսի սպիտակ ձեռքը հոմանիշ դարձած է «զորաւոր ձեռք» ի կամ «զօրութեան» որուն շնորհիւ Իսրայէլացիները ազատեցան գերութենէ:

(2) « Ժամանակ շահ է իրեն և իր եղբորը հետ: » (Քաղկեդոնցի)

112. Այն ատեն կախարդները ըսին Մովսէսի . նետէ՛ գաւազանդ , թէ չէ՛ մենք կը նետենք (1) :

113. Մովսէս ըսաւ . դուք նետեցէք առաջ . և ա- նոնք նետեցին իրենց գաւազանները և ներկաներուն առ- ջեւ ապշեցուցիչ տեսարան մը պարզեցին :

114. Այն ատեն մեր մարդարէն ներչնչեցինք որ իր գաւազանը նետէ . յանկարծ անոր գաւազանը օձի փոխուե- լով գիշատեց միւսները (որ նոյնպէս օձի փոխուած էին :) :

115. Ծշմարտութիւնը իր բոլոր փայլով երեւան և- կաւ և կախարդներուն վարկը կոտրեցաւ :

116. Անոնք պարտուած ետ քաշուեցան :

117. Աստուած պաշտելու համար գետին խոնարհեցան

118. Եւ ըսին . մենք կը հաւատանք տիեզերքի Աս- տուծոյն .

119. Մենք կը հաւատանք Մովսէսի և Ահարոնի Աս- տուծոյն :

120. Այն ատեն Փարաւոն ըսաւ անոնց . ի՛նչպէս , դուք ինչո՞ւ կը հաւատաք մինչ ես չեմ արտօնած զձեզ որ հաւատաք , դուք այս խաբերայութիւնը կանխապէս ծրագրեցիք քաղաքին մէջ , որպէս զի բնակիչները դուրս հանէք , բայց քիչ ատենէն պիտի տեսնէք :

121. Ձեր ոտքերը և ձեռքերը (փոխնիփոխ) կտրել պիտի տամ (2) և յետոյ ձեզ ամենքդ խաչել տամ պիտի :

122. Կախարդները պատասխանեցին , մենք ամենքս Աստուծոյ պիտի վերադառնանք արդէն :

(1) « Առաջ դ՞ու՞ն պիտի նետես թէ՛ մենք : »

(2) Այսինքն՝ ձախ ոտքն ու աջ ձեռքը, կամ ձախ ձեռքը և աջ ոտքը կտրել պիտի տամ, պատիժ մը որ կը գործադրուէր Արեւ- Եկեքի մէջ :

123. Դուն կը բարկանաս մեզի և վրէժխնդիր կ'ու- գես ըլլալ անոր համար որ հաւատացինք մեր տեսած հը- բաշքներուն . Տէ՛ր , համբերութիւն տուր մեզի և ըրէ որ իբր հաւատացեալ մեռնինք :

124. Փարաւոնի պաշտականները այն ատեն ըսին . թոյլ պիտի տա՞ս որ Մովսէս և Ահարոն (և իր ցեղը) մեկնին հոսկէ և երկիրը պղծեն իրենց ոճիրներով (1) և լքեն զքեզ և չաստուածներդ : Փարաւոն պատասխանեց . ուրեմն սպաննենք անոնց արու զաւակները , միայն աղ- ջիկներուն խնայենք , որպէս զի անոնցմէ աւելի զօրաւոր ըլլանք :

125. Մովսէս ըսաւ Իսրայելացիներուն . երկին- քի գթութիւնը հայցեցէք . համբերատար եղէք , որովհե- տեւ աշխարհ կը պատկանի Աստուծոյ . անիկա իրեն հա- ճոյ թուածներուն կը շնորհէ երկրի ժառանգութիւնը . հանդերձեալ կեանքը բաժինը պիտի ըլլայ անոնց՝ որոնք իրմէ կ'երկնչին :

126. Իսրայելացիները պատասխանեցին անոր . քու գալէդ առաջ հարստահարուած էինք , և յորմէհետէ դուն մեր առաջնորդն ես , դարձեալ կը հարստահարուինք : Պատասխանեց . Աստուած կրնայ ձեր թշնամիները բնա- ջինջ ընել և ձեզի տալ անոնց թագաւորութիւնը , տես- նելու համար թէ ի՛նչպէս պիտի ընթանաք :

127. Սրգէն Փարաւոնի ժողովուրդին զգացուցինք սովը և երաշտութիւնը , որպէս զի անոր աչքերը բանանք :

128. (Յետոյ , երբ Եգիպտացիներուն յաջողութիւն- ներ տուինք ,) անոնք իրենց վայելած բարիքները պա- հանջ մը համարեցին , անոնք Մովսէսի և իր ժողովուր- դին վրայ կը նետեն իրենց կրած աղէտներուն պատճառը ,

(1) « Եւ երկրի վրայ անկարգութիւններ հասնեն : » (Քաղիմիբրքի)

մինչդեռ Աստուծոյ պէտք է վերագրեն, բայց մեծ մասամբ կ'անդիտանան այս բանը:

129. Եզրիպտացիները յայտարարեցին Մովսէսի որ բնաւ չպիտի հաւատան անոր, զիրենք հրապուրելու համար ինչ հրաշք որ ալ գործէ:

130. Այն ատեն մենք անոնց զրկեցինք ջրհեղեղը, մարախները, գարշաձճիները, գորտերը և արիւն մեր զօրութեան իրր նշաններ, բայց անոնք շարունակեցին մնալ իրենց գոտողութեան և ամբարշտութեան մէջ:

131. Ամէն անգամ որ Աստուծոյ բազուկին տակ ճգմուեցան, Մովսէսին ըսին անոնք. օգնութեան կանչէքու Աստուածդ, քանի որ անոր հետ գաչինք կնքած ես. եթէ զմեզ ազատէ այս աղէտներէն, պիտի հաւատանք քեզի և պիտի թոյլ տանք որ մեկնիս Իսրայէլի զաւակներուն հետ: Մեր պատիժները կասեցուցինք անոնց խնդրած ժամանակամիջոցին տևողութեամբ, բայց անոնք իրենց երգումը չը պահեցին:

132. Այն ատեն վրէժ լուծեցինք իրենցմէ. ծովուն անդունդներուն մէջ խեղդեցինք զանոնք, որովհետեւ մեր նշանները սուտ հուշակեցին (և անոնց ուշադրութիւն չ'ընծայեցին):

133. Արեւելքի և արեւմուտքի երկիրները տուինք տկար ազգերուն, և անոնց վրայ տարածեցինք մեր օրհնութիւնը. Իսրայէլացիները տեսան մեր (հրաշալի) խոստումներուն լրացումը. անոնք իրենց կրած վիշտերուն համար վարձատրուեցան<sup>(1)</sup>. Փարաւոնի և իր ժողովուրդին գործերն ու շէնքերը քանդեցինք:

(1) «Որովհետեւ խոստմնապահ եղան.» (Քաղիմիրքի)

134. Ծովին ջուրերուն մէջէն ճամբայ բացինք Իսրայէլացիներուն, ու անոնք հասան կապաչաներու երկիր մը. անմիջապէս Մովսէսէն խնդրեցին որ անոնց պաշտած կուռքերուն պէս իրենց ալ շինէ. մարգարէն ըսաւ անոնց. Իսրայէլի զաւակներ, դուք տգէտ ժողովուրդ մըն էք:

135. Անոնց պաշտած չաստուածները անվաւեր են, զուր և սրբապիղծ է անոնց պաշտամունքը:

136. Կրնա՞ն ձեզի առաջարկել ուրիշ Աստուած մը քան այն, որ զձեզ բարձրացուց բոլոր ազգերէն վեր:

137. (Յիշեցէք որ) մենք զձեզ ազատեցինք Փարաւոնի մարդոցմէն որոնք բռնութիւն կը բանեցնէին ձեր վրայ, և ձեր արու զաւակները կը սպաննէին, միայն աղջիկներուն խնայելով. ասիկա աստուածային բարութեան ցայտուն մէկ նշանն է:

138. Մենք նշանակեցինք երեսուն զիշերներ, որ ատեն Մովսէս պարտաւոր էր կենալ լերան վրայ, յետոյ տանն ուրիշ զիշերներ եւս աւելցուցինք, այնպէս որ Աստուծոյ հետ իր ունեցած տեսակցութիւնը քառասուն զիշեր տեսց (1): Մովսէս մեկնած ատենը ըսաւ իր եղբորը՝ Ահարոնի. իմ ժողովուրդիս քով փոխանորդէ՛ ինձի, արդարութեամբ գործէ՛ և ամբարիշտներուն ճամբուն մի՛ հետեւիր բնաւ:

(1) Արարները գիշեր բաւը կը գործածեն փոխանակ ցերեկի. անտարակոյս Արարիոյ խիստ տաք կլիման է որ տեղի տուած է այս գործածութեան. Յերեկ տտեն մինչ հրավառ արեւը հորեզոնին վրայ է, Արարները չէին կրնար իրենց վրաններէն գուր ելլել. միայն գիշերը կրնային դուրս գալ և ընել այն բաները զոր բարեխառն երկիրներու բնակիչները կ'ընեն ցերեկը. այս է պատճառը որ Արար բանաստեղծները երբէք չեն գովաբանած գեղեցիկ օրուան մը հրապոյրները, այլ իրենց երգերուն մէջ շարունակ կրկնած են լէյլի՛ լէյլի՛ բառերը, որ կը նշանակէ՝ ո՛վ գիտեր, ո՛վ գիտեր:

139. Երբ Մովսէս նշանակուած ժամուն հասաւ լե-  
րան վրայ և լսեց Աստուծոյ ձայնը, սա աղօթքը ուղղեց  
անոր. Տէր, բարեհաճէ ցոյց տալ ինձ դէմքդ (որպէս զի  
հոգեպիշ նայիմ քեզի.) Աստուած պատասխանեց. դուն  
չե՞ս կրնար իմ դէմքիս տեսքին հանդուրժել, նայէ՛ լե-  
րան, եթէ անիկա անշարժ մնայ այն ատեն պիտի տես-  
նես զիս. ու անա Աստուած իր փառքովը շրջապատուած  
երեւցաւ, լեռը փոշիի վերածուելով կքեցաւ և Մովսէս՝  
ահարկեալ զետին տապալեցաւ:

140. Երբ Մովսէս ինքզինքին եկաւ, դոչեց. փա՛ռք  
Բարձրեալին, իր կամքին կը հպատակիմ<sup>(1)</sup> և ես առա-  
ջինն եմ հաւատացեալներուն:

141. Աստուած ըսաւ. ո՛վ Մովսէս, բոլոր մարդոց  
մէջէն զքեզ ընտրեցի, որպէս զի իմ հրամաններս անոնց  
հազորդես. միայն քեզի լսելի ըրի իմ խօսքս. ուրեմն  
ընդունէ այս չորհրդ և երախտապարտ եղիր:

142. Իրեն համար տախտակներու վրայ արձանագ-  
րեցինք պատուէքներ և օրէնքներ, որպէս զի մարդիկ  
կարենան առաջնորդուիլ իրենց բոլոր գործերուն մէջ.  
Իրեն հրամայեցինք սիրով<sup>(2)</sup> ընդունիլ զանոնք և ժողո-  
վուրդին յարգել տալ. ես ժողովուրդին ցոյց պիտի տամ  
թէ չարերուն բնակավայրը ո՛րն է:

143. Անօրէն և գոռոզ մարդիկը իմ հաւատքէս պի-  
տի հեռացնեմ. անոնք եթէ հրաչքները աչքովին տեսնեն

(1) « Իրեն կը վերադառնամ զզձում յայտնելով » կը թարգ-  
մանէ Գաղմիբարքի և կը յարէ թէ Իսլամները կը հաւատան թէ ո՛վ  
որ տեսնել կ'ուզէ զլիստուած, յանցանք գործած կ'ըլլայ և յան-  
կարծ կը մեռնի. Գուրանի այս հատուածը յաճախ յիշատակուած  
է Իսլամ միութեաններու գործերուն մէջ:

(2) « Հաստատակամութեամբ »

ալ, դարձեալ անհաւատ պիտի մնան. շիտակ ճանապարհը  
մոլար պիտի թուի իրենց, և երբ մոլորութեան ճամբան  
տեսնեն, ուղիղը պիտի կարծեն զայն:

144. Այս կուրութիւնը պիտի գայ իրենց՝ իմ նշան-  
ներս սուտ հոչակած և պատուիրաններս արհամարհած  
ըլլալուն ի պատիժ:

145. Կրօնքի դէմ<sup>(1)</sup> խօսողներուն և յարութեան օ-  
րին հաւատացողներուն արարքները պարապը պիտի ել-  
լեն. չէ՞ որ իրենց շրածին փոխարէնը պէտք է զտնեն:

146. Մովսէսի մեկնումէն ետք, Իսրայիլացիները ի-  
րենց մատանինները հալեցուցին և (մարմին ունեցող) ու  
բառաչող հորթ մը շինեցին<sup>(2)</sup>. Չէին հասկնար թէ այդ  
հորթը չէր կրնար խօսիլ իրենց հետ, ոչ ալ շիտակ ճամ-  
բան առաջնորդել զիրենք:

147. Անոնք այս հորթը իբր Աստուած պաշտեցին և  
սրբապիղծներ դարձան:

148. Եւ երբ հորթը տապալեցաւ իրենց առջեւ<sup>(3)</sup>,

(1) « Իմ նշաններու դէմ »

(2) Գուրանի մեկնիչները կ'ըսեն թէ Իսրայիլացիներուն պաշ-  
տած ոսկի հորթը կը բառաչէր, որովհետեւ Գարբէլ հրեշտակա-  
պետի ձին, անոր քովէն քառասմբակ անցած ատեն, բերանը փոշի  
մտցուցած էր, ու կը պնդեն թէ հրեշտակապետին ձիուն ոտքերը  
կեանք կուտան բոլոր անոնց որոնց կը դպչին (Սալարի:) — 146րդ  
տունին մասին մեկնիչներուն տուած բացատրութիւնը գոհացուցեչ  
չէ. անոնք կ'ըսեն թէ ոսկիէ հորթը ձուլող Սամարացի հորթին  
բերնին մէջ նետեց բուռ մը փոշի, զոր հրեշտակապետին ձին հա-  
նած էր. այս փոշին շնորհիւ է որ հորթը կեանք առաւ և սկսաւ  
բառաչել, և կամ՝ Սամարացի այնպէս մը ձուլեց հորթին բերանը,  
որ հովը անոր մէջէն անցած միջոցին բառաչեւնի նմանող ձայն կը  
հանէր (Գաղմիբարքի):

(3) « Եւ երբ զզձում յայտնեցին, » (Գաղմիբարքի)

իրենց մոլորած ըլլալը ընդունեցին և ըսին . մեր գործը գէշ է , եթէ զթած եւ անյիշաչար Աստուած մեզի հնրէ :

149. Երբ Մովսէս Իսրայելացիներուն մօտ վերագարձաւ , զայրոյթով (և վիշտով) լեցուն՝ ըսաւ . իմ մեկնեցէս ետք ըրածնիդ ահաւոր բան մըն է . կ'ուզէ՞ք որ Աստուծոյ վրէժխնդրութիւնը փութով հասնի . (օրէնքին) տախտակները գետին նետեց , եղբօրը գլուխէն բռնեց և իրեն քաշեց զայն . Ահարոն ըսաւ . ո՛վ իմ մօրս զաւակը , ժողովուրդը բռնութիւն բանեցուց վրաս , քիչ մնաց պիտի սպաննէր զիս , զիս մի՛ պատժեր , որպէս զի թշնամիները չ'ուրախանան , նենգամիտներուն կարգը մի՛ դասեր զիս :

150. Այն ատեն Մովսէս գոչեց . ողորմա՛ճ Աստուած , զթա՛ իմ և եղբօրս վրայ , քու անհուն գթութիւնէդ բաժին մը հանէ մեզի :

151. Անոնք որ հորթ պաշտեցին , աստուածային գայրոյթին ենթարկուելով , աշխարհին մէջ նախատինքներով պիտի ծածկուին , այսպէսով է որ մենք կը փոխարինենք սրբապիղծները :

152. Անոնք որ անկեղծօրէն զղջալով իրենց սփրներուն վրայ կը հաւատան Աստուծոյ , անոր գթութեան արժանի պիտի ըլլան :

153. Երբ Մովսէսի զայրոյթը հանդարտեցաւ , առաւ օրէնքի տախտակները , որոնց վրայ հաւատացեալները կը տեսնեն լոյսին և աստուածային գութին փայլիլը :

154. Մովսէս ժողովուրդէն ընտրեց եօթանասուն Իսրայելացիներ մեր պատուէրին համաձայն (և զանոնք մեր առջեւ հանեց) երկրաչարժ մը զանոնք կրանեց : Մովսէս ըսաւ . Տէր , դուն կրնայիք զանոնք փճացնել այս օրէնս առաջ և զիս թաղել անոնց աւերակին տակ , մեր

մէջէն քանի մը անմիտներ կըլերուն համար պիտի բնաջինջ ընես զմեզ . դուն ըստ կամս կը մոլորեցնես և ուղիղ ճամբան կ'առաջնորդես մարդիկը . դուն մեր պաշտպանն ես , դուն ուղեցիր ժողովուրդդ փորձել , ներէ՛ մեր մեղքերուն և զթա՛ մեր վրայ . քու գթութիւնդ անսահման է :

155. Քու շնորհներդ թափէ մեր վրայ թէ՛ այս աշխարհին և թէ՛ հանդերձեալին մէջ , որովհետեւ մենք քեզի վերագարձանք (զղջում յայտնելով) : Աստուած պատասխանեց . ես պիտի ընտրեմ այն զոնքը որոնց վրայ պիտի թափեմ իմ վրէժս . իմ գթութիւնս բոլոր էակներուն վրայ կը սարածուի , երկիւղածները , պատուիրուած ողորմութիւնը տուողները և իմ նշաններուս հաւատացողները իբր վարձատրութիւն պիտի ստանան իմ գթութիւնս ,

156. Նաեւ անոնք՝ որոնք պիտի հաւատան մարգարէին զոր մարդկային գիտութիւնը չէ լուսաւորած <sup>(1)</sup> , որուն մասին յիշատակուած է Հնգամատեանին և Աւետարանին մէջ . նաեւ անոնք՝ որոնք կը պատուեն զայն , կ'օգնեն անոր և երկինքէն իջած լոյսին կը հետեւին , ասոնք բոլորը երանութիւնը պիտի ունենան իրենց բաժին . մարգարէն անոնց կը պատուիրէ բարեք գործել և կ'արգիլէ չարեքը , լաւ անուններու գործածութիւնը կը թոյլատրէ և անմաքուր սնունդները կ'արգիլէ , անոնց բեռները կը թեթեւցնէ և զանոնք ընկճող շղթաները կը վերցնէ :

157. Ըսէ անոնց . ո՛վ մարդիկ , ես Աստուծոյ առաքեալն եմ (որ եկած եմ գէպ ի ձեզ) :

(1) « Կարգաւ գրեւ չը գիտցող մարգարէն , » (Քաղմիբրքի)

158. Ի՞մ առաքելութիւնս աստուածային է, Աստուած կ'ընդգրկէ մարդկային ցեղը, իրմէ զատ ուրիշ Աստուած չի կայ. կեանքը և մահը ան կուտայ, ընդունեցէք Իսլամութիւնը. հետեւեցէք Մարգարէին որ մարդկային գիտութեամբ լուսաւորուած չէ, բայց ինքն ալ կը հաւատայ Աստուծոյ և անոր խօսքին. հետեւեցէք անոր և փրկութեան ճամբէն պիտի քալէք:

159. Իսրայէլացիներուն մէջ կան արդարատէր գատաւորներ և աստուածաբաններ <sup>(1)</sup>:

160. Մենք Իսրայէլացիները բաժնեցինք տասներկու ցեղերու, և երբ անոնք Մովսէսէն շուր խնդրեցին մենք ներչնչեցինք Մովսէսը որ իր գաւազանը ժայռին գարնէ. տասներկու ազգիւրներ բղխեցան անկէջ և իւրաքանչիւր ցեղ գիտցաւ թէ ո՞ր ազգիւրէն պիտի անցընէ իր ծարաւը: Յետոյ ամպերը իջեցուցինք անոնց վրայ շուք տալու համար. անոնց զրկեցինք մանանայ և լորամարդիներ և ըսինք անոնց. մանանցէ՛ք այն բաներով զորս ձեզի կը նււրեւորենք. իրենց տրտունջները միայն ինքզինքնուն վնասեցին:

161. Մենք ըսինք անոնց <sup>(2)</sup>. Ընակեցէ՛ք այս քաղաքին մէջ և սնանեցէք անոր պարունակած բեշքերովը, ինչքան որ ուզէք. Տէրը պաշտեցէք հոն մտած ատենիդ, իր զթութիւնը հայցեցէք. (այն ատեն) ձեր յանցանքները պիտի ներենք և արգարները մեր չնորհներովը պիտի ողորկին:

162. Բայց անոնց մէջէն ամբարշտութեան անձնա-

(1) « Կան մարդիկ որոնք ճշմարտութիւնը իրենց աւաջնորդընտրած են և արդարութիւնն ի գործ կը դնեն: » (Քաղմիրաբի)

(2) « Անոնց կ'ըսէին, »

տուր եղողները Աստուծոյ հրամանը ոտնակոխ ըրին, ու այն ատեն վրէժը պատժեց իրենց անհնազանդութիւնը:

163. Հարցուցէք անոնց թէ ի՞նչ եղած է պատմութիւնը այն ծովկերեայ քաղաքին, որուն բնակիչները շարժը պահելու պատուէրը ոտնակոխ ըրին: Անոնք այդ սուրբ օրը կը տեսնէին որ ձուկերը ջուրին երեսը կ'ելլեն և միւս օրը կ'անհետանան. այս կերպով է որ մենք դանոնք կը փորձէինք և ցոյց կուտայինք իրենց ամբարշտ ըլլալը:

164. Իրենց մէջէն մաս մը սապէս կ'ըսէր չարերուն խորհուրդ տուողներուն. երկինք զանոնք բնաջինջ պիտի ընէ կամ ամենէն ծանր պատիժներուն պիտի ենթարկէ զանոնք. (ուրեմն ինչո՞ւ քարոզութիւն ընել այսպիսի փողովուրդի մը.) Իմաստունները պատասխանեցին. մենք անոնց քարոզութիւն կ'ընենք որպէս զի Աստուծոյ առջեւ ինքզինքնիս արդարացիներ ու անոնց ներչնչեցէք Աստուծոյ երկիւղը:

165. Ու երբ չարերը մոռցան այս փրկարար խորհուրդները, մենք փրկեցինք զանոնք՝ որոնք խորհուրդ տուած էին անոնց, և յանցաւորներուն կրել տուինք իրենց անորէնութեան արժանի պատիժները:

166. Անոնք գոռողարար յարատեւեցին իրենց անհրնազանդութեանը մէջ որով զանոնք գարշելի կապիկներու փոխեցինք (և ծովին մէջ թափեցինք.) Աստուած ծանոց չըրէ աներուն որ դժբաղդութիւնը զիրենք պիտի հալածէ մինչեւ վերջին դատաստանին օրը <sup>(1)</sup>. Աստուած իր պա-

(1) « Աստուած յայտարարեց այն ատեն թէ իրենց դէժ ազգ մը պիտի զրկէ, այն օրէն մինչեւ յարութեան օրը և սարսափելի չարեքներ պիտի պատճառէ անոնց. » (Քաղմիրաբի)

տուհամներուն մէջ արագ է, բայց նաեւ գլխած և անյիշաչար է:

167. Մենք զանոնք ցիրուցան ըրինք ամբողջ աշխարհի վրայ (1). անոնց մէջ կան մարդիկ՝ որոնք արդարամիտ են և կան ալ որ անարդար են. մենք զանոնք փորձելու համար տուինք բարօրութիւնը և դժբաղդութիւնը, որպէս զի դէպ ի մեզ գան:

168. Ուրիշ սերունդ մը յաջորդեց անոնց աշխարհի վրայ. այս սերունդը Աստուծոյ ապաւինած և իր վստահութիւնը երկնային գութին վրայ դրած էր. անիկա ընդունեց Հնգամատեանին ուխտը պայմանաւ որ Աստուծոյ նկատմամբ ճշմարտութիւնը միայն պիտի խօսի ու եռանդով պիտի նուիրուի նուիրական մատեաններուն ուսումնասիրութեանը: Երկիւղի ճամբուն մէջ քայլողներուն առատ վարձատրութիւնը պիտի ըլլայ արքայութիւնը. չէ՞ք հասկնար այս բանը:

169. Ասոնք որ Հնգամատեանը յարատեւարար կը կարդան և պատուիրուած աղօթքները կը կատարեն, պիտի ստանան վարձքը իրենց բարի գործերուն:

170. Երբ Սինա լեռը բարձրացուցինք անոնց պիտուն վերեւ իբր ստուեր ամող, անոնք կարծեցին թէ լեռան զգրգող գագաթը իրենց գլուխներուն վրայ պիտի փլչի, այն ատեն մենք ըսինք անոնց. այս տախտակները դոր ձեզի կը նուիրենք ընդունեցէք (զանոնք յարգելու) հաստատ որոշումով, և միաբերնիպ պահեցէք այն տեղ արձանագրուած պատուիրանները որպէս զի Տիրոջմէն երկնչիք:

171. Աստուած Ազամի ամբողջ սերունդը անոր որ-

(1) Կ'աղկարկէ Հրէաներուն բայց չը դիտարկելի թէ անոնց պատմութեան ո՛ր շրջանին կը վերաբերի այս հատուածը:

զիններուն երկկամունքէն հանեց և հարցուց անոնց (1). ես ձեր Աստուածը չեմ. անոնք պատասխանիցին. այո՛, մեր Աստուածն ես: Մենք պահեցինք անոնց վկայութիւնը որպէս զի վերջին դատաստանի օրը չը կարենաք ինքզինքնիդ չըմեղացնել, ըսելով թէ չէիք գիտեր:

172. Ու նաեւ չը կարենաք ըսել՝ մեր հայրերը կըռապաշտ էին, մենք ինչո՞ւ պիտի պատժուինք անոնց գործած ոճիրներուն համար:

173. Ահա այսպէս մենք կը բացատրենք մեր վարդապետութիւնը, որպէսզի մարդիկ ճշմարիտ հաւատքին բերենք:

174. Պատմէ՛ անոնց՝ պատմութիւնն անոր որ մերժեց հաւատալ մեր կրօնքին (2). ստանան հետեւիցաւ անոր և իր ծուղակին մէջ ձգեց:

175. Եթէ մենք ուզէինք, զայն (այս հրաշքով) բարձրացուցած կ'ըլլայինք. բայց անիկա յարած էր աշխարհի և միայն իր կիրքերուն կ'անասար, նման այն շունին որ կը հաչէ երբ զայն կը վռնտես, որ կը հաչէ նորէն երբ

(1) Ել Հասան կը վկայէ թէ Արար մատենագիրները սապէս կը մեկնեն այս հատուածը. — Աստուած Ազամը իջեցուց Հնգկաստանի մէջ և ձեռքով շփեց անոր կանակը և անոր ու սերունդին երկկամունքներէն դուրս քաշեց բոլոր այն մարդիկը որոնք պիտի ծնէին մինչեւ յարութեան օրը. յետոյ ըսաւ անոնց. ես ձեր Աստուածը չեմ. անոնք պատասխանեցին. կը վկայենք թէ մեր Աստուածն ես. Աստուած ըսաւ հրեշտակներուն. վկայ եղէք անոնց հաւատքին. ու անոնք ըսին՝ թէ վկայ են: Այն ատեն Աստուած Ազամի սերունդը կրկին մտցուց երկկամունքներուն մէջ:

(2) Կ'աղկարկէ Բաղասամի, որ նուէրներ ընդունած էր Մովսէսի դէմ անէծք կարգալու համար, բայց ի պատիժ ասոր, լեզուն բերնէն դուրս ելաւ և ինկաւ մինչեւ կուրծքին վրայ:

(ձեւալէտաին)

անկէ կը հեռանաս: Ահա այսպէս են նաեւ անոնք որ մեր կրօնքը սուտ կը հռչակեն: Անոնց տուր այս օրինակը, որպէս զի իբր սղղարարութիւն ծառայէ:

176. Անոնք՝ որ Իսլամութեան դէմ կը խօսին և իրենց հոգիները կը պղծեն, թշուառականօրէն իրարու կը նմանին<sup>(1)</sup>:

177. Անոնք որ Աստուծոյ չնործիւ լուսաւորուած են, փրկութեան ճամբէն կ'ընթանան. ու որ մոլորած է Աստուծոյ ձեռքով, կորսուած է այլևս:

178. Մենք քանի՛ մարդեր և ոգիներ ստեղծեցինք, որոնց բաժինը գեհնը պիտի ըլլայ. անոնք սիրտ մը ունին. բայց չեն զգար, աչք ունին և չեն տեսներ, ականջ ունին և չեն լսեր. անոնք կը նմանին գաղաններու ու անոնցմէ աւելի կոյր են և կը մնան իրենց փթածութեան մէջ:

179. Ամենէն գեղեցիկ անունները Աստուծոյ կը պատկանին<sup>(2)</sup>. այդ բառերը գործածեցէք իր օգնութիւնը հայցելու համար, և հեռացէք անոնցմէ որոնք սրբապղծօրէն կը գործածեն զանոնք. անոնք իրենց արարքներուն վարձքը պիտի ստանան:

180. (Մեր ստեղծած) էակներուն մէջ կան մարդիկ որոնք ուղիղ ճամբէն կ'ընթանան և որոնց արարքներուն վրայ արդարութիւնը կ'իշխէ:

181. Փայտով անոնց, որ սուտ կը հռչակեն Իսլամութիւնը<sup>(3)</sup>, պիտի պատժուին այնպիսի ատեն մը երբ բռնաւ չէին սպասեր:

(1) « Գէշ բանի մըն է որ կը նմանին մեր նշանները սուտ հռչակողները, և ինքզինքնուն է որ չարիք կը հասցնեն » (Քաղիմիւրքի)

(2) Արտը մատենագիրները կ'ըսեն թէ Մահմետականները 99 տեսակ ածական ունին Աստուած բառին հոմանիշ:

(3) « Մեր նշանները »

182. Եթէ իմ վրէժնորութիւնս դանդաղօրէն կու գայ, ահաւոր է սակայն անիկա<sup>(1)</sup>:

183. (Արարները) չեն մտածեր թէ Մուհամմէտ (իրենց ընկերը) զիւստար մը չէր բնաւ, և ուրիշ սուաքելութիւն չ'ունէր, այլ՝ աստուածային կրօնքը քարոզել:

184. Ինչո՞ւ չեն ուղղեր իրենց ակնարկը երկինքի և երկրի թագաւորութեան և Աստուծոյ ստեղծած էակներու օղակին, չեն տեսներ թէ մահը կրնայ յանկարծակի բերել զիրենք. ուրիշ ի՞նչ գիրքի պիտի հաւատան. (եթէ Քուրանին չ'հաւատան):

185. Անոնք զոր Աստուած մոլորութեան մէջ պիտի մխրճէ, այլևս լոյսէ մը չպիտի առաջնորդուին. Աստուած զանոնք պիտի լքէ իրենց կուրութեանը մէջ:

186. Քեզի պիտի հարցնեն թէ ժամը ե՞րբ պիտի հասնի: Պատասխանէ՛ անոնց. ատիկա միայն Աստուած գիտէ. իրմէ զատ ոչ ոք կրնայ յայտնել. այդ օրը սուկում կը պատճառէ թէ՛ երկինքի և թէ՛ նրկրի վրայ զրոնուողներուն<sup>(2)</sup>. մահկանացուները յանկարծակի պիտի բերէ:

187. Քեզի պիտի հարցնեն թէ տեղեկութիւն մը ունի՞ս այդ մասին. պատասխանէ՛ անոնց. միայն Աստուած գիտէ, և մարդոց մեծամասնութիւնը կ'անգիտանայ այս ճշմարտութիւնը:

188. Ըսէ՛ անոնց. ես ու ե իշխանութիւն չունիմ թէ՛ ինծի օգտակար բան մը հայթայթելու և թէ՛ վնասակար եղող բանէ մը խուսափելու. սոսանց Աստուծոյ կամ-

(1) « Անոնց պիտի տամ երկար պայմանաժամ մը, որովհետեւ իմ հնարամտութիւնս անպարտելի է » (Քաղիմիւրքի)

(2) Այսինքն՝ այնքան մարդոց, որքան հրէշտակներուն մտահոգութիւն կը պատճառէ այդ օրը:

քին: Եթէ ապագայի (գաղտնի) բաները յայտնուէին ինձի, գանձեր պիտի հաւաքէի և բաղդին հարուածներէն զերծ պիտի կացուցանէի ինքզինքս. բայց ես մարդ մըն եմ, որուն սոսկ պաշտօն յանձնուած է հաւատացեալներուն յայտնել Աստուծոյ խոստումները և սպանալիքները:

189. Աստուած զձեզ ամենքդ ստեղծեց միակ մարդէ մը, որմէ կազմեց կինը, որպէս զի անոր կենակիցը ըլլայ. և երբ անոնք զուգուեցան, կինը ի սկզբան թեթեւ բեռ մը զգաց իր մէջը, որ զինքը չէր նեղեր քալած միջոցին: Բայց յետոյ երբ բեռը աւելի ծանրացաւ, այր և կին սա՛ աղօթքն ուղղեցին երկինք. Տէր, եթէ մեզի տաս բարեկազմ (1) տղայ մը, զեզի երախտագէտ պիտի ըլլանք (2):

190. Աստուած լսեց անոնց խնդրանքը (բարեկազմ զաւակ մը տալով) բայց անոնք փոխարէնը Սատանային հետեւելով կուռք պաշտեցին. հետո՛ւ իրմէ այս սրբապղծութիւնը:

(1) Արարերէն սալիհան բառն է, որ կը նշանակէ նաեւ աւաքինի, բարի: (Քաղեմիրսքի)

(2) Եւանջիստը կը պատմէ թէ երբ Եւա զգացեր է թեթեւ ծանրութիւն մը իր մարմնին մէջ, Սատանան՝ մարդու կերպարանք առած ներկայացեր և հարցուցեր է թէ ի՞նչ կայ փորին մէջը. Եւա պատասխաներ է. չեմ գիտեր: Սատանան յարե՛ր է. թեբեւս սա ճորակողին պէս կենդանի մըն է: Բայց երբ Եւայի յղուածութիւնն յաւաքացեր է, սատանան նորէն եկեր է և ինչպէս ըլլալը հարցուցեր է. այն ատեն Եւա պատասխաներ է. « վախճամ գուշակութիւնդ ճիշդ ելլէ. քալած և նստած ատենս նեղութիւն և ցաւ կը զգամ: » Սատանան այն ատեն ըսեր է. « Եթէ Աստուած իմ ինդրանքդը, քեզի և Ողամին նման զաւակ մը տայ, իմ անունովս պիտի կոչե՞ս: » Եւա խոստացաւ:

191. Կարելի՞ է Աստուծոյ հաւատար գասել չաստուածներ, որոնք ոչինչ կրնան ստեղծել, որոնք իրենք ստեղծուած են, որոնք անկարող են օգնութիւն ընծայելու և ինքզինքնուն ալ չեն կրնար օգնել:

192. Զանոնք երբ փրկութեան ճամբան հրաւիրէք, չպիտի հետեւին ձեզի. զանոնք հրաւիրէք թէ՛ ոչ, ո և է օգուտ յառաջ չի գար:

193. Անոնք (զոր Աստուծոյ կարգը կը գասէք) ձեզի նման գերիններ են. ուրեմն աղօթեցէք անոնց և տեսնենք թէ մտիկ պիտի ընեն ձեր խնդրանքին, եթէ անկեղծ էք:

194. Անոնք ոտք ունին քալելու համար, ձեռք ունին բան մը բռնելու, աչք ունին տեսնելու, ականջ ունին լսելու համար: Ըսէ՛ անոնց. կանչեցէք ձեր չաստուածները և ծուղակ մը լարեցէք ինծի դէմ. մի՛ կարծէք թէ կը վախճամ անոնցմէ,

195. Որովհետեւ իմ պաշտպանս Աստուած է, ան որ Քուրանը իջեցուց երկինքէն և որ կը պաշտպանէ արդարները:

196. Կուռքերը որոնց խուճկ կը մատուցանէք, անկարող են ձեզի օգնութեան հասնելու. անոնք ինքզինքնուն ալ չեն կրնար օգնել:

197. Երբ ստիպէք զանոնք որ փրկութեան ճամբուն մէջ մտնեն, քեզի չպիտի անասն երբէք. քեզի կը նային, բայց բան մը չեն տեսներ:

198. Ներողամիտ եղիր, բարիք գործել հրամայէ և փախիր ազէտներէն:

199. Եթէ սատանան թելադրութիւն մը ընէ քեզի, Աստուծոյ ապաստանէ՛, որովհետեւ ամէն բան զխտէ և կ'իմանայ ան:

200. Անոնք՝ որ Աստուծոյ կ'երկնչին (սասանային) փորձութեան ենթարկուած ատեննին պիտի յիշեն իր բարիքները և անմիջապէս լուսաւորուին պիտի :

201. Բայց անհաւատները <sup>(1)</sup> այլևս չպիտի կարենան փարատել այն խաւարակուռ ամպը, զոր սատանան պիտի թանձրացնէ անոնց շուրջը :

202. Եթէ անոնց աչքին առջեւ չփայլեցնես ցայտուն նշաններ <sup>(2)</sup>, պիտի ըսեն. ի՞նչ պատմութիւն ընելով կ'ուզես օրօրել մեզի : Պատասխանէ անոնց. ձեզի կը քարոզեմ միայն այն բանը, զոր Աստուած յայանց ինձի. այս Գիրքը կը պարունակէ աստուածային պատուիրաններ. հաւատացեալներուն լոյսն է ան և աստուածային գթութեան գրաւականը :

203. Քուրանը կարգացուած ժամանակ լուծեամբ (և ուշադրութեամբ) մտիկ ըրէք, որպէս զի արժանի ըլլաք աստուածային գթութեան :

204. Սրտիդ մէջ պահէ Աստուծոյ յիշատակը, երկիւզով և խոնարհամտութեամբ և առանց ցուցամոլութեան ազօթէ՛. այս պարտականութիւնը լրացուր առտու իրիկուն :

205. Բարձրեալին քովը եղող հրեշտակները ոչ միայն գոռոզարար չեն մերժեր հնազանդիլ իր օրէնքներուն, այլ անդադար կը գովարանեն զայն և պաշտամունք կը մատուցանեն :

(1) « Իրենց եղբայրները » կը թարգմանէ Քադիմիրաքի և կը յարէ որ յայտնի չէ թէ՛ Սատանային յատուկ մարդիկը պէտք է հասկնալ, թէ չէ՛ սատանաները :

(2) « Եթէ անոնց չբերես Քուրանի տուն մը »

ՎԵՐՋ Է. ԳԼՈՒԽԻ

ԳԼՈՒԽ Ը.

Ա Խ Ա Ր Ը

Տրուած՝ Մէտիքի մէջ. — 76 տուն

Յանուն ողորմած եւ անխեղար Ասուծոյ

1. Քեզի պիտի հարցնեն աւարի մասին<sup>(1)</sup>. պատասխանէ՛ անոնց. աւարը կը պատկանի Աստուծոյ և իր առաքեալին : Երկնչեցէք Տիրոջմէն, հաշտութեամբ կարգադրեցէք ձեր միջեւ եղած անհամաձայնութիւնները եւ եթէ հաւատացեալ էք, հնազանդեցէք Աստուծոյ և իր Մարգարէին :

2. Այն հաւատացեալները որոնք իրենց սրտին մէջ ունին Աստուծոյ երկիւզը, որոնց հաւատքը կ'աւելնայ քանի կարդան աստուածային պատուիրանները, որոնք Աստուծոյ վրայ կը դնեն իրենց միակ յոյսը,

3. Որոնք ազօթ կընեն և աղքատին գոգը կը թափեն իրենց շնորհուած ինչքերուն մէկ մասը,

4. Այդպիսիները ճշմարիտ հաւատացեալներն են, և երկնային թագաւորութեան մէջ պիտի գրաւեն բարձր աստիճան մը (Աստուծոյ քով) և պիտի վայելին Աստուծոյ գթութիւնն ու հոգիները :

5. Աստուած ինքն է որ քեզի թելադրեց թողուլ քու

(1) Պէտքի պատերազմէն վերջ աւարի բաժանումին միջոցին հաւատացեալներու միջեւ անհամաձայնութիւն յառաջ եկաւ. այդ առթիւ Մուհամմէտ տուաւ իր ժողովուրդին այս գլուխը. ուր նշանակուած են աւարի մասին օրէնքները :

տունդ, հակառակ անոր որ հաւատացեալներուն մէկ մասը կ'ընդդիմանար (1):

6. Անոնք քեզի հետ կը վիճարանէին այն ճշմարտութեան մասին որ արդէն յստակ կերպով երեւցած էր իրենց աչքին. (քեզի կը հետեւէին ակամայ) այնպէս ինչպէս եթէ դէպի մահը երթային, կամ զայն իրենց աչքին առջեւ ունենային:

7. Աստուած ձեզի խոստացած էր որ երկու ազգերէն մին (2) պիտի իյնար ձեր սուրին տակ. դուք փախաքեցաք որ զէնք չ'ունեցող ազգը ձեզի յանձնուի. բայց Աստուած ուզեց լրացնել իր խոստումները մինչեւ որ վերջին անհաւատը բնաջինջ ըլլայ:

8. Որպէս զի ճշմարտութիւնը փայլի, սուտը փառատի, հակառակ՝ ամբարիշտներու ջանքերուն:

9. Երբ դուք Բարձրեային օգնութիւնը խնդրեցիք, անիկա (ձեր խնդրանքը ընդունելով) պատասխանեց. հազար հրեշտակներ ձեզի օգնութեան պիտի զրկեմ:

10. Չեզի այս խոստումը տուաւ, որպէսզի ուրախութիւն և յոյս ծնեցնէ ձեր սրտերուն մէջ, ամէն օգնութիւն կուգայ Աստուծոյ, որ հզօր և իմաստուն է:

11. Աստուած ձեզի զրկեց ապահովութեան քունը (յիշեցէք այդ վայրկեանը.) անիկա երկիրքէն անձրեւ իջեցուց որպէս զի մաքրագործուիք և սատանային դարշանքներէն հեռանաք, ձեր սրտերը հաւատքին կապուին ու կորովնիդ հաստատուն ըլլայ:

(1) « Հակառակ որ հաւատացեալներուն մէկ մասը չուզելով կը հետեւէր քեզի. » կ'ակնարկէ Մուհամմէտի փախուստին՝ դէպ ի Մէքքէ:

(2) « Որ երկու բռնակներէն մին »

12. Այն ատեն Աստուած ըսաւ իր հրեշտակներուն. ձեզի հետ եմ ես, քաջալերեցէք հաւատացեալները. ամբարիշտներուն սրտին մէջ սոսկում պիտի թափեմ, իսկ դուք ձեր բազուկը իջեցուցէք անոնց գլուխներուն վրայ, ոտքերնուն և ձեռքերնուն զարկէք և անոնցմէ ոչ մէկուն խնայեցէք:

13. Այսպէս թող անոնք պատժուին, Աստուծոյ և իր առաքեալին բաժնուներուն համար. ո՛վ որ Աստուծոյ և անոր Մարգարէէն հեռանայ, փորձով պիտի զգայ թէ Աստուած անաւոր է իր վրէժներուն մէջ:

14. Թող անոնք կրակին չարչարանքները կրեն որովհետեւ անհաւատներուն համար պատրաստուած է ան:

15. Ո՛վ հաւատացեալներ, երբ տեսնէք որ թշնամի բանակը կարգապահութեամբ յառաջ կ'ընթանայ, փախուստ մի՛ տաք:

16. Ո՛վ որ պատերազմի օրը կոնակը դարձնէ եթէ նոր ուժով մը վերստին յարձակելու կամ համախմբուելու համար չէ, Աստուծոյ բարկութեանը պիտի ենթարկուի, իր բնակավայրը դժոխքը պիտի ըլլայ. սարսափելի՛ բնակավայր:

17. Դուք չէք զանոնք սպաննողը. Ամենակարողին սուրին տակ է որ ինկած են անոնք. դուն չես, Մուհամմէտ, անոնց վրայ յարձակողը, այլ Աստուած՝ որպէս զի հաւատացեալներուն տայ նշաններ՝ իր պաշտպանութեանը. Աստուած ամէն բան գիտէ և կ'իմանայ:

18. Իր բազուկը պաշտպանած է զձեզ, ինքն է որ թշնամիին հնարամտութիւնները ոչինչի կը վերածէ:

19. Ո՛վ անհաւատներ, (դուք յազթութիւն ուզեցիք, բայց) յազթութիւնը մեր կողմը եղաւ և մեր դատը ապահովեց: Եթէ (ամենէն առաջ դուք) դադրիք մեզի

դէմ կռուելէ ձեզի աւելի նպաստաւոր կ'ըլլայ. եթէ դուք կրկին պատերազմ մղէք, մենք ալ կը մղենք. ձեր բանակը ինչքան ալ մեծաթիւ ըլլայ, լաւագոյն վիճակ մը չպիտի ապահովէ ձեզի, որովհետեւ Աստուած հաւատացեալները կը պահպանէ:

20 Ո՛վ հաւատացեալներ, հնազանդեցէք Աստուծոյ և իր Մարգարէին. այս պարտականութիւնը բարձի թողի մի՛ ընէք երբէք. դուք լսեցիք իր խօսքը:

21. Մի՛ նմանիք անոնց՝ որ կ'ըսեն՝ մտիկ կ'ընենք ձեզի, բայց մտիկ չեն ըներ:

22. Յաւատանալանսին աչքին առջեւ գազաններէն աւելի գազրելի ըլլալ է՝ խուլ, համբ և ապուշ ըլլալը:

23. Եթէ Աստուած աղէկ արամագրութիւն մը գրուներ անոնց մօտ, բանականութիւն պիտի ապր անոնց. բայց եթէ այս չնորհը ընդունէին, շատ աւելի յամառութեամբ պիտի հեռանային հաւատօքէն:

24. Ո՛վ հաւատացեալներ, պատասխանեցէք Աստուծոյ և Մարգարէին կոչին, քանի որ զձեզ կ'ապրեցնէ. միտքերնիդ պահեցէք թէ Աստուած կը սպրդի մարդուն և անոր սրտին միջեւ, և թէ դուք ամենքդ իրեն պիտի վերադառնաք:

25. Երկնչեցէ՛ք անհնազանդութենէ (1). միայն ամբարիշտները չեն որ ենթակայ պիտի ըլլան անոր. գիտցէք թէ Ամենակարողը անարկու է իր վրէժներուն մէջ:

26. Յիշեցէ՛ք, թէ այս քաղաքին (Մէքքէի) պատերուն մէջ փոքրաթիւ և տկար էիք ատենօք, և կը վախնայիք որ բնաջինջ պիտի ըլլաք ձեր թշնամիներէն. բայց Աստուած պաշտպանեց ձեր տկարութիւնը և ապաստա-

(1) « Վախեցէ՛ք փորձութենէն . »

նարան մը ու առատ սնունդ տուաւ, որպէս զի երախտապարտ ըլլաք իրեն:

27. Ո՛վ հաւատացեալներ, զգուշացէ՛ք խաբելէ զԱստուած և Մարգարէն. ձեր յանձնառութեանց միջոցին խարդախութիւններ մի՛ ընէք, քանի որ լուսաւորուած էք:

28. Մտածեցէ՛ք որ ձեր հարստութիւնները և զաւակները փորձութեան առարկաներ են, ու մրցանակը՝ զոր Աստուած կը պատրաստէ ձեզի համար, սքանչելի է:

29. Ո՛վ հաւատացեալներ, եթէ կ'երկնչիք Աստուծմէ, անիկա զձեզ պիտի բաժնէ չարերէն. անիկա պիտի քաւէ ձեր մեղքերը, պիտի ներէ, ու զձեզ ողողէ պիտի իր առատաձեռնութեան գանձերովը:

30. Մինչ անհաւատները ծուղակներ կը լարէին քեզի դէմ (ո՛վ Մուհամմէտ), մինչ կը փափաքէին զքեզ ձերբակալել, սպաննել կամ վռնտել, Աստուած, որ շատ աւելի արթնամիտ է քան խաբերանները, ի դերեւ հանեց անոնց դաւադրութիւնները:

31. Երբ անհաւատներուն կարգաք մեր աստուածային պատուիրանները, կ'ըսեն. արդէն իմացած ենք ասոնք, մենք ալ կրնանք այդպէս բաներ արտադրել. հին պատմութիւններու հիւտուածք մըն է այդ:

32. Անոնք կ'ըսեն. ամենակարող Աստուած, եթէ Քուրանը ճշմարտութիւնը կը պարունակէ, մեր գլուխներուն վրայ քար թափել տուր երկինքէն և ամենէն ահաւոր պատուհասները կրել տուր մեզի:

33. (Բայց գիտցիր որ) Աստուած չի պատժէր զանոնք, որովհետեւ (1) դուն անոնց մէջն ես, և քու ներողամտութիւնդ կը հայցեն:

(1) « Ա, յնքան ատեն որ » (Քաղկեդոնացի)

34. Աստուած կարող էր իր վրէժին ենթարկել զանոնք, երբ հաւատացեալները կը մոլորեցնէին Մէքքէի տաճարէն. բայց իրենք ալ տաճարին բարեկամները չէին (1): Միայն առաքինի մարդիկ արժանի են տաճարին պահապաններն ըլլալու, բայց անոնք մեծ մասամբ չեն գիտեր այս բանը:

35. Նուիրական տունին մէջ անոնց ըրած աղօթքը կը բաղկանայ սոսկ շրթունքներով սուկիէն և ձեռքերնին իրարու զարնելէն (2): Անոնք օր մը սա բառերը պիտի լսեն. ձեր ամբարշտութեան պատիժը ճաշակեցէ՛ք:

36. Անհաւատները իրենց հարստութիւնը կը ծախսեն կրօնքին դէմ մաքառելով (ուրիշները Աստուծոյ ճանապարհէն մոլորեցնելու համար.) անոնք պիտի ծախսեն իրենց ունեցածը չ'ունեցածը, բայց յետոյ դառնորէն պիտի զղջան և պիտի յաղթուին:

37. Բոլոր անհաւատները դժոխքին մէջ պիտի ժողվուին:

38. Աստուած պիտի բաժնէ աղէկները զէշերէն, պիտի հաւաքէ ապիրատները և կրակին չարչարանքներուն մէջ պիտի նետէ. այն ատեն բոլոր չարերը պիտի փճանան:

39. Նենգամիտներուն ըսէ՛, որ եթէ վերջ մը դնեն իրենց անհաւատութեան, անցեալը պիտի ներուի. բայց

(1) «Պահապանները չէին»: Մէքքէի տաճարին պահապանը ըլլալը մեծ պատիւ մըն էր:

(2) Արար մեկնիչները կ'ըսեն թէ կուպաշտները բոլորովին մերկ կը պտրտէին տաճարին մէջ, թէ՛ այր և թէ՛ կին, թեւ թեւի մտած, ու Մուհամմէտի աղօթքը խանգարելու համար մատներով կը սուլէին և աղմուկ կը հանէին:

եթէ անգամ մըն ալ իյնան նոյն յանցանքին մէջ, թող աչքի առջեւ բերեն հին ժողովուրդներու օրինակը:

40. Պայքարեցէ՛ք անոնց դէմ մինչեւ որ հերձուածը (1) անհետանայ և սուրբ կրօնքը յաղթանակէ ամբողջ տիեզերքի վրայ: Եթէ անոնք իրենց ամբարշտութեանց վերջ մը դնեն, Աստուած վկայ պիտի ըլլայ անոնց աւարքին:

41. Եթէ անոնք յամառին մնալ իրենց անհաւատութեան մէջ, մտածեցէ՛ք թէ Աստուած ձեր պաշտպանն է և դուք պարտաւոր էք ապաւինիլ անոր հօր պաշտպանութեանը:

42. Գիացէ՛ք որ երբ աւար մը ձեռք ձգած էք, անոր մէկ հինգերորդ մասը կը պատկանի Աստուծոյ, Մարգարէին, աղգականներուն, որբերուն, աղքատներուն և ճամբորդներուն, եթէ կը հաւատաք Աստուծոյ և մեր ծառային եղած յայտնութիւններուն, այն յիշատակելի օրը, երբ երկու բանակներ իրարու բաղխեցան (2). Աստուծոյ զօրութիւնը անասման է:

43. (Յիշեցէ՛ք այն օրը երբ) դուք գետին մօտ (3) բանակած էիք մինչ թշնամին հակառակ եղբին վրայ էր և ձեր հեծեալօրքը ստորագաս էր: Հակառակ ձեր յանձնառութեանց անհամաձայնութիւնը պիտի մտնէր ձեր

(1) «Կուպաշտութեան փորձութիւնը» — Արարեւէն Քիթնէ բառն է այս, որ կը նշանակէ նաեւ անկարգութիւն, խառնակչութիւն:

(2) Ասիկա Պետրի կռիւին օրն է երբ առաջին անգամ հաւատացեալները դէմ յանդիման գտնուեցան անհաւատներուն և երբ, այս վերջիններուն պարտութեամբ երկու կրօնքներուն միջեւ բաժանում եղաւ:

(3) «Ամենէն մերձակայ անցքին վրայ» (Քաղիմիրքի)

միջև, բայց Ամենակարողը ուզեց լրացնել այն՝ զոր հրամայած էր իր պատուիրաններուն մէջ,

44. Որպէս զի կորսուելու դատապարտուածը ճգմուէր (երկինքի մէկ ակներև նշանովը) և յաղթանակէն վերապրելու սահմանուածը վկայ ըլլար իր փառքին: Աստուած ամէն բան գիտէ և կը լսէ:

45. (Յիշէ, ս'վ Մուհամմէտ թէ) Աստուած երազիդ մէջ ցոյց տուաւ թշնամի բանակը շատ փոքրաթիւ, եթէ աւելի անարկու ցոյց տար զայն, քաջութիւննիդ պիտի կորսնցնէիք և անհամաձայնութիւնը իրարմէ պիտի զատէր զձեզ: Աստուած ինայեց ձեզի այս բանը, որովհետեւ սրտերու խորը կը ճանչնայ ան:

46. Երբ պատերազմը սկսաք Աստուած ձեր աչքին առջև նուազեցուց թշնամիին թիւը. միւս կողմէ անոր աչքին առջև պղտիկ ցոյց տուաւ ձեր զինուորներուն բանակը որպէս զի ի կատար հանուի իր հրամաններուն մէջ վճուուածը. Աստուած վախճանն է ամէն բանի:

47. Ո՛վ հաւատացեալներ, երբ թշնամի բանակի մը դէմ կը գտնուիք, անխորտակելի եղէք, ամէն վայրկեան յիշեցէք զԱստուած որպէս զի երջանիկ ըլլաք:

48. Հնազանդեցէ՛ք Աստուծոյ և Մարգարէին. անհամաձայնութիւններ մի՛ հանէք, զուցէ մարի ձեր քաջութեան հուրը. հաստատակամ եղէք. Աստուած յարատեւութեամբ պայքարողներուն հետ է:

49. Մի՛ նմանիք անոնց՝ որոնք ցուցամոլութեամբ իրենց ընտանեկան օճախը կը ձգեն իրենց նմանները Աստուծոյ ճամբէն շեղեցնելու համար. Աստուած կը տեսնէ անոնց արարքները:

50. Աստանան անոնց արարքներուն արժէքը չափազանցելով ըսաւ անոնց. այսօր դուք անընկճելի պի-

տի ըլլաք. ձեր գլուխը անցնելով առաջ պիտի ընթանամ: Բայց երբ երկու բանակները երեւան եկան, ետ դարձաւ և ըսաւ. զձեզ կը լքեմ. ես կը տեսնեմ այն բանը զոր չէք տեսներ դուք<sup>(1)</sup>: Ես կը վախնամ Աստուծմէ որուն պատուհասները ստկալի են:

51. Անհաւատները և անոնք՝ որոնց սիրտը ապականած է, այն ատեն ըսին. անոնց հաւատքը խարեց զիրենք. ս'վ որ իր վստահութիւնը Աստուծոյ վրայ կը դնէ փորձով կը հաստատէ թէ անիկա գիտուն և իմաստուն է:

52. Ի՞նչ տեսարան պիտի պարզուի երբ հրեշտակները մահ սփռեն անհաւատներուն մէջ<sup>(2)</sup>. հրեշտակները անոնց երեսին և երիկամունքներուն պիտի զարնեն և սա խօսքերը պիտի ըսեն. գացէ՛ք հիմա ճաշակեցէք կրակի պատիժը:

53. Այս չարչարանքը իրենց ոճիրներուն հետեւանքն է, որովհետեւ Աստուած երբէք անարգարութիւն չ'ընէր իր ծառաներուն:

54. Անոնց ճակատագիրը նման է Փարաւոնի մարգոց և անոնցմէ առաջ ապրած անհաւատներուն ճակատագրին. Աստուած զանոնք յանկարծակիի բերաւ<sup>(3)</sup>. իրենց

(1) ձեւալէտաին կ'ըսէ թէ սատանային տեսածը հրեշտակներ էին:

(2) Էլ հազէլ կ'ըսէ թէ երբ մարգիկ մեռնին, երկու տհաւոր հրեշտակներ պիտի գան զանոնք հարցաքննել. զանոնք ոտքի վրայ կեցնելով պիտի հարցնեն, ո՞րն է Աստուածդ, մարգարէդ և կրօնքդ: Երբ տեսնեն որ անհաւատ է, սարսափելի հարուած մը կուտան անոր: Թալմուտականները գրեթէ միեւնոյն ըմբռնումն ունին այս մասին սա տարբերութեամբ որ, երբ հարցաքննուողը յանցաւոր ելլէ, մահուան հրեշտակը հարուածը կ'իջեցնէ շղթայով մը որուն կէսը երկաթ է և կէսը կրակ: (Թալմուտ)

(3) « Զանոնք ընտելն ըրաւ » (Քաղեմիրսքի)

չարագործութեանց միջոցին. անիկա ահարկու է իր պատիժներուն մէջ:

55. Աստուած ժողովուրդի մը շնորհած իր բարիքները երբէք ետ չ'առնէր, մինչեւ որ անոնց սիրտը նենգամտութեան չի դառնայ. ամէն բան կը տեսնէ և կը լսէ անիկա:

56. Անոնք կը նմանին Փարաւոնի ընտանիքին և անոնց՝ որ աւելի առաջ ուրացան մեր հաւատքը: Մեր վրէժինդրութիւնը անոնց վրայ թափեցաւ գործած ոճիրներնուն համար. այսպէս մենք փճացուցինք Փարաւոնի բանակը ջուրերուն մէջ, որովհետեւ ամբարիշտներէ կը բաղկանար ան:

57. Յաւիտենականին աչքին առջեւ Իսլամութեան հաւատքը մերժողը աւելի անարդ է քան անասունները:

58. Անոնք որ ամէն վայրկեան կը խզեն քեզի հետ կնքած դաշինքներն, Աստուծոյ երկիւղը չ'ունին բնաւ:

59. Երբ պատերազմի միջոցին անոնք քու ձեռքդ իյնան, չարչարանքներ կրել տալով ահարեկէ իրենց հետեւողները, որպէս զի խորհրդածին:

60. Երբ ժողովուրդի մը կողմէ մասնութիւն մը կրես, միեւնոյնը ըրէ անոր. անոնց ըրածը փոխարինէ որովհետեւ Աստուած կ'ատէ մասնիչները:

61. Անհաւատը թող չի կարծէ թէ աստուածային վրէժինդրութենէ պիտի խուսափի. անիկա չի կրնար կասեցնել (Աստուծոյ զօրութիւնը):

62. Զեր ջանքերը միացուցէք, (զօրաւոր ջոկատներ կազմեցէք) ձեր ձիերը հաւաքեցէք որպէս զի կարենաք սոսկում արեւ Աստուծոյ և ձեր թշնամիներուն, և նաև ձեր չը ճանչցած մարդոց թշնամիներուն սրտին մէջ. Աստուած կը ճանչնայ զանոնք: Աստուծոյ ծառայութեան

համար ինչ որ ծախսէք, փոխարէնը պիտի ստանաք. անիրաւութիւն չպիտի ըլլայ ձեզի:

63. Եթէ անոնք հաշտութիւն խնդրեն, դուն ալ հաշտուէ. վատահոլութիւնդ Աստուծոյ վրայ դիր. անիկա ամէն բան գիտէ և կ'իմանայ:

64. Երբ զքեզ մասնեյ ուզեն Աստուած պիտի արգիլէ անոնց դաւադրութիւնները. իր և հաւատացեալներուն օգնութեամբ զքեզ պիտի զօրացնէ. անոնց սրտերը պիտի միացնէ. աշխարհի բոլոր գանձերը անկարող պիտի ըլլային կազմելու այս միութիւնը. Աստուծոյ բարութեամբ միացն կը կազմուի ան. հզօր և իմաստուն է Աստուած:

65. Ո՛վ Մարգարէ, Աստուծոյ պաշտպանութիւնը բաւական է քեզի և անոնց՝ որ կը հետեւին քեզի:

66. Ո՛վ Մարգարէ, հաւատացեալները պատերազմի մղէ. ձեր մէջէն քսան քաջեր կարող եւ գետին տապալել երկու հարիւր անհաւատներ. ձեզմէ հարիւր հոգի կրնան հազար անհաւատ ի փախուստ դարձնել, որովհետեւ անոնք խելք չ'ունին:

67. Աստուած կը փափաքի ձեր ջանքերը մեղմացունել. անիկա գիտէ թէ դուք որքան տկար էք. ձեր մէջէն հարիւր քաջեր պիտի կարենան յաղթել երկու հարիւր թշնամիի. իսկ հազար քաջեր պիտի յաղթանակեն երկու հազարի, շնորհիւն Աստուծոյ որ քաջ մարդոց հետ կ'ըլլայ:

68. Ո՛չ մէկ մարգարէ կրցաւ գերիներ բռնել մինչեւ որ աշխարհի վրայ մեծ կոտորածներ չի սարքեց թշնամիին արիւնը թափելով. դուք կը փափաքիք աշխարհային բարիքները վայելել, բայց Աստուած կ'ուզէ տալ երկինքի գանձերը. հզօր և իմաստուն է ան:

69. Եթէ ձեզի Աստուած նախապէս պատուէրներ զրկած չըլլար <sup>(1)</sup>, ձեր գրաւած աւարները կրնային Աստուծոյ վրէժխնդրութիւնը ձեր վրայ հրաւիրել :

70. Ձեր թշնամիներէն գրաւուած և արտօնեալ բաներով սնանեցէք և Աստուծոյ կրկնչեցէք . զթած և անյիշաչար է ան :

71. Ո՛վ Մարգարէ, ձեր ձեռքը ինկած գերիներուն ըսէք . եթէ Աստուած տեսնէ որ ձեր սիրտերը ուղիղ են . պիտի տայ շատ աւելի թանկագին հարստութիւններ քան ձեզմէ խլուածները , ու ձեզի պիտի ներէ որովհետեւ զթած և անյիշաչար է :

72. Բայց եթէ գերիները քեզ խափել ուզեն , արդէն Աստուծոյ հանդէպ ալ խաբերայութիւն ըրած են <sup>(2)</sup> . անոնց բազմին իրաւարարը դուն ես <sup>(3)</sup> . հզօր և իմաստուն է ան :

73. Այն հաւատացեալները որոնք իրենց ընտանիքը թողով կ'երթան իրենց կեանքն ու ինչքը զոհելու Աստուծոյ դասին համար , աւարը պիտի բաժնեն <sup>(4)</sup> անոնց հետ որոնք Մարգարէին օգնութիւն և ապաստան կ'ընծային : Դուք չպիտի ընկերութիւն հաստատէք այն հաւատացեալներուն հետ , որոնք իրենց սուներուն մէջ կը մնան մինչև որ անոնք ալ պատերազմի չ'երթան , բայց երբ ձեր օգնութիւնը խնդրեն կրօնքի պաշտպանութեան համար , տուէք , միայն թէ ձեր գահնակիցներուն դէմ չ'ըլլայ . Բարձրեալը կը տեսնէ ձեր բոլոր գործերը :

74. Անհաւատները իրարու փոխադարձ օգնութիւն կ'ընծայեն , եթէ դուք ալ միեւնոյն ձեւով միութիւն մը չի հաստատէք ձեր միջև , անկարգութիւններ և մեծամեծ չարիքներ պիտի թափին երկրի վրայ :

75. Անոնք որ Աստուծոյ հաւատարով իրենց հայրենիքը կը թողուն հաւատքին գրոյչին տակ մաքառելու համար , և անոնք որ օգնութիւն ու ապաստան կ'ընծայեն Մարգարէին , ճշմարիտ հաւատացեալներ են և պիտի վաշկեկեն Աստուծոյ զթութիւնը ու արքայութեան փառաւոր շնորհները :

76. Անոնք որ ձեզմէ վերջ կը հաւատան Աստուծոյ և իրենց հայրենիքը ձգելով Իսլամութեան համար կը կրօնուին , ձեր ընկերները կը համարուին . բայց անոնք որ (արեան) կապելով ձեզի միացած են , իրարու աւելի մերձաւոր կը համարուին . անհաւասիկ թէ ինչ գրուած է Գիրքին մէջ , Ամենակարողին գիտութիւնը կ'ընդգրկէ ամբողջ տիեզերքը :

ՎԵՐՋ Ը . ԳՆՈՒՆԻ

(1) Գերիները ազատ արձակելու մասին :

(2) Իբր անհաւատներ Աստուծոյ հանդէպ միշտ խաբերայ կը ատուին արդէն :

(3) «Աստուած զանոնք քու ձեռքդ յանձնած է՛» (Քաղկեդոնի)

(4) «Ազգական պիտի համարուին : » ( « « )

ԳԼՈՒԽ Թ.

Զ Ղ Զ Ո Ի Մ <sup>(1)</sup>

Տրուած՝ Մէտիսնէի մէջ . — 130 տուն

1. Ահաւասիկ ապահարկութեան զեկույցը զոր Աստուած և իր Մարգարէն ըրին , այն կռապաշտներուն նըկատմամբ որոնց հետ դաշինք կնքեցիք :

2. Դուք (հաւատացեալներդ) չորս ամիս ճամբորդեցէք խաղաղութեամբ , և խորհեցէք թէ չէք կրնաք կասեցնել Ամենակարողին բազուկը որ նախատինքով պիտի ծածկէ անհաւատները :

3. Աստուած և իր Մարգարէն կը յայտարարեն (մարդոց) թէ ուխտագնացութեան օրերէն ետք կռապաշտները այլևս չպիտի արժանանան զթուութեան <sup>(2)</sup> . պէտք է փոխէք հաւատքնիդ . եթէ յամառիք մնալ անհաւատութեան մէջ , յիշեցէք որ չպիտի կրնաք ազատիլ Աս-

(1) Այս գլուխը Զղզում և կամ Պպահարկութիւն կը կոչուէ , որովհետեւ անոր մէջ խօսուած է ապահարկութեան մասին զոր Մուհամմէտ կուտայ անհաւատներու , առենի մը համար , և կամ՝ որովհետեւ այդ պայմանաժամը լրանալուն հաւատացեալները ազատ պիտի ըլլան ուզած կերպովին վարուելու կռապաշտներուն հետ : Ատիկա Բուրանին միակ գլուխն է որ « յանուն ողորմած և անյիշաչար Աստուծոյ » բանաձեւը չի կրէր , որովհետեւ , կ'ըսեն Արաբները , վրէժխնդրութեան վրայ խօսուած է անոր մէջ . նաեւ՝ այս գլուխը միակն է՝ զոր միանուագ կերպով տուած է Մուհամմէտ :

(2) « Աստուած և իր Մարգարէն ո եւ է յանձնառութիւն չեն ստանձներ կռապաշտներուն հանդէպ . » (Բազիմիբրբէ)

տուծոյ վրէժխնդրութենէն : Անհաւատներուն յայտարարէ թէ ինչքան ահաւոր պատիժներու պիտի ենթարկուին :

4. (Այսուհանդերձ) կռապաշտներուն հետ ձեր կրնաք զաշինքին հաւատարիմ մնացէք , եթէ անոնք ալ հաւատարիմ կը մնան , և եթէ ձեր թշնամիներուն չեն օժանդակեր : Աստուած կը սիրէ զանոնք որ իրմէ կ'երկրնչին :

5. Երբ (չորս) նուիրական ամիսները անցնին , կռապաշտները մեռցուցէք , ուր որ ալ գտնէք զանոնք . գերի բռնեցէք և պաշարեցէք զանոնք , ամէն կողմ թակարդներ լարեցէք : Բայց երբ փոխեն հաւատքնին , աղօթք ընեն , ողորմութիւն տան , այն ատեն հանդիստ ձգեցէք զանոնք , որովհետեւ Աստուած զթած եւ անյիշաչար է :

6. Երբ կռապաշտ մը ազատստանարան մը խնդրէ քեզմէ , սո՛ւր , որպէս զի կարենայ լսել Աստուծոյ խօսքը . յետոյ զայն տար ապահով տեղ մը , որովհետեւ ազիտութեան խուարին մէջ թաղուած է անիկա :

7. Աստուած և Մարգարէն միթէ կրնան դաշինք կնքած ըլլալ կռապաշտներուն հետ . սակայն և այնպէս , եթէ անոնք յարգեն Մէքքէի տաճարին մօտ կնքուած դաշինքը , դուք ալ հաւատարիմ եղէք անոր . (այնքան առտեն որ անոնք օրինաւոր ընթացք մը ցոյց տան ձեզի , դուք ալ փոխադարձաբար նոյնը ըրէք .) Աստուած կը սիրէ զանոնք որ իրմէ կ'երկրնչին :

8. Անոնք ինչպէ՞ս պիտի կարենան յարգել այն դաշինքը , եթէ իրենք յաղթական ելլեն , ո՛չ արեան կապերուն և ոչ ալ իրենց երզումին յարգ պիտի ընծայեն . (ըրբանով հաւանութիւն կը յայտնեն , մինչ իրենց սրտով կ'ուրանան . անոնք մեծ մասամբ ոճրագործներ են :) :

9. Քուբանի վարդապետութիւնը <sup>(1)</sup> ծախեցին զձուճ չահու մը փոխարէն . հաւատացեալները ուղիղ ճանապարհէն մոտրեցուցին . անոնց բոլոր արարքները անօրէնութեան նշանը կը կրեն :

10. Բոլոր սանձերը խորտակեցին . (հաւատացեալներուն հետ) իրենց կնքած բոլոր դաշինքները և արեան կապերը խզեցին (որովհետեւ անօրէն են) :

11. Բայց երբ իրենց սխալները ուղղեն , աղօթք կատարեն և ողորմութիւն տան , ձեր կրօնակից եղբայրները կ'ըլլան . Աստուծոյ պատուիրանները (յստակ կերպով) կը բացատրեմ անոնց՝ որ կրնան հասկնալ :

12. Եթէ , սակայն , իրենց հանդիսաւոր դաշինքը ուրանան և ձեր կրօնքը խանդարեն , յարձակեցէ՛ք անհաւատներու պետերուն վրայ (որպէս զի իրենց չարագործութիւնները զազրեցնեն ,) որովհետեւ անոնց համար նուիրական երգում չի կայ բնաւ :

13. Դուք պիտի մերժէի՞ք կուռիլ ուրացող ժողովուրդի մը դէմ որ կը ջանայ ձեր Մարգարէն վտարել . այդ ժողովուրդը ինքը կ'ըլլայ նախայարձակ , պիտի վախնա՞ք անկէ . բայց եթէ դուք հաւատացեալ էք , միթէ պէտք չէ՞ որ կրկնչիք Աստուծոյ :

14. Յարձակեցէ՛ք անոնց վրայ որպէս զի Աստուած պատժէ զանոնք ձեր ձեռքով , ու նախատիրքով ծածկէ զանոնք . զձեզ պիտի պաշտպանէ անոնց դէմ և հաւատացեալներուն սիրտը պիտի զօրացնէ :

15. Անհաւատներուն սրտին մէջէն զայրոյթը պիտի ջնջէ և իրեն հաճոյ թուածին պիտի ներէ , որովհետեւ գիտուն և իմաստուն է Աստուած :

(1) « Աստուծոյ պատուիրանները »

16. Դուք այնպէս խորհեցաք թէ պիտի լքուի՞ք , իբր թէ Աստուած չի գիտնար թէ որոնք են ձեր մէջէն կոռւի գացողները . երբ դուք , առանց զինակցի մնացած , ունէիք իբր միակ յենարան Աստուծոյ , իր Մարգարէին և մէկ քանի հաւատացեալներու բազուկը . Բարձրեալը կը տեղեկանայ ձեր արարքներուն :

17. Նուիրական տաճարին մուտքը արգիլուած պէտք է ըլլայ կուպաշաներուն , իրենց անկրօնութիւնը անարժան կը կացուցանէ զիրենք նուիրական տաճարին . պարապը պիտի երթան իրենց բոլոր գործերը ու կրակը պիտի ըլլայ իրենց յաւիտենական բնակարանը :

18. Աստուծոյ տաճարը թո՛ղ բաց ըլլայ անոնց առջեւ որոնք կը հաւատան Աստուծոյ և վերջին դատաստանին , որոնք աղօթք կ'ընեն և ողորմութիւն կուտան և Աստուծոյ զատ ո՛չ ոքէ կ'երկնչին . այսպիսիներուն համար փրկութեան ճամբէն ընթանալը զիւրին է :

19. Անոնք որ ուխտաւորներուն ջուր կը տանին <sup>(1)</sup> , կամ անոնք որ նուիրական վայրերը կ'այցելեն , միթէ հաւատա՞ք արժանիք պիտի ունենան այն հաւատացեալին հետ որ զէն ի ձեռին կը պաշտպանէ հաւատքը . Աստուած անոնց արարքներուն տարբեր տարբեր վարձատրութիւններ սանձմանած է , և չարերը չ'առաջնորդեր բնաւ :

20. Երկինքի թագաւորութեան մէջ ամենէն պատուաւոր տեղերը պիտի արուին ա՛յն հաւատացեալներուն , որոնք իրենց ընտանեկան երգիքէն բաժնուելով կ'երթան կուռիլ Աստուծոյ գրօչին տակ , եւ կը զոնն իրենց կեանքըն ու ստացուածքը :

(1) Ասիկա Ձեմիէմի աղբււրին ջուրն է , զոր հրեշտակը ցոյց տուաւ Հաքարին և ուրկէ կը խմեն ուխտաւորները . կրօնական յարգանքով մը :

21. Աստուած այսպիսիներուն կը խոստանայ իր գըթութիւնը . անոնք ենթակայ պիտի ըլլան իր հաճոյակատարութեան և պիտի բնակին երանութեան պարտէզներու մէջ ուր կը տիրապետէ գերագոյն երջանկութիւնը :

22. Հոն պիտի վայելն անվերջանալի , հաճոյքներ որովհետեւ Աստուծոյ վարձատրութիւնները չքեղ են :

23. Ո՛վ հաւատացեալներ , երբ ձեր հայրերն ու եղբայրները նախամեծար համարեն անհաւատ ըլլալ , դադրեցէ՛ք զանոնք սիրելէ . եթէ սիրէք զանոնք , նենգամբութիւն գործած պիտի ըլլաք :

24. Ձեր ծնողքը , ձեր տղաքը , ձեր եղբայրները , ձեր կիները , ձեր ազգականները , ձեր ձեռք ձգած հաւատութիւնները , ձեզի հաճելի եղող բնակարանները և այն առեւտուրը որուն փճանալուն վրայ կը վախնաք , եթէ ձեր սրտերուն վրայ աւելի մեծ ազդեցութիւն ունին քան Աստուած , քան իր Մարգարէն և նուիրական պատերազմը , սպասեցէք Քարձրեալին վճիռին . Աստուած երբէք չ'առաջնորդեր ամբարիշտները :

25. Քանի՛ քանի՛ անգամներ Ամենակարողը ձեզի զգացուց իր պաշտպանութեան արդիւնքները . յիշեցէ՛ք Հոնէյի օրը <sup>(1)</sup> երբ ձեր բանակին մեծ թիւը կ'ուռեցնէր ձեր սիրտը . այդ ահաւոր բանակը ի՞նչ բանի ծառայեց . երկիրը ձեզի շատ նեղ կուգար ձեր փախած միջոցին :

26. Աստուած յետոյ իր պաշտպանութիւնը իջեցուց իր առաքեալին և հաւատացեալներուն վրայ . անտեսանելի հրեշտակներու զօրագունդեր իջեցուց անհաւատները պատժելու համար . այս է պատիժը ամբարիշտներուն :

(1) Մէքքէէն երեք մղոն հեռու քաղաք մըն է այս , ուր Մուհամէտ 12000 հոգեով յաղթեց , շիճրէթի ութերորդ տարին :

27. Աստուած պիտի ներէ որու որ ուզէ , որովհետեւ զթած և անյիշաչար է :

28. Ո՛վ հաւատացեալներ , կռապաշտները պիղծ են . այս տարին լրանալէն վերջ թող այլեւս չը մերձենան Մէքքէի տաճարին . եթէ կը վախնաք որ աղքատ կը մընաք <sup>(1)</sup> Աստուած ձեր առջեւ պիտի բանայ իր գանձերը . անիկա գիտուն եւ խմաստուն է :

29. Կուռեցէ՛ք ընդդէմ անոնց որոնք բնաւ չեն հաւատար Աստուծոյ , ոչ ալ վերջին դատաստանին , որոնք արգիլուած չեն համարեր այն բանը զոր Աստուած և իր Մարգարէն արգիլած են , և որոնք չեն դաւանիր Հրէաներուն և Քրիստոնեաներուն ճշմարիտ կրօնքը : Պայքարեցէ՛ք անոնց դէմ , մինչեւ որ իրենց ձեռքով վճարեն հարկը և ձեզի հնազանդին :

30. Հրէաները կ'ըսեն . Օղայի Աստուծոյ որդին է . Քրիստոնեաները միեւնոյն բանը կ'ըսեն Մեօխիին համար (իրենց խօսքերը ասոնք են .) անոնք իրենցմէ առաջ եկող անհաւատներուն պէս կը խօսին . Աստուած պիտի պատժէ անոնց ստախօսութիւնները :

31. Անոնք տէր անուանեցին <sup>(2)</sup> իրենց քահանայակեաները , զպիրները և Մարիամի որդի Յիսուսը , փոխանակ միայն զԱստուած տէր կոչելու : Եւ սակայն իրենց հրաման եղած էր պաշտել միակ Աստուածը որմէ

(1) Քանի որ Մէքքէ եկողներուն հետ առեւտրական յարաբերութիւն չպիտի կրնային ունենալ :

(2) Կ'ակնարկէ Հրէաներուն գործածած Ռաբբի (տէ՛ր) տիտղոսին զոր անոնք կուտային իրենց քահանայակեաներուն իսկ Քրիստոնեաները իրենց քահանան . բուն , մինչդեռ Արաբները միայն Աստուծոյ կուտային այդ տիտղոսը :

զատ ուրիշ չկայ. անէ՛ծք անոնց՝ որոնք չստուգածները անոր հաւատար կը դասեն:

32. Անհաւատները պիտի ուզէին իրենց շունչովը մարել Աստուծոյ լոյսը, բայց Աստուած ա՛լ աւելի պիտի պայծառացնէ զայն, հակառակ՝ անհաւատներուն զգացած սոսկումն:

33. Աստուած զրկեց իր Մարգարէն ճշմարիտ հաւատքը քարոզելու համար, ու կրօնքին յաղթանակը կանգնելու միւս կրօնքներու աւերակին վրայ, հակառակ կուսպաշաներուն մղած ջանքերուն:

34. Ո՛վ հաւատացեալներ, գիտցէք որ քահանաներուն և զպիղծներուն մեծ մասը անօգուտ կերպով կը մտնէ ուրիշներու ստացուածքը (1) և մարդկը կը հեռացնեն Աստուծոյ ձամբայէն: Իմաց տուր անոնց որոնք իրենց գանձերուն մէջ ոսկի (և արծաթ) կը հաւաքեն բայց կը մերժեն հաւատքի պաշտպանութեան համար զրամ առ, թէ ահաւոր չարարանքներ պիտի կրեն:

35. Այն օրը ուր գեհնի կրակը կարմրի այդ ոսկին (և արծաթը) կիզի խարակներու փոխուելով պիտի փակցուին անոնց ճակատին, կողերուն և երիկամունքներուն վրայ ու անոնց պիտի ըսուի. ահա ձեր հաւաքած գանձերը, հիմա անոնց համը առէք:

36. Երբ Ամենակարօղը երկինքը ու երկիրը ստեղծեց տաներկու ամիսներ սահմանեց մէկ տարուան համար: Այս թիւը արձանագրուեցաւ նուիրական մատեանին մէջ: Այս ամիսներէն չորս հատը նուիրական են անխախտ հաւատարկը մըն է այս. յիշեալ ամիսներու ըն-

(1) Կ'ակնարկէ այն նուէրներուն զորս Հրէաները կուտային իրենց քահանաներու, թողութիւն ստանալու համար:

թացքին անօրէնութիւն մի՛ գործէք, բայց կուսպաշաներուն դէմ մաքառեցէք ամէն ժամանակ, ինչպէս որ անոնք ձեզի դէմ կը մաքառին: Գիտցէք որ Աստուած իրմէ երկրնչոզներուն հետ է:

37. Նուիրական ամիսները ուրիշ ժամանակի մը փոխադրելը անհաւատութիւնը աւելցնել կը նշանակէ. կուսպաշաները այս փոփոխութիւնը կը թոյլատրեն տարի մը և յաջորդ տարին կ'արգիլեն, որպէս զի Աստուծոյ կողմանէ նուիրական յայտարարուած ամիսները լրացուին: Այս ձեւով անոնք կը թոյլատրեն այն բանը զոր Աստուած արգիլած է. իրենց զէշ արարքներով կը պարծենան (1): Աստուած երբէք չ'առաջնորդեր ամբարիշտները:

38. Ո՛վ հաւատացեալներ, ինչո՞ւ անարեւելցաք երբ ձեզի ըսին՝ զացէք կտուի հաւատքին համար: Աշխարհային կեանքը նախապատիւ կը համարէք քան հանդերձեալ կեանքը. (դուք ինքզինքնիդ ցոյց տուիք այս աշխարհին կապուած, և դանդաղաշարժ եղաք:) Բայց ի՞նչ կ'արժեն աշխարհային վայելքները բաղդատմամբ երկնային շնորհներուն:

39. Եթէ պատերազմի չ'երթաք, Աստուած խստօրէն պիտի պատժէ զձեզ. ձեր տեղը ուրիշ ժողովուրդ մը պիտի դնէ, ու դուք չպիտի կրնաք կասեցնել անոր վըրէժինդր բազուկը, որովհետեւ իր զօրութիւնը անսահման է:

40. Եթէ մերժէք Մարգարէին օգնութիւն ընծայել, Աստուած պիտի ըլլայ անոր օգնականը, ինչպէս որ արդէն անոր բազուկը պահպանեց Մարգարէն երբ անհա-

(1) « Անոնց զէշ արարքները յատկապէս պատրաստուած են իրենց համար ստատանային ձեռամբ. » (Քաղկեդոնացի)

ւատները զայն վտարեցին: Իր փախուստի ընկերներէն մին օգնութեան հասաւ, երբ ապաստանած էին քարայրի մը մէջ (1). այն ատեն Մուհամմէտ ըսաւ անոր. սիրտդ դող մի՛ հաներ, Աստուած մեզի հետ է: Ձեր աչքերուն անտեսանելի եղող հրեշտակներու գունդ մը իջեցուց երկինքէն, զանոնք պահպանելու համար: Անհաւատներուն խօսքերը պարապը ելան, Աստուծոյ խօսքը փառաբանուեցաւ: Հզօր և իմաստուն է անիկա:

41. Երիտասարդներ և ծերեր (2). պատերազմի գացէք, ձեր կեանքը և ինչքը զոհեցէք հաւատքի պաշտպանութեանը համար. ասկէ աւելի փառաւոր բան չի կայ ձեզի համար. եթէ գիտնայիք:

42. Եթէ վերահաս և դիւրին յաղթանակի մը յոյսը ունենային անոնք, անմիջապէս պիտի վազէին դէպ ի պատերազմ (3), բայց ձամբուն երկայնութիւնը զիրենք վախցուց: Այսուհանդերձ անոնք կ'երդնուն յանուն Աստուծոյ ըսելով՝ եթէ կարենայինք, քու արշաւանքիդ պիտի մասնակցէինք: Անոնք այս կերպով իրենց կորուստը կը պատրաստեն, որովհետեւ Աստուած գիտէ թէ սուտ կը խօսին:

(1) Կ'ակնարկէ Մուհամմէտի Մէքքէէն փախուստին, ընկերակցութեամբ Ապուպէքրի: Կռապաշտները զանոնք հալածեցին, փախստականները մտան քարայրի մը մէջ, Աստուած սարգի մը հըրամայեց որ ոստայն մը հիւսէ քարայրի դրան վրայ, երբ կռապաշտները հասան քարայրին առջեւ ու տեսան ոստայնը, եզրակացուցին թէ ոչ ոք կար ներսը, և հեռացան:

(2) « Ծանրաբեռնուած ըլլաք թէ՛ թեթեւազն » կը թարգմանէ Քազիմիրսըի և կը յարէ թէ այս խօսքը կը նշանակէ « ձիաւոր ըլլաք թէ հետեւակ »:

(3) Կ'ակնարկէ Թապուքի արշաւանքին, ուր Մուհամմէտ կըսուեցաւ, Յոյներուն դէմ 30000 զինուորներով:

43. Երանի թէ Աստուած ներէ քեզի անոնց փափաքին գոհացում տուած ըլլալուդ համար. քեզի ժամանակ պէտք էր, որպէս զի կարենայիր ստախօսները զանազանել ճշմարտախօսներէն:

44. Անոնք որ կը հաւատան Աստուծոյ և իր վերջին գատաստանին, բնաւ չպիտի խնդրեն քեզմէ որ զիրենք զերծ կացուցանեն կուռելէ, այլ իրենց բոլոր հարստութիւնը պիտի տան և արիւնին պիտի թափեն Աստուծոյ գատին համար. անիկա գիտէ թէ որո՞նք կ'երկնչին իրմէ:

45. Իսկ անոնք որ ո՛չ Աստուծոյ, ո՛չ վերջին գատաստանին կը հաւատան, և որոնք տարակոյսի տարտամութեան մէջ կը տատանին, քեզմէ պիտի խնդրեն որ պատերազմելէ զերծ կացուցանեն զիրենք:

46. Եթէ հաւատքի դրօշին հետեւելու նպատակ ունեցած ըլլային, պատրաստութիւններ տեսած կ'ըլլային. բայց Աստուած որ զգուած էր անոնց ծառայութենէն, ա՛յլ աւելի սասակացուց անոնց վատութիւնը և ըսաւ. կնիկներուն քով կեցէք (1):

47. Եթէ երբէք ձեզի հետ մեկնած ըլլային, միայն ձեզի նոր ծախքեր պիտի պատճառէին ու ձեր բանակին մէջ պատակաւոր պիտի սերմանէին (պիտի ջանային ըմբոստութիւն գրգռել) արգ, ձեր մէջ կան մարդիկ որոնք կրնային անապ անոնց խռովարար խօսքերուն. բայց Աստուած կը ճանչնայ նենգամիտները:

48. Արդէն նախապէս ջանացին վառել խառնակչութեան կրակը. անոնք մինչեւ իսկ քու ծրագիրներուդ հակառակեցան, մինչեւ որ ճշմարտութիւնը իջաւ երկինքէն, Աստուծոյ կամքը յայտնուեցաւ ի հեծուկս անոնց:

(1) « Կեցէք անոնց քով որ տունը կը մնան » (Քազիմիրսըի)

49. Անոնցմէ ոմանք պիտի ըսեն քեզի. պատերազմի հարկէն զերծ ըրէ զմեզ, երկպառակութեան մէջ մի՛ միւրը- ձեր զմեզ (1). արդէն մխրձուած չե՞ն միթէ. բայց գեհնէն պիտի չըջապատէ անհաւատները:

50. Ձեր յաջողութիւնները անոնց վիշտ պիտի պատ- ճառեն, և երբ ձախորդութիւն մը հասնի ձեզի, անոնք պիտի գոչեն. մենք մեր միջոցները ձեռք առինք առաջ- ուրնէ: Յետոյ անհաւատութեան պիտի դառնան, և ձեր կրած ձախորդութեանց համար պիտի ուրախանան:

51. Ըսէ՛ անոնց. ձեր զլիտուն կուգայ միայն այն բանը, զոր Յաւիտենականը գրած է. մեր Տէրն է ան, հաւատացեալները թո՛ղ անոր վրայ դնեն իրենց վստա- հութիւնը:

52. Ըսէ՛ անոնց. ի՞նչ կ'ակնկալէք դուք, եթէ յազ- թական ըլլանք և կամ թէ՛ մարտիրոս (2). գալով մեզի, պիտի յուսանք որ Աստուած պիտի պատժէ զձեզ, և կամ ձեզմէ վրէժինդիր ըլլար մեզի պիտի յանձնէ. սպասեցէ՛ք և մենք այ ձեզի հետ պիտի սպասենք:

53. Ըսէ՛ անոնց. ձեր ինչքը կամովին թէ՛ ահամայ նուիրէք, ընդունելի չպիտի ըլլայ, որովհետեւ անհաւատ- ներու ժողովուրդ մըն էք դուք:

54. Աստուած կը մերժէ անոնց ընծաները, որովհե- տեւ չեն հաւատար իրեն և իր Մարգարէին. որովհետեւ չ'ուզելով ազօթք կ'ընեն ու ահամայ ողորմութիւն կու տան:

55. Անոնց հարստութիւնները և զաւակները թող չը հրապուրեն զքեզ. աղիաբեր շնորհներ են ատոնք

(1) « Փորձութեան մի՛ ենթարկէր զմեզ. » (Գաղիմիրացի)

(2) « Եթէ երկու գեղեցիկ ըմբերեն մէկը պատահի մեզի. »  
(Գաղիմիրացի)

զորս Աստուած տուած է, որպէս զի պատժէ զանոնք ու անհաւատութեան մէջ մեռցնել տայ:

56. Յանուն Աստուծոյ կ'երգնուն որ ձեզի գաղա- փարակից են, մինչդեռ հախառախ է. ձեզմէ վախնալ- նուն համար այս սուտը կը խօսին:

57. Անոնք կը փնտուն անձաւներ կամ քարայրներ (կամ ազահով տեղ մը) ու հոն կը վազեն իրենց դատար- քութիւնը ծածկելու համար:

58. Անոնց մէջ կան մարդիկ՝ որոնք կը գրպարտեն զքեզ ողորմութիւն բաշխելու համար, բայց երբ իրենց բաժին մը հանես այդ ողորմութենէն, գո՛հ կ'ըլլան. երբ բան մը չի տաս իրենց՝ կը բարկանան:

59. Ինչո՞ւ գո՛հ չեն ըլլար Աստուծոյ և Մարգարէին տուածովը, և ինչո՞ւ չեն ըսեր. երկինքի տուածը բաւա- կան է մեզի. Աստուած և Մարգարէն շնորհներով պիտի ողորկեն զմեզ, որովհետեւ Տիրոջը անունը կը յիշենք:

60. Նպաստը միայն անոնց համար է, որոնք աղ- քատ և չքաւոր են, որոնց սիրտը Խալամութեան նուիր- ուած է (1). զերկներուն ազատագրութեան համար է ան, պարտքերնին վճարելու անկարողներուն, ճամբորդներուն և նուիրական պատերազմի ծախքերուն համար է. Աստ- ուած կը հրամայէ այսպիսի բաշխում մը կատարել. գի- տուն և խմատուն ան:

61. Զրոպարտիչները կը յարձակին Մարգարէին վրայ և կը մեղադրեն զայն որ աղանջ կտրած է և ամէն խօս- քի կարեւորութիւն կուտայ: Պատասխանէ՛ անոնց. ա- նիկա մտիկ կ'ընէ ամէն բան որ ձեզի օգտակար է ու կը հաւատայ Աստուծոյ և հաւատացեալներուն:

(1) Հոնէնի պատերազմէն վերջ Մուհամմէտ նուէրներ բաշ- խեց Արարներուն, զանոնք Խալամութեան դատին շահելու համար:

62. Գթութիւնը հաւատացեալներուն վերապահուած է. անոնք որ Աստուծոյ Մարգարէին չարիք մը կը հասցնեն, սարսափելի պատիժի մը պիտի ենթարկուին:

63. Անհաւատները յանուն Աստուծոյ կ'երգնուն ձեր բարեացակամութիւնը չափելու համար, բայց եթէ հաւատացեալ եղած ըլլային, իրենց համար աւելի նպաստաւոր պիտի ըլլար Աստուծոյ և Մարգարէին շնորհը փնտռելը:

64. Անոնք չեն գիտեր որ Աստուծոյ և իր Մարգարէին ընդդիմացողները դժոխքին մէջ պիտի բնակին յաւիտեանապէս, և նախատինքներով պիտի ծածկուին:

65. Ամբարիշտները կը վախնան որ Աստուած երկինքէն կ'իջեցնէ Քուրանի գրուի մը և իրենց սրտին մէջ եղածները երեւան կը հանէ: Ըսէ՛ անոնց. դուք խնդացէք, Աստուած երեւան պիտի հանէ ինչ որ կը ծածկէք:

66. Երբ իրենց հարցում ուղղես այս վախին <sup>(1)</sup> մասին, կը պատասխանեն. մենք յատկապէս ըրինք, մենք կեղծեցինք, զձեզ կը ծաղրէինք: Պատասխանէ անոնց. ուրեմն Աստուծոյ հետ խաղաղ կ'ուզէք և իր կրօնքն ու Մարգարէն ծաղրել կ'ուզէք:

67. Այլեւս ջանք մի՛ ընէք զձեզ արդարացնելու. մոլորութեան հետեւելու համար հաւատաւորաց եղաք. եթէ ձեզմէ ոմանց ներենք, միւսները պիտի պատժենք, որովհետեւ ամբարշտութեան անձնատուր եղած են:

68. Նենգամիտները (այր թէ կին) զիրար կը գրգռեն չարիք գործելու, և արդարութեան գործը կասեցնելու համար. անոնք ձեռքերնին կը գոցեն ողորմութիւն չը տալու համար, կը մոռնան զԱստուած, և Աստուած ալ իր կարգին զանոնք պիտի մոռնայ, որովհետեւ նենգամիտներ են անոնք:

(1) « Խնդալնուն մասին » (Քաղկեդոնի)

69. Աստուած գեհնէն կրակովը կը սպառնայ անհաւատներուն և քապիրատներուն (այր ըլլան թէ՛ կին.) իրենց չարագործութիւնները հոն պիտի քաւեն Աստուծոյ անէծքը կրելով, և յաւիտեանական չարչարանքներէն զիջատուելով:

70. Դուք կը հետեւիք այն ամբարիշտներուն որոնք ձեզմէ առաջ եկան. անոնք աւելի ուժով ու աւելի կարող էին իրենց հարստութեամբ և զաւակներով. (առանց երբէք խորհելու հանդերձեալ կեանքին վրայ) երկնային հաճոյքները լիովի վայելեցին: Դուք ալ անոնց նման ձեր բաժինը վայելեցէք. անոնց ըրած խօսքերը կրկնեցէք: Անոնց արարքները այս աշխարհին եւ հանդերձեալին մէջ պարապը եկան ու անոնք կորստեան դատապարտուեցան:

71. Անոնք չեն գիտեր պատմութիւնը նախընթաց ժողովուրդներուն, Նոյի, Ատի, Արրահամի, Թէմուաի, Մատեան քաղաքի բնակիչներուն և կործանուած քաղաքներուն <sup>(1)</sup>. անոնք մարգարէներ ունեցան որոնք աչքերնուն առջեւ հրաշքներ գործեցին. Աստուած երբէք անարդարութեամբ չը վարուեցաւ անոնց հետ. իրենց կորստեան պատճառը իրենք են:

72. Հաւատացեալները (այր ըլլան թէ՛ կին) բարեկամական ընկերակցութիւն մը կը կազմեն. արդարութիւնը կը ծաղկեցնեն, անօրէնութիւնը կ'արգիլեն, ճշգրտապահութեամբ աղօթք կը կատարեն, նուիրական ողորմութիւնը կուտան, և կը հնազանդին Աստուծոյ և իր Մարգարէին: Անոնք պիտի վայելեն Աստուծոյ զթութիւնը, որովհետեւ հզօր և իմաստուն է ան:

(1) Կործանուած քաղաքները կը կոչուին « Հեգաբաղաք » կամ այն հինգ քաղաքները որոնք Մեռեալ Ծովին վրայ հաստատուած էին:

73. Ատուռած հաւատացեալներուն (այր ըլլան թէ՛ կին) կը խոստանայ գետերով սուղուած պարտէզներ, զանոնք պիտի մտցնէ Եղեմի պտորժելի բնակավայրին մէջ, ուր պիտի վայելեն յաւիտենապէս Աստուծոյ չնորհները և գերագոյն հաճոյքը:

74. Ո՛վ Մարգարէ, անհաւատներուն և ամբարիշտներուն զէմ կոխ մղէ. խոստեթեամբ վարուէ անոնց հետ. գեհներ պիտի ըլլայ անոնց անաւոր բնակարանը:

75. Յանուն Աստուծոյ կ'երգնուն անոնք որ երբէք զրպարտած չեն զքեզ. և սակայն թէ՛ իրենց խօսքերով և թէ՛ իրենց հաւատքով ամբարիշտ եղած են (Իսլամութիւնը ընդունելէ ետքը անհաւատ դարձած են.) իրենց բուն փափաքները չեն գոհացած (1). անոնք ապերափստ եղած են որովհետեւ Աստուած և Մարգարէն չնորհներով ողորդած են զանոնք. եթէ հաւատքնին փոխեն նպատակէր պիտի ըլլայ իրենց. այլապէս Աստուած զանոնք պիտի պատժէ թէ՛ այս աշխարհին և թէ՛ հանդերձեալին մէջ: Ամբողջ աշխարհի վրայ ո՛չ պաշտպան և ո՛չ ալ բարեկամ պիտի ունենան:

76. Իրենցմէ ոմանք խոստացած են Աստուծոյ որ եթէ իր բարութեան գանձերը բացուին իրենց առջեւ, ողորմութիւն պիտի տան և առաքինի գործեր պիտի կատարեն:

77. Աստուած լրացուց անոնց փափաքները, բայց անոնք ազան եղան դարձեալ. հաւատքէն հեռացան փոխարէն իրենց եղած բարիքներուն:

78. Աստուած տեսել պիտի տայ անարդարութիւնն անոնց սրտին մէջ մինչեւ այն օրն ուր իր առջեւ ելլեն

(1) Ա յսինքն՝ Մուհամմէտը չեն կրցած սպաննել:

(հաշիւ տայու համար.) անոնք իրենց երգումները մտնարով հաւատուրաց եղան:

79. Ձէին գիտեր միթէ որ Աստուած ծանօթ է իրենց գաղտնիքներուն և ծածուկ խօսքերուն. Աստուած կատարելապէս տեղեակ է բոլոր գաղտնի բաներուն:

80. Անոնք՝ որ վեհանձն հաւատացեալներու տուած ողորմութիւնը կը պարսաւեն, այնպիսիներուն՝ որոնք իրր ապրուստ իրենց աշխատութեանց պտուղը միայն ունին և որոնք կը ծաղրեն անոնց գիւրախաբութիւնը, Աստուծոյ ծաղրին նշաւակ պիտի ըլլան և անոր չարչարանքներուն զոհը:

81. Ի զուր անոնց համար պիտի հայցէիր եօթանասուն անգամ աստուածային զուժը, Աստուած չպիտի ներէ անոնց երբէք, որովհետեւ մերժեցին հաւատ ընծայել իրեն և Մարգարէին. անիկա երբէք չ'առաջնորդեր ամբարիշտները:

82. (Թապուքի արչաւանքին միջոցին) իրենց տունը մնացողները զոհ եղան որ Մարգարէին թոյլ տուին որ երթայ. անոնք մերժեցին պաշտպանել Աստուծոյ դատը իրենց ինչքովն ու կեանքովը: Անոնք ըսին. այս տաք եղանակին պատերազմի չ'երթանք: Պատասխան տուր անոնց. գեհներն կրակին ջերմութիւնը շատ աւելի կիզիչ է. եթէ գիտնային:

83. Թ՛ո՛ղ քիչ մը ատեն խնդան. յետոյ երկար ժամանակ պիտի լան, ի պատիժ իրենց վարմունքին:

84. Երբ Աստուած զքեզ ետ դարձնէ պատերազմէն (բանակի մը մէջտեղ,) այդ մարդիկը քեզմէ թոյլտուութիւն պիտի խնդրեն որ կոխել երթան. ըսէ՛ անոնց. զձեզ երբէք չպիտի ընդունիմ իմ զինուորներուս դասին մէջ. զուր երբէք չպիտի կոտելք թշնամիին զէմ իմ զը-

բօշիւ տակ . քանի որ առաջին անգամուն դուք նախա-  
մեծար հա արեցիք ձեր տունը մնալ քան թէ պատերազ-  
մի երթալ , մնացէք ուրեմն տկարներուն հետ :

85 . Երբ անոնց մէջէն մէկը մեռնի , երբէք մի՛ ա-  
ղօթեր անոր համար . անոր գերեզմանին վրայ կանգ մի՛  
առնեք . որովհետեւ անոնք երբէք չը հաւատացին Աստու-  
ծոյ և իր Մարգարէին և անհաւատութեան մէջ մեռան :

86 . Անոնց ձոխութիւններն ու բազմաթիւ գաւակ-  
ները թո՛ղ չը շրայնեն գլխի . Աստուած զանոնք պիտի  
պատժէ այդ շնորհներովն իսկ , ու անօրէնութեան մէջ  
պիտի մեռնին անոնք :

87 . Երբ Աստուած Քուրանի գլուխ մը իջեցուց եր  
կինքէն և հրաման րբաւ որ հաւատան իրեն ու իր Մար-  
գարէին և հետեւին անոր պատերազմի միջոցին , անոնց  
մէջէն ամենէն ազդեցիկները խնդրեցին որ զիրենք զերծ  
կացուցանէ և ըսին . զմեզ հոս ձգէ , մենք տունը մնացող-  
ներուն քով կ'ուզենք կենալ :

88 . Անոնք նախամեծար համարեցին տկարներուն <sup>(1)</sup>  
հետ մնալ . Աստուած իր կնիքը դրոշմեց անոնց սրտին  
վրայ , այլեւս չպիտի լսեն իմաստութեան ձայնը :

89 . Իսկ Մարգարէն և այն հաւատացեալները որոնք  
Իսլամութեան պաշտպանութեանն համար իրենց կեանքն  
ու ինչքը կը դոճեն , երկնային շնորհներով պիտի ողող-  
ուին և երանութիւն պիտի վայելն :

90 . Անոնք յաւիտենապէս պիտի բնակին Աստուծոյ  
պատրաստած երանութեան պարտէզներուն մէջ , ուր գե-  
տեր կը հոսին և ուր կը արիք գերագոյն երջանկութիւնը :

91 . Անապատի Արարներէն շատերը եկան թողտու-

ութիւն խնդրելու որ զերծ ըլլան պատերազմի երթալէ .  
անոնք որ չեն հաւատար Աստուծոյ և Մարգարէին , ի-  
րենց տուները մնացին . սարսափելի պատիժ մը պիտի  
կրեն այդ անհաւատները :

92 . Տկարակազմները , հիւանդները և անոնք որ  
ապրուտի միջոցներէ զուրկ են , հարկադրուած չեն պա-  
տերազմի երթալ , կը բաւէ որ Աստուծոյ և իր Մարգա-  
րէին հանդէպ անկեղծ ըլլան . բարիք գործողներն ալ մի  
եւնոյն պատուէրին ենթակայ են . Աստուած զթաժ եւ  
անյիշաչար է :

93 . Այն հաւատացեալները որոնք քեզի եկան եւ  
ձի խնդրեցին ու դուն ձի չ'ունենալուդ համար չկրցար  
տալ և անոնք արցունքոտ աչքերով ետ դարձան , յուսա-  
հատած՝ որ իրենց արիւնը չեն կրնար թափել Աստուծոյ  
դատին համար , նմանապէս զերծ պիտի ըլլան պատիժէ :

94 . Բայց այն հարուստները որոնք սպահարկու-  
թիւն կը խնդրեն , յանցաւոր պիտի նկատուին , անոնք  
նախամեծար կը համարեն իրենց տուններուն մէջ մնալ .  
Աստուած իր դատապարտութեան կնիքը կը դրոշմէ ա-  
նոնց սրտին վրայ , բայց չեն գիտեր :

95 . Երբ դուք պատերազմէն վերադառնաք անոնց  
քով , ներողութիւն պիտի խնդրեն ձեզմէ . ըսէ՛ անոնց  
պարապ տեղը ներողութիւն մի՛ խնդրէք , ձեզի չենք հա-  
ւատար . Աստուած ձեր ինչ ըլլալը հասկցուց մեզի , Աստ-  
ուած եւ իր Մարգարէն պիտի դատեն զձեզ , դուք պիտի  
տարուիք անոր առջեւ որ գիտէ բոլոր տեսանելի եւ ան-  
տեսանելի բաները եւ անիկա ձեր աչքին առջեւ պիտի  
պարզէ ձեր ըրածները :

96 . Պատերազմէ վերադարձած ատեննիդ , անոնք  
յանուն Աստուծոյ պիտի խնդրեն ձեզմէ , որ իրենց քով

(1) Կեներուն , տղոց և հիւանդներուն հետ :

չ'կենաք (և զիրենք չըզատժէք) . այ՛ո՛ , մի՛ կենաք անոնց քով , անոնք զարշելի են , գեհներ պիտի ըլլայ անոնց արարքներուն վարձքը :

97 . Անոնք ձեզմէ պիտի խնդրեն որ բարեացակամ ըլլաք իրենց . բայց եթէ գոհացում տաք անոնց վախաբին , յիշեցէ՛ք որ Աստուած կ'ստէ ամբարիշտները :

98 . Անապատին Արարները , անհաւատութեան և կեղծաւորութեան մէջ ամենէն յամառներն են , և բնական է որ չըզխման այն պատուիրանները զորս Աստուած յայտնեց իր Մարգարէին . Աստուած զիտուն է և իմաստուն :

99 . Անապատի Արարներուն մէջ կան շատեր որոնք կը կարծեն թէ արուած ողորմութիւնները կը գործածուին ժողովրդեան պարաքերը հատուցանելու (1) : Անոնք կը սպասեն որ ձախորդութեանց հանդիպիք , բայց իրենք են որ գէշ բազմին պիտի ենթարկուին . Աստուած զիտէ և կ'իմանայ :

100 . Արարներուն մէջ կան ոսանք՝ որոնք կը հաւատան Աստուծոյ և վերջին դատաստանին և նուիրական տուրքը կը համարեն միջոց մը Աստուծոյ մօտենալու և Մարգարէին աղօթքներուն մասնակցելու , անտարակոյս նուիրական տուրքը զանոնք կը մերձեցնէ Աստուծոյ . Աստուած իր անյիշաչարութեամբ ու զթութեամբ պիտի հասկցնէ իրենց այս բանը :

101 . Անոնք՝ որ ամենէն առաջ ձգեցին իրենց տունը տեղը , նուիրական պատերազմին երթալու համար , ու անոնք որ այս փառաւոր օրինակին հետեւեցան , արժանի եղան բարեկամութեանն Աստուծոյ , որ կը սիրէ զանոնք . Աստուած անոնց համար պատրաստած է պարտէզներ ուր

(1) « Որոնք տուրք մը կը նկատեն զայն » (Քաղկեդոնքի)

գետերը կը հոսին և ուր անոնք պիտի վայելեն յաւիտենական հաճոյքներ :

102 . Ձեր մօտերը բնակող խաչնարած Արարներուն և Մէտինէի բնակիչներուն մէջ կան Արարներ որոնք իրենց ամբարշտութեան մէջ կը յամառին մնալ . դուն զանոնք չես ճանչնար , ո՛վ Մուհամմէտ , բայց մենք կը ճանչնանք . կրկնակ պատիժներու պիտի ենթարկենք զանոնք (1) և յետոյ զարհուրելի չարչարանքներու պիտի ենթարկուին :

103 . Ուշիչներ այ կան որոնք յանցսուոր ըլլալին խոտտովանած են . այսպէսով անոնք ուզած են իրենց յանցանքը քաւել լաւ գործով մը . թերեւս Աստուած անոնց վրայ պիտի խոնարհեցնէ իր զթած նայուածքը , որովհետեւ ներողամիտ և անյիշաչար է ան :

104 . Անոնց հարստութենէն մէկ մաս մը ա՛ն իբր նպաստ , որպէս զի մաքրագործես զանոնք և իրենց մեղքերը քաւել տաս . աղօթէ՛ անոնց համար . քու աղօթքներդ խաղաղութիւն պիտի պարգեւեն անոնց հոգիներուն . Աստուած զիտէ և կ'իմանայ ամէն բան :

105 . Ձե՛ն գիտեր անոնք թէ Աստուած կ'ընդունի իր ծառաներուն զղջումը և տուած ողորմութիւնը . զըթած և անյիշաչար է ան :

106 . Ըսէ՛ անոնց զարձեալ . գործեցէք . Աստուած և իր Մարգարէն և հաւատացեալները ակամատես են ձեր գործերուն . դուք դատաստանին առջեւ պիտի ելլէք ա՛նոր՝ որ կը տեսնէ բոլոր տեսանելի և անտեսանելի բաները : Անիկա ձեզի ցոյց պիտի տայ ձեր արարքները :

107 . Ուրիչներ այ կան որոնք կըսպասեն Աստուծոյ

(1) Այսինքն՝ այս աշխարհին և հանդերձեալին մէջ :

վճիռն և պատրաստ են հպատակելու անոր պատիժնե-  
րուն կամ շնորհներուն. Բարձրեալը գիտուն է և իմաս-  
տուն :

108. Անոնք որ կանգնեցին այս տաճարը (հաւա-  
տացեալներուն վնասելու համար) և նպատակ ունենալով  
զանոնք իրարմէ բաժնել և որպէս զի Աստուծոյ և Մար-  
գարէին դէմ կուռողները այնտեղ կարենան լարել իրենց  
ծուղակները, պիտի ըսեն թէ իրենց նպատակը բարի էր .  
բայց Ամենակարողը վկայ է իրենց սուտին (1) :

109. Զըլլա՛յ որ մանես այդ տաճարէն ներս. ճշմա-  
րիտ տաճարը բարեպաշտութեան հիման վրայ կանգնած  
է (2). դուն հոն միայն պարտաւոր ես աղօթել. մահկա-  
նացուները այնտեղ միայն պէտք է փափաքին մաքրա-  
գործուիլ, որովհետեւ Աստուած կը սիրէ մաքրագործ-  
ուածները :

110. Երկու տաճարներէն ո՞րը աւելի կ'արժէ և  
ո՞րը հիմնուած է աւելի հաստատուն հիման մը վրայ. ա-  
նիկա՞ որ Աստուծոյ երկիւղին վրայ կառուցուած է (և  
անոր հաճոյ ըլլալու համար,) թէ՛ ան՝ որ կաւով շինուած  
է ու հեղեղը փոս մը բացած է անոր տակ, և ենթակայ  
է դժոխքի կրակին մէջ փլչելու : Աստուած երբէք չ'ա-  
ռաջնորդեր չարերը :

111. Անոնց սրտերը պատառ պատառ պիտի ըլլան,  
երբ իրենց կասկածներովը բարձրացած այդ շէնքը քան-  
դուի. Աստուած գիտուն է և իմաստուն :

(1) Պէնու կանեմ ցեղը տաճար մը կանգնած էր և Մուհամ-  
մէտը հոն հրաւիրած էր որ աղօթք ընէ, եպատակ ունենալով ար-  
շաւանքէ մը ետ կեցնել զայն, կամ անոր դէմ դաւադրութիւն  
մը լարել :

(2) Կ'ակնարկէ Բոպայի տաճարին զոր Մուհամմէտ կանգնած  
էր Մէքքէէն փախչելէն վերջ :

112. Աստուած հաւատացեալներուն կեանքն ու ինչ-  
ըր գնած է փոխարէնը տալու համար արքայութիւնը .  
անոնք պիտի կուռին, իրենց թշնամիները պիտի սպան-  
նեն և իրենք ալ պիտի սպաննուին : Աստուծոյ խոստումը  
ճշմարիտ է. Հնգամատեանին, Աւետարանին և Քուրա-  
նին մէջ ի՛նչ խոստում որ տուած է, պիտի գործադրուի :  
Միթէ կա՞յ մէկը որ Աստուծմէ աւելի հաւատարիմ ըլլայ  
իր դաշինքին. ուրախացէ՛ք ձեր կնքած դաշինքին համար,  
անհուն երջանկութիւն մըն է ան :

113. Անոնք որ զղջում կը յայտնեն և կը պաշտեն  
զԱստուած, կը գովաբանեն զայն, կ'աղօթեն անոր,  
կ'երկրպագեն, ծով կը պահեն, արգարութիւն ի գործ կը  
գնեն, չարագործութիւնները կ'արգելեն և աստուածային  
պատուիրանները կը պահեն, երջանիկ պիտի ըլլան : (Այս  
բարի լուրը աւետէ հաւատացեալներուն :)

114. Մարգարէն և հաւատացեալները պէտք չէ որ  
Աստուծոյ մօտ բարեխօսեն կռապաշտներուն ի նպատակ,  
եթէ նոյն խոկ անոնք ըլլան իրենց ազգակամները, քանի  
որ գիտեն թէ կռապաշտները զժողովին մէջ պիտի ըլլան :

115. Արբանձամ իր հօրը խոստացած ըլլալուն համար  
էր որ Աստուծոյ գթութիւնը խնդրեց անոր համար. բայց  
երբ յայտնի եղաւ որ իր հայրը Աստուծոյ թշնամին էր,  
իր յանձնատութիւնը խղեց, հակառակ որ Արբանձամ բա-  
րեպաշտ և մարգատէր էր :

116. Աստուած չի մոլորեցնէր այն ժողովուրդը որ  
չիտակ ճամբան առաջնորդած է արդէն՝ մինչեւ որ անոր  
չի յայտնէ թէ ի՛նչ բանէ պէտք է երկնչի, որովհետեւ իր  
գիտութիւնը անտանձան է :

117. Երկինքի և երկրի վեհապետը Աստուած է.  
կեանքը և մահը ան կուտայ. իրմէ վատ ուրիշ պաշտ-  
պան և սէր չ'ունիք :

118. Աստուած իր բարութիւնը յայտնեց Մարգարէին, հաւատացեալներուն և անոնց զինակիցներուն <sup>(1)</sup> կռիւին օրը. երբ հաւատացեալներուն մէկ մասը փախուտ տալու վրայ էր. բաբելոնի նայուածք մը զանոնք կատեցուց: Աստուած անոնց նայեցաւ որովհետեւ բարութեամբ և գթութեամբ լեցուն է:

119. Անոնց մէջէն երեք հոգի ետ մնացած էին. ընկերական շրջանակներէ վատրուած, իրենց քաղաքացիներուն մէջ աքտորի ենթարկուած կը զգային ինքզինքնին <sup>(2)</sup>, և իրենց անձկութեան մէջ կը խորհէին թէ Աստուծոյ զատ ուրիշ սպաստան չ'ունին: Աստուած անոնց վրայ նայեցաւ բարութեամբ, որովհետեւ անոնք իրեն զիմեցին և որովհետեւ (մեղանշողներուն հանդէպ) գթած և ներողափառ է:

120. Ո՛վ հաւատացեալներ, երկնչեցէք Աստուծոյ և արդարութիւն ի գործ զրէք:

121. Մէտինէի բնակիչները և շրջակայ (ժողովառաջընկ) Արարները ո՛չ մէկ պատճառ ունէին Մարգարէն լքելու, և իրենց կեանքը նախամեծար համարելու քան անոր կեանքը. անօթութիւնը, ծարաւը, յոգնութիւնը զոր կրեցին Աստուծոյ դատին համար, անհաւատներուն դէմ մղած իրենց կռիւները, անոնցմէ կրած նեղութիւնները, իբր արժանիքներ նկատի կ'առնուէին, որովհետեւ Աստուած երբէք կորսնցնել չի տար բարեք գործողներուն վարձատրութիւնը:

122. Անոնց ըրած ծախքերը <sup>(3)</sup>, (պատերազմի գացած միջոցնուն)ինչ հեղեղներու վրայէ որ անցնին, Աս-

(1) « Մուհամմադներուն և Ահմադներուն » Բագիմիրքի

(2) « Աշխարհը նեղ կուգար իրենց »

(3) « Մեծ թէ փոքր ի՛նչ նպաստ որ տան »

տուծոյ Գիրքին մէջ գրուած բոլոր այն ձեռնարկները զորս կը կատարեն <sup>(1)</sup>, զիրենք արժանի կը կացուցանեն Աստուծոյ շքեղ պարգևներուն:

123. Պէտք չի կայ որ հաւատացեալները միաժամանակ զէնք առնեն պատերազմի երթալու համար, լաւ է որ իւրաքանչիւր ցեղէ մաս մը մնայ, որպէս զի հաւատքի ուսումը շարունակէ, և երբ պատերազմի գացողները վերադառնան, անոնց ալ ուսուցանէ:

124. Ո՛վ հաւատացեալներ, ձեզի գրացի եղող անհաւատներուն դէմ պատերազմեցէք. յանձին ձեր թող անոնք գտնեն անբնիկների թշնամիներ. յիշեցէք որ Բարձրեալը իրմէ երջնաւորներուն հետ է:

125. Երբոր Քուրանի նոր գլուխ մը զրկուի ձեզի երկիրքէն, անոնք պիտի ըսեն. « Զեր մէջէն ո՛վ կը հաւատայ այն վարդապետութեան <sup>(2)</sup>, այո՛, անիկա պիտի զօրացնէ հաւատացեալներուն հաւատքը, և անոնք անոր մէջ պիտի գտնեն իրենց մխիթարութիւնը »:

126. Բայց անոնք՝ որոնց սիրտը փտախառուորած է, վէրքերնին աւելի պիտի ածի Աստուծոյ ձեռքով <sup>(3)</sup> և անոնք պիտի մեռնին իրենց ամբարշտութեանց մէջ:

427. Չե՛ն տեսներ որ տարին մէկ երկու անգամ երկիրքի զայրոյթը իջաւ անոնց վրայ. բայց այս ազգաբարութիւնները տակաւին չը բացին անոնց աչքերը և անոնք զզջում չը յայտնեցին:

128. Երբ Քուրանի ուրիշ գլուխ մը զրկուի իրենց

(1) « Եթէ նոյն իսկ Աստուծոյ գիրքին մէջ գրուած չ'ըլլան »

(2) « Այս նոր գլուխը կրնայ զօրացնել ձեր մէջէն ո եւ է մէկուն հաւատքը » (Բագիմիրքի)

(3) « Աստուած անարգանք անարգանքի վրայ պիտի դիզէ անոնց վրայ »

երկինքէն, փոխադարձաբար իրարու պիտի նային և պիտի ըսեն. մէկը կը նայի՞ մեզի, յետոյ պիտի փակչին: Աստուած անոնց սիրտերը մոլորեցուցած է, որովհետև իմաստութեան ձայնին չեն անսար բնա՛ւ:

129. Ձեր մէջէն նշանաւոր մարգարէ մը երեւան ելաւ. անիկա ձեր յանցանքներուն ծանրութիւնը իր վրայ կը կրէ. ձեր փրկութեան փափաքովը կ'այրի ան, ու հաւատացեալները իրմէ գթութիւն եւ անյիշաչարութիւն միայն պիտի ակնկալեն:

130. Եթէ անոնք մերժեն հաւատալ այն կրօնքին զոր դուն կ'ուսուցանես իրենց, ըսէ՛. Աստուած բաւական է ինձի, իրմէ զատ ուրիշ Աստուած չի կայ. իմ վտահութիւնս անոր վրայ գրած եմ. անիկա գերագոյն գահուն վեհապետն է:

ՎԵՐՋ Թ. ԳԼՈՒԽԻ

ԳԼՈՒԽ Ժ.

Յ Ո Վ Ն Ա Ն

Տրուած՝ Մէքէի մէջ. — 109 տուն

Յանուն ոլորմամ եւ անյիշաչար Աստուծո

1. ԷյիՖ, յամ, բե. ահա ասոնք են իմաստութեան Գիրքին նշանները:

2. Մարդիկ պէ՞տք է զարմանան որ մեր յայտնութիւնները չնորհեցինք իրենց քաղաքացիներէն մէկուն, և անոր հրաման ըրինք յայտնել չարերուն սահմանուած պատիժները ու հաւատացեալներուն վարձատրութիւնները: Ասոր հետ մէկտեղ անհաւատները ըսին. այդ մարդը կախարդ մըն է:

3. Ձեր տէրը այն Աստուածն է որ վեց օրուան մէջ ստեղծեց երկինքն ու երկիրը, և յետոյ նստաւ իր գահուն վրայ տիեզերքի գործերը կառավարելու համար: Կարելի չէ բարեխօսել իրեն մօտ մինչև որ չի թոյլատրէ. անիկա ձեր Աստուածն է, պաշտեցէ՛ք անոր գերագոյն վեհափառութիւնը: Աչքերնիդ չալիտի՞ բանաք դուք:

4. Դուք ամենքդ իրեն պիտի վերագառնաք, իր խտտումները անխաղաղան են. ան որ մարդը ստեղծեց, իր ատեանին ուղեւ պիտի հանէ, արդարութեամբ պիտի վարձատրէ հաւատացեալները որոնք առաքինի ելած են: Անհաւատները ծարաւնին անցընելու համար եռացող ջուր պիտի խմեն, և իրենց անհաւատութեան արժանի չարչարանքներ պիտի կրեն:

5. Աստուած է որ արեւին տուած է լոյս և լուսինին պայծառութիւն<sup>(1)</sup>։ Աստուած է որ կարգ կանոնի զբրած է անոնց շարժումները, որոնք կը ծառայեն մարդոց ժամանակի բաժանումները կատարելու և սարկները հաշուելու։ Աստուած այս բոլորը պարագ տեղը չը ստեղծեց․ անիկա ամենուրեք իր զօրութեան նշանները կուտայ իմաստուններուն։

6. Գիշերուան և ցերեկուան յաջորդականութիւնը, երկինքի մէջ և երկրի վրայ ստեղծուած մարմինները, ցայտուն նշաններ են անոնց համար՝ որոնք կ'երկնչին Աստուածմէ։

7. Անոնք որ չեն սպասեր բնաւ յարութեան օրին, և որոնք աշխարհային կեանքի հրապոյրներէն զբաւուած անհոգութեամբ կը քնանան, և անոնք որ մեր պատգամները կ'արհամարհեն,

8. Դժոխքին կրակը պիտի ստանան ի վարձ իրենց արարքներուն։

9. Իսկ անոնք որ կը հաւատան և սուսքինի են, Աստուծոյ ձեռքով պիտի առաջնորդուին, և պիտի հանդչին երանութեան պարտէզներուն մէջ գետերուն ափին վրայ։

10. Անոնք հոն պիտի փառարանեն Բարձրեայր, և զիրար ողջունելու համար պիտի բռնեն շարունակ․ խաղաղութիւն ընդ ձեզ։

11. Անոնց ազօթքը սա բառերով պիտի վերջանայ․ փո՛ռք Տեառն, տիեզերքի վեհապետին։

12. Եթէ Ամենակարողին ձեռքը մահկանացուներուն

(1) « Աստուած արեւը ստեղծեց լոյս սփռելու և լուսինը՝ լոյս տալու համար. » (Քաղիմիրքի)

պատիժ սուր նոյն այն արագութեամբ որով կը փափաքին ունենալ վարձատրութիւնը, իրենց օրերը փայլակի մը անեղղութիւնը միայն պիտի ունենային։ Բայց անոնք որ չեն հաւատար թէ իրենց մահէն վերջ օր մը կրկին զմեզ պիտի տեսնեն, կը թողունք որ միան իրենց մուրութեան մէջ։

13. Երբ մարդուն գժրագլութիւն մը ալցելէ, անիկա պառկած ըլլայ թէ օտքի վրայ, մեզի դէմ գանգառ կը բարձրացնէ․ հաղիւ թէ զայն կ'ազատենք զի քը ճնշող բռնէն, այնպիսի բաներ կ'ընէ որ կարծես թէ մեր օգնութիւնը ինդրած է՝ ըլլար և զինքը մխիթարած է՝ ըլլայինք․ ահա այսպիսի բաներ ընել կուտայ ապերախութիւնը ամբարիշտին։

14. Ձեզմէ առաջ մեր վրէժխնդրութիւնը փճացուց ոճրագործ աղգերը, որոնց մարգարէներ զրկած էինք զիրենք ճշմարիտ ճամբուն մէջ բերելու համար․ մենք ահա այսպէս կը պատժենք ամբարիշտները։

15. Անոնց փճացումէն վերջ գձեզ հաստատեցինք այս երկրին վրայ, որպէս զի տեսնենք թէ ի՞նչ ընթացք պիտի բռնէք զուրք։

16. Երբ անոնց առջեւ պարգեցինք Իսլամական կըրօնքը<sup>(1)</sup>, անհաւատները բսին․ մեզի ուրիշ Քուրան մը իջեց՛ւր երկինքէն, կամ ասիկա (քիչ մը) փոխէ։ Պատասխանէ՛ անոնց․ ես բան մը չեմ կրնար փոխել (իմ նախաձեռնութեամբ) ես կը գրեմ ինչ որ յայտնուի ինձի․ եթէ Աստուծոյ անհնազանդ ըլլամ, կը վախնամ ահաւոր օրուան տանջանքներէն։

17. Ըսէ՛ անոնց․ եթէ Աստուած ուզէր, ես ձեզի երբէք չէի կարգար Քուրանի պատուիրանները և զա-

(1) « Մեր պատուիրանները, » (Քաղիմիրքի)

հոնք չէի ուսուցանէր ձեզի: Ձեր մէջ երկար տարիներ ապրած եմ առանց քարոզութիւն ընելու <sup>(1)</sup>: Ձէք հասկնար գուք:

18. Ի՞նչ բան կայ աւելի յանցաւոր, քան Աստուծոյ վերագրել սուտ մը և անոր նշաններուն հաւատ չընծայել. ամբարիշտներուն գործը երբէք չպիտի բարգաւաճի:

19. Մտնք Աստուծոյ վայել պաշտամունք կը մատուցանեն կուռքերուն, որոնք ո՛չ կրնան վնասել իրենց, ոչ ալ օգնութեան համիլ, ու անոնք կ'ըսեն. ա՛հ՛ մեր բարեխօսները Աստուծոյ մօտ: Հարցո՛ւր անոնց. Ամենակարողին կրնա՞ք սորվեցնել բան մը, զոր գիտցած չ'ըլլայ երկինքի մէջ և երկրի վրայ. գովեա՛լ է իր վսեմ անունը. անէ՛ծք երեւակայա՛ն չաստուածներուն. (Աստուած այնքան բարձր է, որ ոչ մէկ կուռք կը համի տնոր:)

20. Բոյր մարդիկ ի սկզբան միտակ հաւատք մը <sup>(2)</sup> կը ձեւացնէին. այնուհետև անոնք կրօնական վիճարանութիւններու մէջ մտան. եթէ Աստուծոյ խօսքը ի սկզբանէ չի յայտնուէր, իրենց վիճարանութեան տեղի տուող ինդիքը կարգադրուած կ'ըլլար մինչև հիմա:

21. Անոնք կ'ըսեն. եթէ գոնէ Աստուած նշանով մը յայտնած ըլլար իր Մարգարէն, մենք պիտի հաւատայինք: Պատասխանէ՛. զաղանիքները իրեն կը պատկանին. սպասեցէք, ես ալ պիտի սպասեմ:

22 Մեր գթութիւնը շնորհեցինք անոնց <sup>(3)</sup>, ու տնոնք ազատեցան զիրենք վշտահար ընող գեթադրութիւններէն. բայց անոնք խարերայութեամբ վարուեցան մեր

(1) Ինչպէս կը յիշուի, Մուհամմէտ 40 տարեկան էր, երբ քարոզութեան ձեւնարկեց:

(2) « Միտակ ժողովուրդ մը »

(3) Կ'անկարկէ՛ Մէքքէի ժողովուրդին:

նշաններուն հետ: Ըսէ՛ անոնց. Աստուած աւելի կարող է խարերային հետ պուխ ելլելու համար. հրեշտակները զձեզ կը զիտեն և ձեր խարերայական արարքները գրի կ'առնեն:

23. Աստուած է որ ձեր ճամբան կը բանայ երկրի և ծովուն վրայ. երբ դուք նաւարկէք նաւով մը որ նըպատաւոր հովի մը շնորհիւ կ'ընթանայ, կ'սկսիք հրճուել. բայց երբ հովը սաստկանայ, փոթորիկը մահչէ, ալիքները ամէն կողմէ պութկան, այնպէս որ կը կարծէք թէ պիտի խեղդուիք, ձեր օգնութեան կը կանչէք զԱստուած և անկեղծ հաւատք մը ցոյց տալով կը գոչէք. Տէր Աստուած, եթէ զմեզ այս վտանգէն ազատես, երախտապարտ պիտի ըլլանք քեզի:

24. Բայց հազիւ թէ կ'ազատիք ձեր կիրքերուն ձայնին անտալով, անօրէնութիւններ կը գործէք: Ո՛վ մահկանացուներ, աշխարհային վայելքներուն փոխարէն ձեր հոգին կը կորսնցնէք. յիշեցէք թէ որ մը Աստուծոյ առեանին սուջև պիտի ելլէք ու մենք ձեզի ցոյց պիտի տանք ձեր գործերը:

25. Աշխարհային կեանքը նման է անձրեւին գոյր երկինքէն կ'իջեցնենք. անիկա հողին մէջ կը մտնայ ու ճայնելու համար սերմը բոյսերուն, որոնցմով կը ստանին մարդիկ եւ կենդանիներ: Բոյսերը կ'աճին, երկիրը կը գեղեցկանայ անոնց զարդերովը և բնակիչները կը յուսան տոր հարստութիւններ շահիլ <sup>(1)</sup>: Եւ անա յանկարծ գիշերուան մթութեան մէջ, կամ ըսյ ցերեկով, մենք կը զբրկենք աւերը, հաւնձքերը կը փձանան այնպիսի ձեւով մը որ նախորդ օրը իբրև թէ բնաւ ձօնացուցած չ'ըլլայինք

(1) « Եւ երկրի բնակիչները կը կործեն թէ իրենք են անոնց տէրերը: » (Բաղեմիւրքի):

դաշտերը : Ահա այս կերպով է որ մենք կը բացատրենք Բարձրեալին հրաշալիքները , որպէս զի մարդիկ աչքերնին բանան :

26. Աստուած մարդկային էակները կը հրաւիրէ խաղաղութեան բնակավայրը <sup>(1)</sup> ու իր ուզածը կ'առաջնորդէ փրկութեան ճամբուն մէջ :

27. Անոնք որ բարիք կը գործեն , չքեղ վարձարութիւն մը պիտի ստանան . անոնց ճակատին փայլը երբէք չպիտի մթաղանի ամօթով . անոնք յաւիտենապէս պիտի բնակին երանութեան բնակավայրին մէջ :

28. Չարագործները պիտի ստանան իրենց ոճիրներուն համարժէք պատիժը . նախատինքներով պիտի ծածկուին անոնք . Աստուծոյ մօտ ոչ մէկ բարեխօս պիտի ունենան . խաւար գիշերուան մէկ կտորին պէս քօղ մը պիտի ծածկէ անոնց գէճքերը ու անոնք յաւիտենական կրակին գոհերը պիտի բլլան :

29. Այն օրը ուր հաւաքենք բոլոր մարդիկը , կապաշաներուն պիտի բսնք . անաւասիկ ձեր տեղը և անաւասիկ ձեր պաշտած կուռքերուն տեղը : Յետոյ զանոնք իրարմէ պիտի զատենք , այն ատեն իրենց ընկերները պիտի բսն . դուք զմեզ չէ որ պաշտեցիք , (այլ ձեր կիրքերը :

30. Աստուած վկայ է ձեր և մեր միջեւ թէ մենք ձեզի խունկ չէինք ծխեր :

31. Արարիչին առջեւ հաւաքուած , անոնք ճշմարիտ Աստուծմէ պիտի ընդունին իրենց գործած արարքներուն փոխարէնը և իրենց կուռքերը պիտի աննեռանան :

(1) Խաղաղութեան բնակավայրը , **սարէսուէլամ** , արքայութիւնն է :

32. Հարցուցէք անոնց . ո՞վ կը կերակրէ զձեզ երկրային և կրկնային մուռնդներով . ո՞վ է անոր լսելիքին և տեսանելիքին . ո՞վ է այն որ մահուան ծոցէն կեանք կը հանէ և կեանքի ծոցէն՝ մահ . ո՞վ է տիեզերքի կառավարիչը : Անոնք պիտի պատասխանեն . Աստուած է : Ըսէ՛ անոնց . ուրեմն ինչո՞ւ չէք երկնչիւր իրմէ :

33. Այդ Աստուածը ձեր ճշմարիտ Տէրն է . ճշմարտութեանէն դուրս ի՞նչ կը մնայ ձեզի , եթէ ոչ սխալը : Ուրեմն ինչո՞ւ կը հեռանաք հաւատքի ճամբէն :

34. Ահա այսպէս իրագործուեցաւ Աստուծոյ խօսքը ընդդէմ անոնց , որոնք ոճիր կը գործէին , բայց անոնք երբէք չպիտի հաւատան Աստուծոյ :

35. Ըսէ՛ անոնց / ձեր պաշտած չաստուածներէն մէկը կրնա՞յ կազմել մարդկային էակ մը ու զայն իր առջեւ հանել <sup>(1)</sup> : Իսկ Աստուած ստեղծած է մարդիկը ու զանոնք պիտի հաւաքէ իր ատեանին առջեւ . ուրեմն ինչո՞ւ կը մերժէք անոր պաշտամունք մատուցանել :

36. Ըսէ՛ անոնց . ձեր պաշտած չաստուածներուն մէջ կա՞յ մէկը որ ճշմարտութեան ճամբան առաջնորդէ : Աստուած զմեզ կ'առաջնորդէ փրկութեան ճամբուն մէջ . ուրեմն ինքը աւելի արժանի չէ՞ պաշտողներ ունենալու քան անոնք , որոնք խաւարի մէջ մխրճուած ըլլալով ոչ ոք կրնան լուսաւորել . ուրեմն ի՞նչ բանի վրայ հիմնուած է ձեր դատողութիւնը :

37. Անոնք մեծ մասամբ կը հետեւին իրենց կարծիքին , որ ճշմարտութեան համապատասխան չէ բնաւ . Բարձրեալը զիտէ թէ անոնք ի՞նչ կ'ընեն :

38. Քուրանը Աստուծոյ գործն է միայն . անիկա կը

(1) « Ու զայն ոչինչի վերածել յետոյ . » (Քազիմիբքի)

հաստատե իրմէ առաջ զըրկուած մատենաները . անոնց մեկնութիւնն է ան , որուն մասին չէ կարելի կատարել . տիեզերքի վեհագետը երկինքէն իջեցուց զայն :

39. Երբ անոնք ըսեն թէ Քուրանի հնարիչը Մուհամմէան է , պատասխանէ՛ . ուրեմն անոր պարունակածին նման զուլա մըն ալ դուք կազմեցէք տեանեմ և եթէ կրնաք , Աստուծոյ՛ զոտ ուրիշ մէկը օգնութեան կանչեցէք :

40. Անոնք կեղծ կը հռչակեն Գիրք մը որուն զիտութիւնը ըմբռնելու կարող չեն և որուն լրումը չէ եղած տակաւին (թէև բացարձակութիւնները տուինք անոնց .) անոնք աւելի առաջ եկած մարգարէներուն հետ ալ այսպէս վարուեցան ու զանոնք ստախօսներ հռչակեցին , բայց նայեցէք թէ ի՞նչ եղած է ամբարիշտներուն վախճանը :

41. Անոնց մէջ կան մարդիկ , որոնք կը հաւատան Քուրանի ու կան ալ որ կը մերժեն զայն . բայց Աստուած կը ճանչնայ ապականեալ մարդիկը :

42. Եթէ զքեզ ստախօս հռչակին , պատասխանէ՛ անոնց . իմ գործերս ինձի բուսական են . թո՛ղ ձեր գործերն ալ ձեզի ի նպաստ խօսին . դուք երբէք պատասխանատու չպիտի ըլլաք այն բանին համար զոր ես կ'ընեմ ու ձեր բրածներուն մեղքն ալ իմ վրաս չպիտի ծանրանայ :

43. Անոնց մէջ կան մարդիկ , որոնք քեզի կուգան մտիկ ընելու վարդապետութիւնդ , բայց դուն կրնաս խուլերուն բան մը լսելի ընել , քանի որ ոչինչ կը հասկնան :

44. Ուրիշներ ալ կան որոնք քեզի կը նային առանց բան մը անանելու , բայց դուն կրնաս լուսաւորել կոյրերը . անոնց աչքերը փակ են լոյսին առջեւ :

45. Աստուած երբէք անարդարութիւն չի գործեր

մարդոց հանդէպ . մարդիկ իրենք են որ անարդարութիւն կ'ընեն իրարու հանդէպ :

46. Այն օրը ուր զանոնք հաւաքէ իր առջեւ , աշխարհի վրայ (1) իրենց ապրած կեանքը ժամու մը տեւողութիւնը ունեցած ըլլալ պիտի թուի ու անոնք փոխադարձաբար զիրար պիտի ճանչնան , այն ժամանակ վերջին դատաստանը սուտ համարողները որոնք շիտակ ճամբէն չէին ընթանար , կտրասեան պիտի մատնուին :

47. Անոնց համար մեր պատրաստած պատիժներուն մէկ մասը քու առջեւդ տանք թէ ոչ , անոնցմէ՛ առաջ զքնդ մեր քովը կանչենք թէ ոչ , անոնք բոլորը մեր առջեւ պիտի ելլեն ու Ամենակարողը վկայութիւն պիտի տայ անոնց գործերուն :

48. Իւրաքանչիւր ազգ ունեցաւ իր մարգարէն , և զայն դատեց արդարութեամբ (2) . մարգարէները բնաւ անարդար վարմունք չկրեցին (3) :

49. Անհաւատները կը հարցնեն . քու սպառնալիքներդ ե՞րբ պիտի գործադրուին , ըսէ՛ մեզի ժամանակը , եթէ ճշմարտախօս ես :

50. Պատասխանէ՛ անոնց . երկնային շնորհները և վրէժնորութիւնները իմ ձեռքիս մէջ չեն (4) , միայն Աստուած է անոնց մատակարարը . իւրաքանչիւր ազգի կեանք

(1) « Գերեզմանին մէջ » (Քաղիմիրքի)

(2) « Իրենց միջեւ եղած անհամաձայնութիւնը արդարութեամբ կարգադրուեցաւ . »

(3) Քաղիմիրքի դիտել կուտայ թէ Մէքքէի անհաւատներուն կ'անհարկուի հոս :

(4) « Օգտակար և վնասակար բաներուն վրայ իշխանութիւն չունիմ ես , » (Քաղիմիրքի)

իր պայմանաժամը ունի. վայրկեան մը իսկ կարելի չէ փութացնել և կամ յապագեցնել վախճանը :

51. Երբ Աստուծոյ պատիժը ձեր վրայ թափի, ցերեկ թէ գիշեր ատեն՝ կը կարծէք թէ ամբարիշտներն են որ փութացուցին զայն :

52. Երբ տեսնէք զայն, այն ատեն պիտի հաւատա՞ք. ձեր փութացնել ուզած պատուհասները այն ատեն պիտի կրէք :

53. Ամբարիշտներուն պիտի բուռի այն ժամանակ. յաւիտեանական պատիժը կրեցէք. ձեր արարքներուն փոխարէնը ստացէք :

54. Անոնք քեզի պիտի դիմեն հասկնալու համար թէ այս սպառնալիքները պիտի իրագործուին. բռէ՛ աւսոնց. այս՝ կ'երգում յանուն Աստուծոյ, ճշմարտութիւնն իսկ է անիկա, ու դուք չէք կրնար արգիլել անոնց գործադրութիւնը :

55. Այն ժամանակ ամբարիշտները պիտի ուզեն իրենց հոգին փրկել աշխարհի բոլոր գանձերը տալով. երբ տեսնեն աստուածային վրէժինսդութիւնը, իրենց զղջումը (1) պիտի ծածկեն : Մարդկային ազգը արդարութեամբ պիտի դատուի, և ոչ ոքի անիրաւութիւն պիտի ըլլայ :

56. Ամէն ի՛նչ որ կայ երկինքի մէջ և երկրի վրայ միթէ Աստուծոյ չի պատկանիր. անոր խոստումները միթէ ճշմարիտ չեն. բայց մարդոց մեծամասնութիւնը չի գիտեր այս բանը :

57. Անիկա է որ կուտայ կեանքը և մահը, ու դուք ամենքդ անոր առջեւ պիտի ելլէք :

58. Ո՛վ մահկանացուներ, Աստուած ազգարարութիւններ զրկած է ձեզի, ու նաեւ ձեր սրտերը կրծող

(1) « Վիշաք » (Քաղիմիրքի)

ցաւին՝ դարման, և հաւատացեալներուն լոյս և գթութիւն զրկած է :

59. Որոնք թանկագին չնորհներն են իր առատաձեռնութեան. զանոնք վայելեցէք և ուրախութեամբ լեցուեցէք. ասոնք շատ աւելի նախապատիւ են քան աշխարհի հարստութիւնները :

60. Հարցո՛ւր անոնց. Աստուծոյ ձեզի չնորհած սրնունդներուն մէջ մէկ քանիններուն գործածութիւնը կ'արգիլէք և մնացածը կ'արտօնէք. այս պատուէրը Աստուած ի՛նքն է որ տուաւ ձեզի, թէ չէ՝ դուք ստախոսարար անոր կը վերսդրէք զայն :

61. Յարութեան օրը ուրացող սրբապիղծը ի՛նչ բանի վրայ կը խորհի (1). անտարակոյս Աստուած բարութեամբ լեցուն է մարդոց համար, բայց անոնք մեծ մասամբ ապերախտ կ'ըլլան :

62. Ինչ վիճակի մէջ ալ որ գանուիք, մենք զձեզ կը տեսնենք. երբ Քուբանը կը կարգաք, ներկայ ենք մենք. ձեր բոլոր արարքներուն ակամատես ենք, ու անոնց մասին վկայութիւն պիտի տանք. մրջիւնի մը ծանրութիւնը երկրի վրայ կամ երկինքի մէջ, ամենափոքր ծանրութիւնը ինչպէս ամենամեծը, Բարձրեալին աչքէն չեն վրիպիր : Յայնուրեւն գիրքին մէջ ամէն բան գրուած է :

63. Աստուծոյ բարեկամները զերծ պիտի ըլլան երկիւղէ և վիշտէ :

64. Անոնք որ հաւատքը և բարեպաշտութիւնը կը միացնեն,

65. Այս աշխարհին մէջ երջանկաբեր խոստումներով

(1) « Բայց ի՛նչ պիտի խորհին. յարութեան օրը անոնք՝ որոնք Աստուծոյ սուտեր կը վերագրեն. » (Քաղիմիրքի)

պիտի մխիթարուին և հանդերձեալին մէջ պիտի տեսնեն այդ խոստումներուն իրագործումը . Աստուծոյ խօսքը անփոփոխելի է . անոնք գերագոյն երջանութիւնը պիտի վայելեն :

66. Ամբարիշտներուն խօսքերը թող քեզի վիշա չը պատճառեն երբէք . ամէն զօրութիւն Աստուծոյ կը պատկանի . անիկա գիտէ և կ'իմանայ ամէն բան :

67. Երկինքի և երկրի մէջ եղածները իր սեպհակաութիւնն են , անոնք որ ուրիշ չաստուածներ կը պաշտեն , իրենց սննդական կարծիքին <sup>(1)</sup> միայն հետեւած կ'ըլլան . անոնք ստախօտութենէ զատ ուրիշ յենարան ունին :

68. Աստուած է որ հաստատեց գիշերը մարդոց հանգիստին համար և ցերեկը աշխատութեան համար <sup>(2)</sup> . անոնք նշաններ են անոնց համար՝ որոնք կ'անասն իրեն :

69. Անհաւատները կ'ըսեն . Աստուած որդի մը ունի . հեռու իրմէ այս նախապինքը . անիկա ինքզինքին բաւական է . երկինքի մէջ և երկրի վրայ եղածները իրեն կը պատկանին : Դուք ձեր բրածը ինչ բանի վրայ կը հիմնէք . չըլլա՛յ որ չգիտցած բաներնիդ խօսիք Աստուծոյ մասին :

70. Ըսէ՛ անոնց . անոնք որ սուտ կը հուշակեն Աստուծոյ գերագոյն վեհախառութիւնը , երջանկութեան բընական վայրը չպիտի հասնին բնաւ :

71. Աշխարհի վրայ կարծատեւ վայելքներէ վերջ զանոնք մեր ատեանին առջեւ պիտի հանուք և անոնց անհաւատութիւնը ստակալի չարչարանքներով պիտի որսո՞վենք :

(1) « Զուր հատաքի մը » (Վաղեմիրքի)

(2) « Որպէս զի ամէն բան տեսնէք . »

72. Անգամ մըն ալ կարդա՛ անոնց պատմութիւնը Նոյի , որ ըսաւ իր ժողովուրդին . եթէ ձեզի անտանելի է Աստուծոյ պատուիրաններուն կանխասացութիւնը և իմ բնակութիւնս ձեր մէջ , ես իմ վստահութիւնս կը դնեմ միակ Աստուծոյ վրայ . հաւաքեցէք ձեր ջանքերը և ձեր չաստուածները , ձեր մտադրութիւնները մի՛ ծածկէք . իմ մասիս վճիռ մը արձակեցէք ու զիս մի՛ սպասեցնէք :

73. Եթէ մերժէք ընդունիլ իմ հրահանգներս , ձեզմէ ո եւ է բան չեմ պահանջեր . ես միայն երկինքէն կ'ազնակալեմ իմ վարձատրութիւնս . անիկա ինծի հրամայեց Իսլամութիւնն ընդունիլ :

74. Նոյը ստախօս հուշակեցին , և մենք ազատեցինք զինքը և ընտանիքը , տապանին միջոցաւ . անոր սերունդը աշխարհի վրայ հաստատեցինք . անոնք որ մեր կրօնքը կ'ուբանային , ջուրերուն մէջ խեղդուեցան : Ահա՛ այս է անհաւատներուն վախճանը :

75. Նոյէն ետք , մենք ժողովուրդներուն զրկեցինք մարգարէներ , հրաչք գործելու իշխանութեամբ : Բայց ժողովուրդները չուզեցին հաւատալ այս բանին զոր նախապէս մերժած էին արդէն : Ահա՛ այս կերպով է որ մենք կը կարծրացնենք անօրէններուն սիրտը :

76. Այնուհետեւ զրկեցինք Մովսէսը և Ահարոնը , որոնք պաշտօն ունէին մեր կամքը յայտնելու Փարաւոնին ու անոր պալատականներուն , բայց ապականութեան մէջ թաթխուած ժողովուրդը արհամարհանքով ընդունեց զանոնք :

77. Երբ տեսան ճշմարտութիւնը՝ մեր կողմէ զրկուած , ըսին . ասիկա պարզապէս կախարչութիւն է :

78. Այն ատեն Մովսէս ըսաւ անոնց . այսպէ՛ս կը խօսիք այն ճշմարտութեան մասին , որ զձեզ կը լուսաւորէ . ասոնք կախարչութիւններ են միթէ . կախարչները երբէք չպիտի բարգաւաճին :

79. Փարաւոնի պալատականները գոչեցին. դուք որոշած էք մեր հայրերուն դաւանութենէն հեռացնել զմեզ և մեր մէջ տիրապետել<sup>(1)</sup>. մենք երբէք չպիտի հաւատանք ձեզի :

80. Այն ատեն Փարաւոն կանչել տուաւ բոլոր ճարտար կախարդները, և երբ անոնք հաւաքուեցան, Մովսէս ըսաւ. ձեր գաւազանները նետեցէք<sup>(2)</sup> :

81. Կախարդները հնազանդեցան. Մովսէս յարեց. Աստուած պիտի ոչնչացնէ ձեր գործած կախարդութիւնը, որովհետև անիկա երբէք չի յաջողցներ չարերուն գործը :

82. Աստուած իր խօսքերուն ճշմարտութիւնը կը հաստատէ, հակառակ՝ ամբարիշտներուն ցոյց տուած ընդդիմութեանը :

83. (Ոչ որ հաւատաց Մովսէսի.) միայն Իսրայէլացիները հաւատ ընծայեցին. Եգիպտացիները վախցան Փարաւոնի և մեծամեծներուն հարստահարութենէն, որովհետև Փարաւոն այդ երկրին մէջ ամենազօր էր և ամբարիշտ<sup>(3)</sup> :

84. Մովսէս այն ատեն ըսաւ իր ժողովուրդին. եթէ կը հաւատաք Աստուծոյ, ձեր ամբողջ յոյսը անոր վրայ դրէք, եթէ դուք իրականապէս ինքզինքնիդ անոր յանձնաճ էք :

85. Իսրայէլացիները պատասխանեցին. անիկա մեր միակ ապաւէնն է. Տէր, զմեզ մի՛ ընէր հարստահարիչ ժողովուրդի մը փորձութեանց զօները :

(1) « Եւ որպէս զի այս երկրին մեծութիւնը ձեր երկուքին պատկանի . »

(2) Կը յիշուի թէ նոյնիմաստ հատուածներ կան նաեւ է. գըլուխին մէջ, 109րդ տունին և յաջորդ տուներուն մէջ :

(3) « Եւ իսրայէլացիները ի գործ կը դնէր . »

86. Քու զթութեամբդ ազատէ՛ զմեզ անհաւատունութուն ձեռքէն :

87. Այն ատեն Մովսէսին և եղբորը ներշնչեցինք Եգիպտոսի մէջ տուներ յինել Իսրայէլացիներուն համար և զանոնք դարձնել ինն՝ ուր աղօթք կ'ընեն, Բարձրեւելին փառաբանութիւնն ընել և մեր վարձատրութիւնները աւետել հաւատացեալներուն :

88. Մովսէս գոչեց. Տէր, Փարաւոնին և անոր մեծամեծներուն տուիր աշխարհային հարստութիւններ և պերճութիւններ. զանոնք հեռացուր քու օրէնքէդ<sup>(1)</sup>. փճացուր անոնց հարստութիւնները, կարծրացուր անոնց սրտերը. թո՛ղ անոնք անհաւատ մնան, մինչև որ իրենց վրայ թափին տակալի տանջանքները :

89. Աստուած պատասխանեց. քու խնդրանքդ ընդունուած է, քալեցէք շիտակ ճամբայէն և հեռացէք անոնցմէ՝ որոնք կուրսութեան մէջ ինկած են :

90. Իսրայէլացիներուն առջեւ բացինք ճամբայ մը ծովերուն մէջէն. Փարաւոն և իր բանակը զանոնք հալածեցին զէն ի ձեռին, բայց յանկարծ ալկըներուն մէջ խեղդուեցան : Այն ատեն Փարաւոն գոչեց. կը հաւատամ որ Իսրայէլացիներուն Աստուծմէն զատ ուրիշ Աստուած չի կայ. անոնց հաւատքը կ'ընդունիմ :

91. Այո՛, հիմա կը հաւատաս, բայց դեռ քիչ ժամանակ առաջ անհնազանդ և չար էիր :

92. Այսօր քու դիակդ ծովէն դուրս պիտի հանենք<sup>(2)</sup>, որպէս զի « պազայ սերունդին օրինակ ըլլայ, որքան

(1) « Որպէս զի քու ճամբայէդ հեռանան . »

(2) Իսրայէլացիներէն ոմանք կտակած յայտնած ըլլալով թէ Փարաւոն չէ մեռած, Դարբիէլ անոր դիակը ծովէն դուրս քաշեց և անոնց աչքին առջեւ ցուցադրեց :

փոքր է թիւն է այն մարդոց, որոնք կրօնքին համար նախանձախնդիր չ'են:

93. Իսրայէլի զաւակներուն համար ապահով բնակավայր մը (1) և սքանչելի բաներ տուինք իբր անունդ, անոնք այն ատեն միայն պառակտեցան, երբ տեսան երկիրքէն իջած լոյսը: Բարձրեալը պիտի դատէ անոնց անհամաձայնութիւնները վերջին դատաստանին օրը:

94. Եթէ մեր վարդապետութիւնը քու սրտիդ մէջ կասկած մը յարուցանէ, տեղեկութիւն հարցուր անոնց, որոնք քեզմէ առաջ զրկուած նուիրական մատեանները ստացան. Աստուած քու վրադ իջեցուց ճշմարտութիւնը, չ'ըլլայ որ կասկածիս անոր մասին:

95. Մի՛ հետեւիր անոնց՝ որոնք սուտ կը հռչակեն Աստուծոյ նշանները, եթէ չես ուզեր դատուիլ աստուածամերժներուն կարգը:

96. Անոնք՝ որոնց դէմ Աստուած արձակած է իր անխօփօսելի վճիռները, բնա՛ւ չպիտի հաւատան:

97. Եթէ նոյն իսկ մեծամեծ հրաշքներ գործես, անոնք պիտի յամառին իրենց անհաւատութեան մէջ, մինչեւ որ ինքզինքնին դժոխքի կրակներուն մէջ գտնեն:

98. Եթէ այնպէս չ'ըլլար, հաւատացեալ եղող քաղաք մը փրկուած կ'ըլլար, բայց միայն Յովնանի ժողովուրդն է որ հաւատաց անոր մարգարէութեան և ազատեցաւ այն սարսափելի պատիժներէն, որոնք իրեն կը

(1) Սուրբայ երկերը:

սպանալին այս աշխարհի մէջ. մենք թոյլ տուինք որ անիկա ապրի մինչեւ որոշ ատեն մը (1):

99. Եթէ Աստուած ուզէր, աշխարհի բոլոր մահկանացուները միեւնոյն հաւատքը կ'ունենային. դուն կ'ուզես բռնադատել մարդիկը որ հաւատացեալ ըլլան:

100. Հաւատքը Աստուծոյ մէկ շնորհն է զոր ան ըստ կամս կը բաշխէ: Աստուած իր զայրոյթին առարկայ պիտի ընէ անոնք՝ որոնք չեն ուզեր երբէք հասկնալ:

101. Ըսէ՛ անոնց. երկիրքի և երկրի հրաշալի տեսարանները և հրաշքներն ու ազգարարութիւնները ո՛չ մէկ բանի պիտի ծառայեն անոնց համար՝ որոնք չեն հաւատար:

102. Ի՞նչ կը յուսան անոնք. իրենցմէ առաջ ապրած ժողովուրդները ի՛նչ վախճան որ ունեցան, նոյնը պիտի ունենան իրենք. ըսէ՛ անոնց. սպասեցէ՛ք, ես այ ձեզի հետ պիտի սպասեմ:

(1) Իսմայել՝ որդի Ալիի, Յովնանի վրայ գրած իր մէկ գործին մէջ կը պատմէ թէ՛ Յովնան իր կնոջ և երկու տղոցը հետ ճամբայ ելած էր դէպի Նինուէ, կռուպաշտութեան տեղ ճշմարիտ կրօնքը քարոզելու համար: Տիգրիս գետին վրայ իր կինն ու զաւակները կորսնցուց և սկսաւ դառնօրէն ողբալ, բայց Աստուած իրեն յայտնեց թէ վերատին պիտի գտնէ իր կինը: Յովնան Նինուէցիներուն քարոզած միջոցին ծաղր ու ծանակի ենթակոյ եղաւ. Աստուած ալ զանոնք պատժելու համար հրեղէն ամպ մը իջեցուց Նինուէի վրայ, այնպէս որ բոլոր բնակիչները դուրս փոխան, և Յովնանէն խնդրեցին որ զերենք այս փորձանքէն ազատէ: Աւելի ուշ, Յովնան մեկնեցաւ Նինուէէն, և Տիգրիս գետին վրայ նուստ մը նստաւ, բայց նաւը խրեցաւ մնաց. այն ատեն նաւապետը վիճակով Յովնանը բռնեց ու գետը շետեց, ձուկ մը կլլեց Յովնանը և վեց օր վերջ տարաւ Նետուզայն Այլա քաղաքի եզերքը, Աստուած դժմենի մը բուսցուց և տերեւներովը ծածկեց զայն, որովհետեւ մերկ էր. հրեշտակապետը դպաւ անոր գլուխին և մոզերով ծածկեց զայն, յետոյ Աստուած տուաւ անոր կինն ու զաւակները և Նինուէ վերադարձուց:

103. Մեր պաշտպանութիւնը ազատեց մարդարէները և հաւատացեալները, անոնց փրկութիւնը օրէնք մըն է մեզի համար:

104. Մահկանացուներ, եթէ իմ կրօնքս տարակոյսի մէջ կը թողու զձեզ, կը յայտարարեմ ձեզի որ չ'ակնկալէք թէ ես կը պաշտեմ ձեր չաստուածները, այլ ես կը պաշտեմ այն Աստուածը որ ձեզի մահը պիտի զրկէ. անիկա ինծի հրամայեց Իսլամութիւն ընդունիլ:

105. Ինծի ըսաւ. բա՛ց քու սիրտդ Աստուծոյ միութեան կրօնքին, և մերժէ՛ խոնկ ծխել կուռքերուն առջեւ:

106. Երբէ՛ք օգնութեան մի կանչեր երեւակայական չաստուածներ, որոնք ո՛չ կրնան օգնել քեզի, ոչ ալ՝ վրնասել, եթէ այս արգելքիս դէմ գործես, ամբարիշտներուն կարգը պիտի դատուիս:

107. Միայն Աստուած կրնայ զքեզ փրկել զժրջողութենէ մը. (եթէ քեզի երջանկաբեր բան մը զրկէ, ոչ ոք կրնայ կասեցնել իր շնորհները.) անիկա ըստ կամս կը բաշխէ իր ծառաներուն իր բարիքները: Գիժած և անյիշաչար է ան:

108. Մահկանացուներ, ճշմարտութիւնը կը փայլի ձեր աչքերուն առջեւ (1). ո՛վ որ տեսած է զայն, անոր հոգին լոյսով լեցուած է. ո՛վ որ կը հեռանայ անկէ, իր հոգիին փրկութիւնը կը կորսնցնէ, ես լիազօր մը չեմ բնա՛ւ:

109. Հետեւաբար, քեզի եզած աստուածային յայտնութիւններուն հետեւէ, և սպասէ քու Աստուծոյդ վըճիօին. դատաւորներուն ամենէն արդարն է ան:

(1) « ճշմարտութիւնը եկած է ձեզի՝ Աստուծոյ կողմէ. »

(Քաղեմիրաքի)

## Յ Ո Վ Տ

Տրուած՝ Մէֆֆէի մէջ. — 123 տուն

Յանուն ողորմած և անյիշաչար Ասուծոյ

1. Էլիֆ, լամ, բե. այս Գիրքը որուն տունները ի սկզբան զրուած են հաստատուն հիման վրայ, եկած է անկէ՝ որ Տէրն է իմաստութեան և գիտութեան:

2. Անոր մէջ ձեզի կը հրամայուի հաւատալ Աստուծոյ միութեան, ես պատգամաւոր մըն եմ որ պաշտօն ունիմ ձեզի յայտնելու անոր պատիժները և վարձատրութիւնները:

3. Հայցեցէ՛ք Աստուծոյ ներողամտութիւնը, ընդունեցէ՛ք իր կրօնքը. Աստուած իր շնորհներովը պիտի ողողէ զձեզ մինչեւ նախապէս նշանակուած վախճանը, և այն որ ինքզինքը արժանի կը հանդիսացնէ, պիտի վայելէ Աստուծոյ առատաձեռնութիւնը. եթէ մերժէ՛ք հաւատալ ինծի, կը վախնամ որ մեծ օրուան պատիժին ենթարկուիք:

4. Դուք պիտի ելլէք Աստուծոյ ատեանին՝ առջեւ. անոր զօրութիւնը անասման է:

5. Միթէ անոնք չեն ծածկեր իրենց սիրտը կրկնապատիկ քողով մը (1) Բարձրեալին ակնարկէն խուսափելու համար:

(1) « Ծալքեր կը կողմն երենց սրտերուն մէջ, » կը թարգմանէ Քաղեմիրաքի և կը յարէ թէ Քուրանը միշտ կը նմանցնէ սիրտը պատառի կտորի մը զոր կը ծալլեն բան մը ծածկելու համար հոն:

6. Բայց ինչ ճիգ որ ալ ընեն (իրենց զգեստներով) ծածկուելու համար, Աստուած գիտէ թէ ինչ բան կը ծածկեն և ինչ բան երեւան կը հանեն:

7. Անտարակոյս անիկա կը խուզարկէ անոնց սրտերը:

8. Աշխարհի վրայ չկայ կենդանի մը որ իր սնունդը Աստուծոյ ձեռքէն չստանայ. անիկա կը ճանչնայ ամենէն ստորին սողունին որջը, ու գիտէ թէ ո՛ւրտեղ պիտի մեռնի ան: Յայտնութեան գիրքին մէջ ամէն բան գրուած է:

9. Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց վեց օրուան մէջ. (ստեղծագործութենէն առաջ) անոր դահը ջուրերուն վրայ հաստատուած էր. անիկա կ'ուզէր գիտնալ թէ ձեր մէջէն ո՛վ արժանի է ստեղծագործութեան:

10. Երբ անհաւատներուն ըսես որ օր մը յարութիւն պիտի առնեն, անոնք կը պատասխանեն. ասոնք կախարդի խօսքեր են:

11. Եթէ պատիժը յետաձգենք մինչև որոշուած ժամանակը, անոնք կ'ըսեն. ինչո՞ւ համար յետաձգել անոր գործադրութիւնը: Անոնք օր մը պիտի կրեն այդ պատիժները, զորս կը ծաղրէին ու ոչ ոք պիտի կրնայ զիրենք ազատել անոնցմէ:

12. Երբ մարդիկը զրկենք այն բարիքներէն, զորս վայելել տուինք իրենց, յուսահատութեան մէջ կ'իջնան և կ'ըլլան ապերախտ (անհաւատ):

13. Երբ անոնց վրայ ճնշող դժբաղդութեան յաջորդել տանք բարգաւաճ օրեր, կ'ըսեն. դժբաղդութիւնը հեռացաւ մեզմէ, ու ինքզինքնին կուտան: հաճոյքի և գոռողութեան զինովութեանց:

14. Անոնք որ համբերատարութեամբ կը տոկան և

բարի գործեր կ'ընեն, արժանի պիտի ըլլան մեր գթութեան և չքեղ վարձատրութեան մը:

15. Եթէ մեր պատուիրաններէն մին մոռնաս դուն, եթէ քեզմէ պահանջեն որ գանձ մը երեւան հանես կամ հրեշտակ մը քեզի ընկերանայ, մի՛ վշտանար. քու պաշտօնդ միայն քարոզել է: Բոլոր էակներուն կառավարելու գործը Աստուծոյ կը պատկանի:

16. Երբ անոնք ըսեն թէ Քուրանը Մուհամմէտի հնարած մէկ գիրքն է, պատասխանէ՛. լաւ, անոր պարունակածին նման տասը գլուխներ ալ դուք բերէք, և Աստուծմէ զատ ուրիշ ո՛վ որ կրնաք օգնութեան կանչեցէք, եթէ անկեղծ էք:

17. Բայց եթէ չկրնաք բերել, գիտցէք որ այս գիրքը Բարձրեակն գիտութեամբը իջած է երկինքէն, և իրմէ զատ ուրիշ Աստուած չկայ: Չպիտի հաւատաք դուք այս բանին:

18. Անոնք որ աշխարհային կեանքին յարած, անոր հաճոյքները միայն պիտի բաղձան վայելել, իրենց արարքներուն վարձքը պիտի ստանան աշխարհի մէջ ճշգրտօրէն:

19. Բայց յաւիտենական կեանքին համար անոնց արարքները դուր և անարժէք պիտի ըլլան, և կրակը պիտի ըլլայ իրենց բաժինը:

20. Պիտի հաւատան իր վարդապետութեան անոնք՝ որ Մարգարէին պատուէրներուն կը հնազանդին, պատուէրներ՝ զորս կուտայ Մարգարէին ընկերացող հաւատարիմ մէկը (1), որ եկաւ Հնդկամտեանէն ետք, ուր կը փայլի աստուածային լոյսն ու գթութիւնը: Իսկ չհաւա-

(1) « Աստուծոյ կողմէ եկած մէկը . »



կ'ըլլայի: Յաւիտեանականը կը կարգայ սիրտերու խորը:

34. Անոնք պատասխանեցին Նոյի. երկար ատենէ ի վեր կը վիճարանիս մեզ հետ (և մեր կոխանքը աւելցնելէ զատ ուրիշ բան ըրած չունիս). քու սպառնալիքներդ գործադրել տուր տեսնենք, եթէ ճշմարիտը կը խօսիս:

35. Անշուշտ, պատասխանեց Նոյ, Աստուած չիտ' գործադրէ՝ եթէ ուզէ. և դուք չէք որ պիտի կրնաք մեղմացնել անոր խստութիւնը:

36. Իմ ատուած փրկարար խորհուրդներս անօգուտ պիտի ըլլան ձեզի, եթէ Աստուած ուզէ մոլորութեան մէջ նետել զձեզ: Անիկա ձեր այլ իմ այլ Տէրն է. մենք ամենքս անոր պիտի վերադառնանք:

37. Երբ անոնք քեզի բռն թէ Մուհամմէան է Քուրանը հնարողը, պատասխանէ՝. եթէ ես հնարած եմ զայն՝ մեղքը զիդս. բայց ձեր մեղքերէն քաւեալ եմ ես:

38. Այնուհետեւ Նոյի սա յայտնութիւնը ըրաւ Աստուած. քու ժողովուրդիդ մէջէն միայն անոնք հաւատացեալ պիտի նկատուին, որոնք արդէն հաւատացած են. ամբարիշտներու ըրած գործերուն համար ցաւ մի զգար:

39. Մեր աչքին առջեւ կերտէ այն տապանը որուն յատակագիծը տուինք քեզի. նենգամիտներուն ի նպաստ ձայնդ մի բարձրացնէր այլեւս. անոնք ջրհեղեղին մէջ պիտի կորսուին:

40. Ու Նոյ կերտեց իր տապանը. և ամէն անգամ որ իր ժողովուրդին մեծամեծները կ'անցնէին քովէն, կը ծաղրէին զինքը: Նոյ կ'ըսէր. դուք կը ծաղրէք զիս, բայց ես այլ իմ կարգիս պիտի ծաղրեմ զձեզ և պիտի տեսնէք:

41. Քիչ ատենէն պիտի հասկնաք թէ որի՞ վրայ պիտի թափի աստուածային զայրոյթը, որ անխտիր բոլոր

յանցաւորներուն պիտի կրել տայ յաւիտեանական չարչարանքները:

42. Ու այսպէս ալ եղաւ մինչեւ այն վայրկեանը երբ մեր հրամանը գործադրուեցաւ (և ջուրի ամբարանոցը պոսթիկաց) <sup>(1)</sup>: Այն ատեն մենք ըսինք Նոյի, տապանին մէջ մտցո՛ւր իւրաքանչիւր կենդանիի ցեղէ մէկ զոյգ, ինչպէս նաեւ քու ընտանիքիդ անդամները, ի բաց առեալ այն որ կորստեան գատապարտուած է <sup>(2)</sup> հոն մտցո՛ւր նաեւ հաւատացեալները, բայց անոնց թիւը շատ պզտիկ էր:

43. Նոյ ըսաւ անոնց. մտէ՛ք տապանին մէջ. Աստուծոյ շնորհիւ անիկա պիտի նաւարկէ ու յետոյ խարխիս պիտի ներէ, որովհետեւ Աստուած գթած և ներողամիտ է:

44. Տապանը <sup>(3)</sup> կը տատանէր այլիքներուն վրայ որոնք լեռներու պէս կը բարձրանային: Նոյ կանչեց իր

(1) Արաբ մեկնիչները անհամաձայն են ջրամբար բառին թէ՛ իմաստին և թէ՛ զտեղծութեան մասին, ոմանք կ'ենթադրեն թէ այդ ջրամբարը պոսթիկաց, ջրհեղեղը յառաջ բերելու համար. գալով տեղւոյն, ոմանք կ'ըսեն թէ Հնդկաստանի մէջ էր, ոմանք՝ Միջագետքի մէջ, ոմանք ալ՝ Արարիոյ Քուֆա քաղաքին մէջ: Արաբներէն բնագրին մէջ գործածուած է **բաւնուր** բառը, կամ գործածական լեզուով **բաւնուր**, որ տեսալ մը թոնիր է, ուր հաց կ'եփեն արեւելքի մէջ: Քուրանի մեկնիչներէն ոմանք բնագրին **բաւնուր** բառը թոնիր թարգմանելով զուարճարանօրէն կ'ըսեն թէ ջրհեղեղը յառաջ բերող թոնիրը այն էր ուր հաց կ'եփէր:

(2) Էլ Հասան կը կարծէ թէ ասիկա Նոյի որդիներէն մէկն է, որ ըստ աւանդութեան, անհաւատութեան մէջ մնացած էր: Արաբ հեղինակներ կ'ըսեն թէ Նոյի տապանին մէջ մտնողներուն թիւը 80ի կը հասնի:

(3) Ըստ էլ Հասանի, տապանը ունէր 1200 կանգուն երկայնութիւն և վեց հարիւր՝ լայնութիւն. բայց ուրիշ Արաբ մեկնիչ մը ծիծաղելի կը գտնէ որ նաւ մը այս ձեւը ունենայ:

որդին որ դուրսը մնացած էր ու ըսաւ անոր. ո՛վ իմ գաւակս, ներս եկ՛ւր, անհաւատներուն հետ մի կենար:

45. Անիկա պատասխանեց. ես լեռան մը վրայ պիտի բարձրանամ ու ջրհեղեղէն զերծ պիտի ըլլամ: Նոյ յարեց. Աստուծոյ պատիժէն ոչ ոք պիտի խուսափի, բացի անոնցմէ որոնց վրայ պիտի գլխայ անիկա: Զուրերը բարձրացան ու բոլոր մարդիկ խեղդուեցան ( Նոյի որդին ալ միասին ):

46. Աստուած ըսաւ. ո՛վ երկիր, ծծէ՛ Զուրերը, և ո՛վ երկինք՝ գոցուեցէ՛ք: Ու Զուրերը իջան, Աստուծոյ հրամանը գործադրուեցաւ, տապանը հանդէսեցաւ էլ ձուտի լերան վրայ ու ձայն մը գոչեց. ամբարիշտները թո՛ղ հեռանան ասկէ ( <sup>1</sup> ):

47. Այն ատեն Նոյ սա աղօթքը ուղղեց Աստուծոյ. տէ՛ր, իմ գաւակս ալ իմ ընտանիքիս կը պատկանի. քու խոստումներդ ճշգրիտ են ու դուն դատաւորներուն ամենէն արդարն ես:

48. Աստուած պատասխանեց. ո՛վ Նոյ, քու գաւակըդ ընդունիքիդ անդամ չի նկատուիր. ըրածդ անարդար բան մըն է, չգիտցած բանդ ինձմէ մի՛ խնդրեր, քեզի կ'աղդարարեմ որպէ՛ս զի տգէտներուն դատէն չըլլաս:

49. Տէ՛ր Աստուած, յարեց Նոյ, ես քեզի կ'ապաւինիմ, թոյլ մի տար որ իմ չգիտցած բաներս խնդրեմ

(1) Մահճատական աւանդութիւնը կ'ըսէ թէ այս փոքրիկ լեռը կը գտնուի Մեջագետքի հարաւային մասին մէջ, Հայաստանի սահմանագիծուն վրայ, քիչ հեռու այժմու ձեղերէ քաղաքէն. Քաղի մրբքի դիտել կուտայ թէ նոյն աւանդութիւնը Քաղաքացիներն ալ ունին. ձուտի բառը համապատասխան է ձորտիին կամ կորթեան լեռներուն, որոնց մէկ աղաւորումն է թերեւս այս բոլորին հակառակ, Ընդամտեանը կը վկայէ թէ Նոյի տապանը կանց առաւ Հայաստանի Արարատ լեռան վրայ:

քեզմէ. իմ գործս գէշ է, եթէ ինձի հնրես և չգլխաս վըրաս:

50. Այն ատեն Աստուած ըսաւ. ո՛վ Նոյ, դուրս ելիր տապանէն. մեր օրհնութիւնը և փրկութիւնը թող քու վրայ ըլլայ, նաեւ անոնց վրայ՝ որոնք քեզի հետ են. միւսները պիտի թողունք որ աշխարհային հաճոյքներու մէջ մխրճուին ու այնուհետեւ կրեն մեր պատիժները:

51. Ո՛վ Մուհամմէտ, քեզի կը յայտնենք այս պատմութիւնը որ քաղուած է գաղանիքներու գիրքէն. ո՛չ դուն ոչ ալ քու ժողովուրդդ անոր մասին բան մը գիտէիք ցարդ, համբերատար եղէ՛ք, Աստուծմէ երկնչողները երջանիկ վախճան մը պիտի ունենան:

52. Ատէականներուն զրկեցինք Յովտը, մարգարէ Աստուծոյ. անիկա ըսաւ իր ժողովուրդին. պաշտեցէք զԱստուած, իրմէ դատ ուրիշ Աստուած չկայ, ձեր հաւրած աստուածները երեւակայական են:

53. Ո՛վ իմ ժողովուրդս, ես ձեզմէ դրամ չեմ պահանջեր, իմ վարձքս Աստուած պիտի տայ. աչքերնիդ չպիտի բանաք դուք:

54. Ո՛վ իմ ժողովուրդս, Աստուծոյ գլխութիւնը հայցեցէք, աղաչեցէ՛ք իրեն ու անիկա անձրեւ պիտի բերել տայ ձեր դաշտերուն վրայ ( <sup>1</sup> ):

55. Անիկա պիտի ամեցնէ ձեր ոյժը. կուսպաշտութեան ոճիրը մի՛ գործէք կրկին:

56. Անոնք պատասխանեցին. ո՛վ Յովտ, քու առաքելութեանդ մասին ո՛ եւ է անպացոյց չտուիր մեզի. միմիայն խօսքերուդ վրայ հիմնուած չենք կրնար ձգել մեր չաստուածները. քեզի չպիտի հաւատանք ընաւ:

57. Մեր աստուածներէն մին իր վրէժինդիր հար-

(1) Ատէականները երաշտութենէ կը տառապէին:

ուածը իջեցուց քու վրադ. զԱստուած վկայ կը կոչեմ, ըսաւ Յովտ, և դուք ալ վկայ էք որ ես անպարտ եմ ձեր կռապաշտութենէն:

58. Ձիս չըջապատեցէք ձեր որոգայթներով եւ մի սպասէք որ անոնցմէ սոսկամ:

59. Որովհետեւ իմ յենակէսս Աստուծոյ բազուկն է, այն Աստուծոյն որ թէ իմ և թէ ձեր տէրն է: Բոլոր էակները (իրենց մազին ծայրերէն) Աստուած բռնած է. անիկա փրկութեան ճամբան կ'ուսուցանէ:

60. Երբ դուք անհաւատութեան մէջ յամառիք մնալ, ես իմ պաշտօնս կատարած կը համարեմ: Աստուած ձեր տեղը ուրիշ ժողովուրդ մը պիտի դնէ ու դուք չպիտի կրնաք ու ե է չարիք հասցնել Աստուծոյ: Ամբողջ աշխարհը Աստուծոյ կը պատկանի:

61. Երբ մեր վճիռը գործադրուելու վրայ էր, Յովտ և հաւատացեալները, մեր պաշտպանութեան շուքին տակ մտան և ազատեցան սոսկալի պատիժէ մը:

62. Ատէականները մերժած էին հաւատալ Աստուծոյ ճշմարտութեան, անոնք մեր առաքեալին դէմ անհրահաղանդեցան և հետեւեցան կուրորէն անհաւատ մեծամեծներու կամքին:

63. Աստուծոյ անէծքը զանոնք հալածեց այս աշխարհի և հանդերձեալին մէջ. անոնք միթէ անհաւատ չէին եղած, և Աստուծոյ ճամբէն չէին հեռացած միթէ:

64. Թէ մուտէականներուն զրկեցինք իրենց եղբայրը, Սալէն, որ ըսաւ. ո՞վ իմ ժողովուրդս, պաշտեցէք զԱստուած, անկէ զատ ուրիշ Աստուած չկայ. անիկա ձեզի հողէն ստեղծեց և աշխարհի վրայ բնակարան մը տուաւ ձեզի. իր ներողամտութիւնը հայցեցէք. իրեն վերադարձէք. անիկա ձեզի մօտ է և կը լսէ զձեզ:

Ի  
2)



Չ Ե Կ Ո Յ Ց

Քուրանի Հայերէն քարգմանութիւնը պիտի  
բաղկանայ ընդ ամենայն 50 պրակներէ (800 էջ)  
կամ 160 էջնոց 5 հատրներէ :

Ամբողջ գործին համար կընդունինք

ԿԱՆԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                             |          |
|-----------------------------|----------|
| Պոլիս և գաւառները . . . . . | 15 շրշ . |
| Եւրոպա . . . . .            | 4 ֆրանք  |
| Ամերիկա . . . . .           | 1 տոլար  |
| Ռուսաստան . . . . .         | 2 բուպլի |

ԱՄԷՆ ՄԷԿ ՀԱՏՈՐ ԿԸ ԾԱԽՈՒԻ

4 դրե.ի, կամ մէկ ժրանք, կամ 25 սէնթ

Կը գանուի բոլոր գրախաճառներուն մօտ .

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

Յ. Ասատուրեան և Որդիք Տպարանը

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառագի, թիւ 52

*Imprimerie A. Assadourian et Fils.*

52, Avenue Bab Ali

CONSTANTINOPLE.

---

ՄԵՆԾԱՔԱՆՁԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ԶԵՂՉ